

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (18)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՓԻԼՈԼՈԳԻԱ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOLOGY»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ասատրյան Գ. Ս., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Գաբրիելյան Յու. Ս., Գասպարյան Ս. Բ.,
Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Դիրբարյան Ն. Հ., Հովակիմյան Ա. Է.
(*պատասխ. քարտուղար*), Հովսեփյան Լ. Ս. (*պատասխ. խմբագիր*), Պետրոսյան Դ. Վ.,
Սաֆարյան Վ. Հ., Մինոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Аветисян Ю. С.**, **Асатрян Г. С.**,
Брутян Л. Г., **Габриелян Ю. М.**, **Гаспарян С. Х.**, **Гончар Н. А.** (*зам. главного редактора*),
Дилбарян Н. А., **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Овсепян Л. С.**
(*ответ. редактор*), **Петросян Д. В.**, **Сафарян В. А.**, **Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Asatryan G. S., **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Avetisyan Y. S.**, **Brutyanyan L. G.**,
Dilbaryan N. H., **Gabrielyan Y. M.**, **Gasparyan S. Q.**, **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*),
Hovakimyan A. E. (*Executive Secretary*), **Hovsepyan L. S.** (*Managing Editor*),
Petrosyan D. V., **Safaryan V. H.**, **Simonyan A. H.**

Համարում գետեղված են ակադեմիկոս
Գևորգ Բեգլարի Ջահուկյանի
ծննդյան 100-ամյակի առթիվ ԵՊՀ հայ
բանասիրության ֆակուլտետում կայացած
գիտաժողովի զեկուցումներից

Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գ. Բ. Ջահուկյանը լեզվաբանական լայն հետաքրքրություններ ունեցող գիտնական էր: Ըստ էության, նրա գիտական ընդգրկման դաշտից դուրս չի մնացել լեզվաբանական որևէ ուղղություն կամ կարևոր հիմնահարց: Նա համակողմանիորեն քննել և նոր լուծումներ է առաջարկել ոչ միայն ավանդական լեզվաբանության բազմաթիվ հիմնախնդիրների, այլև արձագանքել է իր ժամանակի նորարական լեզվաբանական գաղափարներին, հայերենագիտության հիմնահարցերը դիտարկել նոր մոտեցումների լույսի ներքո: Լեզվաբանական լայն ընդգրկումով հանդերձ, Գ. Ջահուկյանի գիտական որոնումներն ունեցել են երկու հիմնական ուղղություն՝ 1) պատմահամեմատական լեզվաբանությունը և 2) ընդհանուր լեզվաբանությունը: Այս երկու ուղղությունների զարգացման համար մեկնարկային ավելի քան նպաստավոր հիմք էր մեծանուն գիտնականի «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը¹, որում գիտական բարձր չափանիշով քննության նյութ է դարձել ողջ լեզվաբանական միտքը, հատկապես՝ պատմահամեմատական և ընդհանուր լեզվաբանությունը՝ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի կեսերը:

Իսկ լեզվի տեսության ոլորտում ակադ. Գ. Ջահուկյանի հայացքների ամփոփումն է «Լեզվի համընդհանուր տեսություն»² արժեքավոր

¹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. I, Եր., 1960, հ. II, Եր., 1962:

² Տե՛ս **Джаукян Г. Б.** Универсальная теория языка (пролегомены к субстанциональной лингвистике). М., 1999: Տեսական լեզվաբանության խնդիրները Գ. Ջահուկյանի միտքը զբաղեցրել են դեռևս երիտասարդ տարիքից: Այդ հարցերի վերաբերյալ իր առաջին պատկերացումները տեղ են գտել ժամանակակից հայերենի քննությանը նվիրված աշխատություններում (հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, **նույնի** ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, **նույնի** ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, **նույնի** Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003), ինչպես նաև հեղինակի «Общее и армянское языкознание» (Եր., 1978) գրքում և մի շարք հոդվածներում (հմմտ. «Ընդհանուր և հայ ինչույթաբանության մի քանի հարցեր», «Խոսքի մասերի կադասարային դասակարգումը», «Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և նախադասության անդամների ուսմունքը», որոնք ամփոփվել են հեղինակի «Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը» (Բեյրութ, 2001) ժողովածուում:

աշխատությունը, որն էլ հիմք կընդունենք սույն քննության ընթացքում:

Որպես լեզվաբանական հայեցակարգ՝ «Համընդհանուր լեզվաբանական տեսությունը» (այսուհետև՝ ՀԼՏ) առաջնորդվում է հետևյալ հիմնական սկզբունքներով.

Ա. ՀԼՏ-ն ելնում է այն հաստատումից, որ *լեզուն սուբստանց է, այլ ոչ թե ձև*: Հետևաբար այն ուսումնասիրող լեզվաբանական գիտակարգը պիտի լինի *սուբստանցիոնալիստական*: Այս դրույթով հեղինակը հակադրվում է կառուցվածքային լեզվաբանության և առաջին հերթին լեզվաբանական այդ ուղղության նախահայր համարվող Ֆերդինանդ դը Սոսյուրի հայտնի կանխադրույթին, որը պնդում է հակառակը՝ «...լեզուն ձև է և ոչ թե սուբստանց»³: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հակադրելով ձևը և սուբստանցը՝ «Սոսյուրը ելել է նեղ լեզվաբանական խնդրից» և «նկատի է ունեցել լեզվական ձևը և լեզվական սուբստանցը»⁴, այնինչ՝ պետք էր ելնել ձևի և սուբստանցի հարաբերակցությունից լայն առումով, որովհետև լեզուն նյութական (մատերիական), այսինքն՝ սուբստանցիոնալ աշխարհի մի մասն է, գործառում է այդ աշխարհում և իբրև հաղորդակցման միջոց հասարակության անդամների միջև՝ արտացոլում է նյութական աշխարհն իր բոլոր կողմերով: «Արդեն միայն այն, որ միավորների հակադրությունը ինչպես արտահայտության պլանում, այնպես էլ բովանդակության պլանում հնարավոր է միայն նյութական (սուբստանցիոնալ) հիմքի վրա, խոսում է այն մասին, որ լեզվի բնույթը չի կարելի հասկանալ՝ հաշվի չառնելով նյութական աշխարհի իրերի հարաբերությունները»⁵: Այստեղից, ըստ Գ. Ջահուկյանի, հետևում է. որ «Լեզվի բուն էությունը կարելի է հասկանալ՝ միայն դուրս գալով նրա սահմաններից»⁶: Լեզուն նախ և առաջ սուբստանց է, որովհետև առանց սուբստանցի (մատերիայի) չի կարող լինել ձև: Ինքնին ձև գոյություն չունի: Այն ինչ-որ բանի ձևն է, իսկ այդ «ինչ-որ բանն» էլ հենց սուբստանցն է:

Ձևի և սուբստանցի այսպիսի ըմբռնումից հետևում է նաև հակադրությունը սոսյուրյան մյուս հայտնի կանխադրույթին, ըստ որի՝ «...լեզվաբանության միակ և իսկական առարկան լեզուն է՝ դիտարկված ինքն իր մեջ և իր համար»⁷, որ նույնն է, թե *լեզուն փակ համակարգ է*: Ըստ սուբստանցիոնալիստական լեզվաբանության՝ լեզուն չի կարող փակ համակարգ լինել, որովհետև այդ դեպքում անհասկանալի կլինեն լեզվական շատ երևույթներ, որոնց բացատրությունները լեզվից դուրս են, օր.՝ փոխաբերությունները: Հավելենք՝ դարձվածքները: ՀԼՏ-ն միանգամայն արդարացիորեն լեզուն դիտում է *բաց համակարգ*: Փակ համակարգ լի-

³ Фердинанд де Соссюр, Курс общей лингвистики // Труды по языкознанию, М., 1977, с. 154).

⁴ Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 5.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 6:

⁷ Фердинанд де Соссюр, նշվ. աշխ., էջ 269:

նելու դեպքում լեզուն կլիներ մեկընդմիջ տրված, անփոփոխ մի բան (այդպիսին կարող է լինել միայն մեռած լեզուն), այնինչ՝ լեզվի հիմնական բնութագրերից է նրա փոփոխականությունը: Այդ հատկության շնորհիվ է լեզուն արձագանքում հասարակական կյանքի տեղաշարժերին և հարստանում նոր իմաստներով, վերջինները արտացոլող ձևերով:

Բ. Գ. Ջահուկյանը վերանայում է նաև *լեզվի (langue)* և *խոսքի (parole)* սոսյուրյան ըմբռնումը: Հայտնի է, որ «Ընդհանուր լեզվաբանության դասընթացում» (այսուհետև «Դասընթաց») լեզուն հակադրվում է խոսքին՝ որպես հասարակական երևույթը անհատականին: Մյուս կողմից՝ Սոսյուրը, լեզուն և խոսքը առանձին-առանձին համարելով համասեռ երևույթներ, այդ երկուսի միասնությունը, որին տալիս է ֆրանսերեն *langage (լեզվախոսություն, խոսքային գործունեություն)* անվանումը, համարում է տարասեռ երևույթ, որովհետև նրան բնորոշ են ինչպես հասարակական, այնպես էլ անհատական պլանները⁸: Ըստ Գ. Ջահուկյանի՝ լեզուն նույնպես տարասեռ երևույթ է. այն «որպես վիճակ կարող է լինել ինչպես հասարակական, այնպես էլ անհատական, որի երկու դրսևորումների միջև գոյություն ունի փոխադարձության հարաբերություն (\leftrightarrow)»⁹: Սոսյուրյան այդ բացթողումը ՀԼԿ-ում լուծվում է «լեզու-խոսք» հակադրությունը փոխարինելով «լեզու-հաղորդակցում» («язык-коммуникация») հակադրությամբ: Յուրաքանչյուր անհատի գիտակցության մեջ կա հասարակական լեզվահամակարգի մանրակաղապարը, առանց որի հնարավոր չէ ոչ միայն փոխըմբռնումը միևնույն հանրության լեզվակիրների միջև, այլև *հասարակական լեզվի վերածումը անհատական խոսքի*: Լեզվի անհատական մանրահամակարգը կամ պարզապես անհատական լեզուն այն անհրաժեշտ միջանկյալ օղակն է, որի միջոցով, մի կողմից, իրացվում է հասարակական լեզվի և անհատական խոսքի կապը, մյուս կողմից, «խոսքը՝ որպես անհատական երևույթ, հակադրվում է կոլեկտիվի լեզվին»¹⁰:

⁸ Տե՛ս **Фердинанд де Соссюр**, նշված հրապարակումը, էջ 46-53:

⁹ **Джаукян Г. Б.** Универсальная теория языка, с. 15.

¹⁰ Նույն տեղում, էջ 13-14: «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» գրքում Գ. Ջահուկյանը այդ հակադրությունը տեսնում է ոչ թե խոսքի և լեզվի միջև՝ առաջին ու երկրորդ ըմբռնումներով, այսինքն՝ *լեզու-անփոփոխակի* կամ *էթնիկական կոլեկտիվի լեզվի* միջև, այլ *խոսքի և անհատական լեզվի (կամ անհատական լեզվահամակարգի)* միջև, որովհետև խոսքը դիտում է որպես անհատական լեզվահամակարգի իրացումը (տե՛ս **Джаукян Г. Б.** *Общее и армянское языкознание*, էջ 17): Իբրև տեսական կառուցում՝ ընդունելով «լեզու – խոսք» հարաբերակցության ջահուկյանական հայեցակարգը, որն ավելի հետևողական է, քան Սոսյուրի հայեցակարգը, այնուամենայնիվ անհատական լեզվի հասկացությանը պիտի վերաբերվել որոշակի վերապահումով՝ նկատի ունենալով, որ անհատական լեզուն նույնպես պայմանական ըմբռնում է. այն ոչ այլ ինչ է, քան որևէ էթնիկական լեզվի անհատական դրսևորումը: Լեզվի և խոսքի հարաբերակցության ջահուկյանական հայեցակարգին մոտ է ուրուզվայցի բանասեր և լեզվաբան Է. Կոստերիուի պատկերացումը (տե՛ս **Э. Косериу**, *Синхрония, диахрония и история* // «Новое в лингвистике». Выпуск III. М., էջ 156-158): Լեզվի և խոսքի հարաբերակցության առումով է. Կոստերիուի հայեցակարգային կարևոր դրույթներից է նաև այն, որ լեզուն նա ընկալում է ոչ թե իբրև «պատրաստի գործ» (*έργον*), ինչպիսին համարում է Սոսյուրը, այլ իբրև գործունեություն (*ένέργεια*)՝ ըստ հումբոլդտյան պատկերացման (տե՛ս նույն տեղը):

Լեզվի և խոսքի այդպիսի ըմբռնումը ՀԼՏ-ի մեջ ձեռք է բերում հայեցակարգային նշանակություն, որովհետև այն հիմք է տալիս վերանայելու լեզվաբանության կառուցվածքի մասին եղած պատկերացումները և առաջարկելու միանգամայն նոր կադապար: Գ. Ջահուկյանը, նախ, լեզվաբանության ուսումնասիրության ոլորտից դուրս է մղում խոսքի քննությունը, որովհետև նրա կարծիքով՝ «...խոսքը, որպես լեզվի իրացում, լեզվաբանի համար հետաքրքրություն է ներկայացնում ոչ թե որպես նպատակ, այլ որպես միջոց, իսկ հատկապես՝ որպես լեզվի բացահայտման միջոց, այն ընդհանուրի ուսումնասիրության միջոց, ինչը իրացվում է խոսքում»¹¹: Հետևաբար լեզվաբանության ուսումնասիրության առարկան է միայն լեզուն: Դրանից հետևում է, որ լեզվաբանության կառուցվածքը պիտի ծառայի հենց լեզվի համակարգային և կառուցվածքային բնութագրերի համակողմանի բացահայտմանը:

Վերոհիշյալ մոտեցումները հիմք են դառնում առաջարկելու լեզվաբանության կառուցվածքի նոր կադապար: Ըստ այդմ՝ Գ. Ջահուկյանը տարբերակում է լեզվաբանության երկու տեսակ՝ *անփոփոխակային* (инвариантный) և *փոփոխակային* (вариативный): Մյուս կողմից՝ նկատի ունենալով «լեզու» հասկացության երեք հիմնական կիրառությունները, այն է՝ 1) որպես համամարդկային լեզվական կարողություն (ընդհանուրը), 2) որպես որևէ էթնիկական հանրության հաղորդակցման միջոց (առանձինը), 3) որպես անհատական լեզվաունակություն (անհատականը), նա, «ըստ ընդհանրացման աստիճանի», տարբերակում է *համալեզվաբանություն* (панлингвистика), *առանձնալեզվաբանություն* (монолингвистика) և *անհատալեզվաբանություն* (идиолингвистика) գիտակարգերը: Այդ գիտակարգերից յուրաքանչյուրի նկատմամբ ըստ նպատակի և մոտեցման բնույթի կիրառելով *անփոփոխակային* և *փոփոխակային* տարատեսակները՝ առանձնացնում է լեզվաբանական վեց գիտակարգ.

- 1) *անփոփոխակային համալեզվաբանություն* (инвариантная панлингвистика),
- 2) *փոփոխակային համալեզվաբանություն* (вариативная панлингвистика),
- 3) *անփոփոխակային առանձնալեզվաբանություն* (инвариантная монолингвистика),
- 4) *փոփոխակային առանձնալեզվաբանություն* (вариативная монолингвистика),
- 5) *անփոփոխակային անհատալեզվաբանություն* (инвариантная идиолингвистика),

¹¹ Джаукян Г. Б. Универсальная теория языка, էջ 16: Հետևաբար նա մերժում է լեզվի լեզվաբանության (*linguistique de la langue*) և խոսքի լեզվաբանության (*linguistique de la parole*) տարբերակման պահանջը, որը առաջադրված է «Դասընթացում», որովհետև խոսքի լեզվաբանությունը, «ըստ ՀԼՏ-ի, վերագրվում է փոփոխական, այսինքն՝ փոփոխակային լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտը» (նույն տեղում, էջ 242):

6) *փոփոխակային անհատալեզվաբանություն* (вариативная идиоллингвистика):

Նշվածներից առաջինը քննության հայեցակերպով համապատասխանում է *ընդհանուր լեզվաբանությանը* ավանդական ըմբռնումով, իսկ մյուսները՝ անփոփոխակային թե փոփոխակային, ունեն նեղ ընդգրկում. վերաբերում են որևէ առանձին լեզվի կամ անհատական լեզվի քննությանը այս կամ այն հայեցակերպով:

Լեզվաբանության վերոհիշյալ գիտակարգերից խնդրահարույց կարող է լինել *անհատալեզվաբանությունը* (идиоллингвистика), մասնավորապես՝ նրա *փոփոխակային* տեսակը: Եթե *անփոփոխակայինի* քննության առարկա է դառնում «առանձին հեղինակների լեզուն»¹², վերջին հաշվով՝ տեքստի լեզվաբանության դրսևորումներից մեկը, ապա փոփոխակայինի քննության նյութը խոսքային ոլորտն է (հմմտ. «...ուսումնասիրում է **խոսքի ակտի** (ընդգծ. մերն է՝ Վ. Պ.) կազմավորման ժամանակ գործող բնախոսական և հոգեկան մեխանիզմները»¹³): Եվ սա այն դեպքում, երբ հեղինակը մերժում է խոսքի լեզվաբանության գաղափարը (հմմտ. «...խոսքը լեզվաբանին հետաքրքրում է ոչ թե ինքնին..., այլ որպես լեզվի դրսևորում»¹⁴ կամ՝ «Խոսքը ինքնին՝ որպես անհատական ակտ, չի հետաքրքրում լեզվաբանին»¹⁵):

Գ. Լեզվաբանական յուրաքանչյուր հայեցակարգ ենթադրում է հետազոտության սեփական մեթոդ, իսկ հայեցակարգի հետևողական իրացումն այդ մեթոդի կիրառումով հանգեցնում է համապատասխան կառուցվածքի ձևավորման: Ասվածի վկայություններն են հատկապես 20-րդ դարի ընթացքում և մասնավորապես կառուցվածքային լեզվաբանության դպրոցների կողմից մշակված լեզվաբանական կառուցվածքները (հմմտ. *գործառական կառուցվածք, հակադրական կառուցվածք, բաշխական կառուցվածք, սերող կառուցվածք* և այլն)¹⁶:

Մեթոդը, որի կիրառումով Գ. Ջահուկյանը իրեն բնորոշ հետևողականությամբ իրացնում է ՀԼՏ-ի հայեցակարգը, և որի արդյունքում ձևավորվում է ՀԼՏ-ի կառուցվածքը, *համընդհանուր լեզվաբանական կադաստրն* է (ՀԼԿ): Այդ կառուցվածքը կարելի է անվանել *կադաստրային կառուցվածք* (ԿԿ)¹⁷: Հետևաբար սկզբունքային նշանակություն

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 17:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 13:

¹⁵ Նույն տեղում, էջ 242:

¹⁶ Այդ մասին տե՛ս **Степанов Ю. С.** Методы и принципы современной лингвистики. М., 1975, էջ 196-242, **նույնի** Основы общего языкознания. М., 1975, էջ 230-253:

¹⁷ Գ. Ջահուկյանը խնդրին այս տեսանկյունից չի անդրադառնում թերևս երկու պատճառով. ա) ՀԼՏ-ի կարևոր խնդիրներից է *լեզվաբանության կառուցվածքի*, բայց ոչ *լեզվաբանական կառուցվածք(ներ)ի* սահմանումը. 2) լեզվաբանական կառուցվածքին առնչվող հարցադրումը կարող է հակասական տպավորություններ առաջացնել ՀԼՏ-ի բուն էության մասին, այն է՝ նրա սուբստանցիոնալիստական բնույթի մասին: Մեր կարծիքով, սակայն, այդպիսի պատկերացում կարող է առաջանալ միայն ՀԼՏ-ի մակերեսային դիտարկման դեպքում:

ունի, թե ինչ է ՀԼԿ-ն՝ որպես լեզվաբանական հետազոտության մեթոդ:

ՀԼԿ-ն խարսխված է հինգ հիմնական սկզբունքների վրա՝ նյութականության, ընդհանրականության, ամբողջականության, միասնականության, խնայողականության: Մուբստանցիոնալ լեզվաբանության համար, ըստ հեղինակի, առաջնային կարևորություն ունի հատկապես նյութականության սկզբունքը, որ բնական է: Այս սկզբունքը ենթադրում է իրականությունից գնալ դեպի լեզու և ոչ թե հակառակը, որովհետև «...լեզվում չկա ոչինչ, որը չբացատրվեր գոյություն ունեցող իրականությամբ. լեզուն ամբողջությամբ կախված է նրանից, այն դեպքում, երբ իրականությունը կարող է և արտահայտված չլինել լեզվում»¹⁸:

Մուբստանցիոնալության տեսանկյունից «սկզբունքային տարբերություն չկա արտահայտության պլանի և բովանդակության պլանի բաղադրիչները նկարագրելիս»¹⁹: Ընդհանրականության սկզբունքի համաձայն «ՀԼԿ-ն պիտի կիրառելի լինի բոլոր լեզուների նկատմամբ... Այն կառուցելիս պիտի նկատի ունենալ մարդկային լեզուն ընդհանրապես որպես տարբեր կոլեկտիվների լեզուների որոշակի ընդհանրացում, այսինքն՝ որպես լեզվի որոշակի իդեալական վիճակ»²⁰: Ըստ հեղինակի՝ լեզվաբանական գիտակարգերից «իսկական ընդհանրականության հասել է միայն ընդհանուր հնչյունաբանությունը»²¹: Ամբողջականության սկզբունքից հետևում է, որ «ՀԼԿ-ն պիտի կիրառելի լինի լեզվի բոլոր կողմերի նկատմամբ, հնարավորություն տա նկարագրելու ոչ միայն բովանդակության պլանի և արտահայտության պլանի միավորները առանձնաբար, այլև տարբեր լեզուներում նրանց տարբեր համակցությունների միջոցով կազմավորվող միավորները»²²: Միասնականության սկզբունքը «... Լեզվական կառուցվածքի բոլոր կողմերի վերլուծության և համադրության դեպքում պահանջում է անցկացնել միասնական ընթացակարգեր, կիրառել միևնույն մոտեցումը»²³: Ըստ խնայողության սկզբունքի նվազագույն միջոցներով պիտի նկարագրել առավելագույն օբյեկտներ: Այս սկզբունքի կիրարկմամբ աղյուսակներ կազմելիս «դատարկ վանդակներ չպիտի լինեն»²⁴: Հեղինակը նկատում է, սակայն, որ ասվածը հնարավոր է միայն իդեալական լեզվավիճակ նկարագրելիս, երբ լեզուն նկատի է առնվում որպես համամարդկային լեզվական տիպ, որպես որոշակի վերացարկում, իսկ « առանձին լեզուների նկարագրության դեպքում հնարավոր չէ հասնել այդպիսի կատարելության»²⁵: Այս դեպքում Գ. Ջահուկյանը ելքը տեսնում է երկու

¹⁸ Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 24.

¹⁹ Նույն տեղում, էջ 26:

²⁰ Նույն տեղում, էջ 25:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 27:

²³ Նույն տեղում, էջ 28:

²⁴ Նույն տեղում, էջ 30:

²⁵ Նույն տեղում, էջ 30-31:

հնարավոր ուղիներից մեկի ընտրության մեջ. «...կա՛մ հետևողականորեն ցույց տալ, թե առանձին լեզուներում ինչպես են իրացվում ՀԼԿ-ի կարգերն ու տերմերը, կա՛մ էլ առանձնացնել միայն այն բնութագրերը, որոնք հնարավորություն կտան առավել խնայողաբար ընդգրկել (բնութագրել) առանձին լեզվի համակարգը՝ նրան բնորոշ կոնֆիգուրացիաների բացահայտումով»²⁶:

Դ. Ըստ Գ. Ջահուկյանի՝ լեզվի սուբստանցիոնալ (նյութական) բնույթից հետևում է, որ լեզվական կառուցվածքի բաղադրիչներ կարող են լինել միայն երկկողմանի միավորները: Հետևաբար լեզվական կառուցվածքում կարող են առանձնացվել միայն այնպիսի մակարդակներ, որոնց միավորներն օժտված են ինչպես բովանդակության, այնպես էլ արտահայտության պլանով: Այստեղից հետևում է, որ հնչույթը (phoneme), որը սովորաբար համարվում է լեզվական հիմնական միավորներից մեկը, և որին հատուկ կարևորություն է տրվում հատկապես կառուցվածքային լեզվաբանության մեջ²⁷, սուբստանցիոնալ լեզվաբանության տեսանկյունից չի կարող ինքնուրույն մակարդակ ձևավորել, որովհետև ունի միայն արտահայտության պլան: Ավելին, ՀԼՏ-ն չի տարբերակում նաև ձևույթային մակարդակ, որովհետև նրա հեղինակի կարծիքով՝ այդպիսի մակարդակի տարբերակումը «խախտում է մոտեցման միասնականությունը՝ հանգեցնելով միևնույն միջոցների կրկնակի քննության. ձևույթային մակարդակում և այն միավորների մակարդակներում, որոնց նրանք կցվում են»²⁸: Ինչ խոսք, որ հիշյալ հարցերում նույնպես հեղինակը հավատարիմ է մնում իր որդեգրած սկզբունքներին: Այդ երկու միավորների հարցը Գ. Ջահուկյանը լուծում է յուրովի. եթե ձևույթի (morpheme) դրսևորումները (արմատական և մասնիկային) բաժանում է *բառային* մակարդակի երկու ենթամակարդակների վրա՝ *արմատական* և *բառակազմական*, ապա հնչույթների դեպքում այդպիսի հստակություն չկա: Ըստ ամենայնի՝ հնչույթները դիտվում են արմատների, ավելի ճիշտ՝ բառերի գծային բաղադրիչներ, որոնք գծայնորեն այլևս անբաժանելի են²⁹: Այսինքն՝ դարձյալ դիտարկ-

²⁶ Նույն տեղում, էջ 31:

²⁷ Ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ հնչույթը համարվում է լեզվական երկու հիմնական միավորներից մեկը՝ ձևույթի հետ միասին (հմտ. **Блумфильд Л.** Язык. М., 1968, **Глисон Г.** Введение в дескриптивную лингвистику. М., 1959, և այլն):

²⁸ **Г. Б. Джаукян**, Универсальная теория языка, էջ 82:

²⁹ Մերժելով Ն. Ս. Տրուբեցկոյի կողմից հնչույթին տրված բնութագիրը՝ որպես «հնչույթաբանորեն էական [իմա տարբերակիչ- Վ. Պ.] հատկանիշների ավբողջություն» կամ «փունջ» (տե՛ս **Трубецкой Н. С.** Основы фонологии. М., 2000, էջ 43)՝ Գ. Ջահուկյանը, ըստ էության, հնչույթը բնորոշում է իբրև «արտահայտության պլանի նվազագույն գծային միավոր» (**Джаукян Г. Б.** Универсальная теория языка, էջ 250), որը օժտված է հասարակական, այն է՝ հաղորդակցական գործառնությունով (հմտ. «Հնչույթները հանրայնորեն (տվյալ լեզվական կոլեկտիվում) տարբերակելի հնչունական կազմավորումներ են, որոնք բաղկացած են խոսքային օրգանների շարժումների որոշակի ձևերից և հանդես են գալիս որպես գծայնորեն անբաժանելի միավորներ» (նույն տեղում, էջ 100):

վում են բառային մակարդակում: Հաշվի առնելով այն իրողությունը, որ հնչույթի քննությանը բավականին տեղ է տրված «Լեզվի համընդհանուր տեսության» տարբեր բաժիններում, ավելին՝ ընդունվում է, որ «տվյալ լեզվի հնչույթների ամբողջությունը կազմում է նրա հնչույթային համակարգը»³⁰, ապա ակնհայտ է, որ ՀԼՏ-ն, առանձին հնչույթային մակարդակ չտարբերակելով հանդերձ, այնուամենայնիվ, ընդունում է հնչույթի՝ որպես ինքնուրույն լեզվական միավորի գոյությունը: Եվ դա բնական է. հնչույթի (իմա՝ լեզվական հնչյունի)՝ որպես ինքնակա միավորի գաղափարի մերժումը իրենց սուբստանցիոնալ (նյութական) հիմքերից կզրկեր նաև երկկողմանի միավորները՝ *բառը, շարույթը, նախադասությունը* և *տեքստը*, որոնք ՀԼՏ-ի մեջ ճանաչվում են իբրև ինքնուրույն մակարդակներ ձևավորող միավորներ: Որքան էլ անժխտելի է ՀԼՏ-ի հետևողականությունը, այնուամենայնիվ, հնչույթի՝ որպես լեզվական կառուցվածքի որոշակի բաղադրիչի կարգավիճակի հարցը նրանում լուծված չէ³¹:

Ի տարբերություն ավանդական լեզվաբանության, որը լեզվի կառուցվածքում առանցքային դեր է վերապահում *բառին*, ՀԼՏ-ի մեջ այդպիսի դեր վերապահվում է *շարույթին*, իսկ բառը դիտվում է լեզվական սովորական միավորներից մեկը: Ընդ որում, բառը չի կարող դիտարկվել անփոփոխակային (համընդհանրական) լեզվաբանության մեջ, որովհետև նրա բնութագրերը խիստ տարբեր են լեզվից լեզու: Այն փոփոխակային լեզվաբանության օբյեկտ է, «յուրաքանչյուր լեզվում կարող է ունենալ իր առանձնացման յուրահատկությունները, որոնց ուսումնասիրությունը տիպաբանական հիմնահարց է»³²:

Շարույթի գաղափարը համեմատաբար նոր է լեզվաբանության մեջ: Նրա առաջին բնորոշումները պատկանում են Ֆ. դը Սոսյուրին և Ի. Ա. Բոդուեն դը Կուրտենեին³³: Այնուհետև շարույթի հասկացությանը անդրադարձել են նաև Լ. Վ. Շչերբան, Վ. Վ. Վինոգրադովը³⁴, Ա. Ա. Ռեֆորմատսկին³⁵ և ուրիշներ: Բնականաբար, շարույթի սահմանումներից և ոչ մեկը ամբողջությամբ չի կրկնում մյուսին: Շարույթը նշված հեղինակներից միանգամայն տարբեր կերպ է սահմանել ակադ. Գ. Ջա-

³⁰ Джаукян Г. Б. Универсальная теория языка, էջ 101:

³¹ Գ. Բ. Ջաուկյանի լեզվամակարդակային տեսությանը տարիներ առաջ անդրադարձել ենք մեր «Լեզվական և խոսքային մակարդակներ» (տե՛ս ԲԵՆ, 2004, թիվ 3 (114), էջ 44-56, նաև՝ Վ. Ջ. Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 40-59) հոդվածում և այսօր էլ հիմնականում նույն կարծիքին ենք մնում, ընդ որում՝ ոչ միայն հնչույթային մակարդակի տարբերակման հարցում:

³² Джаукян Г. Б. Универсальная теория языка, էջ 277:

³³ Այդ մասին տե՛ս մեր «Շարույթաբանական ըմբռնման հարցեր» հոդվածը (ԲԵՆ, 2004, թիվ 2 (113)), էջ 77-83, նաև՝ Վ. Ջ. Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, էջ 10-20:

³⁴ Տե՛ս **Виноградов В. В.** Понятие синтагмы в синтаксисе русского языка // Избранные труды. Исследование по русской грамматике. М., 1975, էջ 88-154:

³⁵ Տե՛ս **Реформатский А. А.** Введение в языковедение. М., 1967, էջ 324-331:

հուկյանը. «Սուբստանցիոնալ լեզվաբանության ընդհանուր սկզբունքի համաձայն շարույթ է համարվում ձևավորված բառը (դասույթը/տարգա) կամ բառակապակցությունը, որը իրականացնում է նախադասության անդամի միասնական շարահյուսական գործառույթ»³⁶: Ասվածը չի նշանակում, թե նույնանում են շարույթը և նախադասության անդամը, որովհետև, ըստ ՀԼՏ-ի, «առաջինի առանձնացման հիմնական չափանիշը կառուցվածքային է», իսկ երկրորդինը՝ շարահյուսական³⁷: «Այդպիսով, շարույթը միջին դիրք է զբաղեցնում դասույթի և պարզ նախադասության միջև՝ բնութագրվելով դասույթ \subseteq շարույթ \subseteq պարզ նախադասություն հարաբերակցությամբ»³⁸, բայց և չի նույնանում բառակապակցության հետ³⁹:

Պիտի նկատել, որ շարույթի՝ որպես լեզվական միավորի ամենից համակողմանի բնութագիրը տվել է Գ. Ջահուկյանը «Լեզվի համընդհանուր տեսություն» գրքում: Սակայն այստեղ շարույթի բնութագրերի մեջ բացակայում է հնչերանգի գործոնը, մի բան, որն առկա էր հեղինակի մեկ այլ աշխատության մեջ⁴⁰: Առանց հնչերանգային գործոնի հաշվառման, միայն կառուցվածքային չափանիշը բավարար չէ, որ ձևային առումով (формально) հաճախ բառի (դասույթի) և բառակապակցության հետ համընկնող կառույցը նրանցից տարբեր լեզվական միավոր համարվի⁴¹:

Գ. Ջահուկյանի լեզվամակարդակային բաժանումը, ըստ էության, արտացոլում է *փոփոխակային լեզվաբանության* կառուցվածքը, իսկ այդ կառուցվածքում սկզբունքորեն վերանայված են ավանդական լեզվաբանության մոտեցումները ինչպես լեզվաբանության բաժինների, այնպես էլ այդ բաժինների կողմից ուսումնասիրվող միավորների առումով: Որպես առանձին բաժին՝ սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ բացակայում է հնչյունաբանությունը (հնչույթաբանությունը): Ըստ էության, *շարագիտության* (таксология) առաջին մակարդակին՝ *դասույթայինին* (тагматический) է հատկացված ձևաբանության ուսումնասիրության առարկան՝ *բառաձևը*: Այս մակարդակի *շարույթային*

³⁶ Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 155.

³⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Շարույթը որպես լեզվական միավոր // Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, էջ 126:

³⁸ Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 155.

³⁹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Շարույթը որպես լեզվական միավոր// Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, էջ 125:

⁴⁰ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 354:

⁴¹ Վերոհիշյալ հեղինակներից շարույթային բնութագրերի մեջ հնչերանգային գործոնը կարևորել է, մասնավորապես, Լ. Վ. Շչերբան: Հմմտ. «Այն հնչյունաբանական միությունը, որը արտահայտում է միասնական իմաստային ամբողջություն խոսքամտածական գործընթացում և կարող է կազմվել ինչպես մեկ **ռիթմային** (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.) խմբից, այնպես էլ նրանց ամբողջ շարքից, ես անվանում եմ շարույթ» (Щербан Л. В. Фонетика французского языка. М., 1955, с. 87):

(синтагматический) ենթամակարդակին է վերապահված բառակապակցության՝ որպես շարույթի (синтагма) դրսևորումներից մեկի քննությունը, իսկ նախադասությունը քննության նյութ է դառնում *նախադասագիտության* (протасеология) մեջ:

ՀԼՏ-ի կարևոր նորություններից մեկը *տեքստային* (текстовый) մակարդակի տարբերակումն է՝ երկու ենթամակարդակով՝ «հինույթային կամ պարբերային» (текстематический) և «լրահինույթային» (синтекстематический)⁴²: Տեքստայինի ուսումնասիրության առարկան (= միավորը) *տեքստն* է կամ *հենքը*: Լեզվաբանության բաժինը, որն զբաղվում է տեքստին առնչվող իրողությունների քննությամբ, *տեքստաբանությունն* է (текстология):

Զժխտելով տեքստաբանության կամ տեքստի լեզվաբանության՝ որպես լեզվաբանական գիտակարգի հնքնուրույն գոյության իրավունքը՝ մենք (ինչպես և Գ. Ջահուկյանը ՀԼՏ-ի մշակման վաղ փուլերում)⁴³ մնում ենք այն տեսակետին, որ տեքստույթը (текстема), ավելի ճիշտ՝ նրա երկու ենթամակարդակային դրսևորումները՝ *հինույթը* և *լրահինույթը*, կառուցվածքային առումով նախադասությունից տարբեր իրողություններ չեն. դրանք նախադասություն են կամ նախադասությունների կապակցություն: Տեքստույթը նախադասությունից տարբերող հատկանիշները (իմա՝ «ավելի մեծ դադար այլ տեքստույթից առաջ և ավելի մեծ հնչերանգային ավարտվածություն»⁴⁴) կառուցվածքային չեն: Հետևաբար *տեքստային մակարդակի* առանձնացումը չի կարող միանշանակ ընդունվել, այնպես, ինչպես որ միանշանակ չէ *հնչույթային մակարդակի* մերժումը միայն այն պատճառով, որ հնչույթը երկկողմանի միավոր չէ:

Ե. Բնական է, որ ընդհանուր լեզվաբանական տեսություններ ստեղծելու փորձեր եղել են նաև նախկինում: Այդպիսի առաջին փորձը 1660 թ. Կլոդ Լանսլոյի և Անտուան Առնոյի հեղինակած «Ընդհանուր և ռացիոնալիստական քերականությունն» է, որը առավելապես հայտնի է Պոր-Ռոյալի քերականություն անվանումով: Այդպիսի փորձերի մեծ մասը, այդ թվում՝ Սոպյուրի նշանավոր «Դասընթացը», ըստ Գ. Ջահուկյանի, իրականում չի կարող ընդհանուր լեզվաբանական համարվել, որովհետև նրանց հիմքում դրված չեն բոլոր լեզուներին կամ նրանց մեծ մասին բնորոշ սկզբունքներ, այլ դրանցում եզրակացությունները կառուցվում են մի քանի, գլխավորապես՝ հնդեվրոպական լեզուների տվյալների հիման վրա, որոնք վերագրվում են մյուսներին: Այնինչ, իրապես ընդհանուր լեզվաբանական տեսությունը պիտի կառուցվի լեզվա-

⁴² Եզրույթների հայերեն համարժեքները տրվում են ըստ՝ **Գ. Բ. Ջահուկյան**, Շարահյուսական ուսումնասիրություններ, էջ 12: Նշված գրքում եզրույթները ոչ թե թարգմանվել են, այլ ստեղծվել են օտար տարբերակների հայերեն համարժեքները:

⁴³ Տե՛ս **Джаукян Г. Б.** Универсальная теория языка, էջ 199-200:

⁴⁴ Նույն տեղում, էջ 201:

կան ընդհանրությունների (ունիվերսալիաների) հաշվառումով, որոնք կնե-
րառեն տարբեր լեզվական համակարգերի և տարբեր կառուցատիպի լե-
զուների տվյալներ: Եվ որ ամենից կարևորն է, պիտի ելակետ ունենա
նյութական աշխարհը, որի մեջ ձևավորվում և իր կյանքն է ապրում նաև
մարդկային լեզուն՝ որպես աշխարհում առկա կամ երբևէ գոյություն ու-
նեցած լեզուների անփոփոխակ: Հայտնի ուսմունքների մեջ սկզբունքո-
րեն ընդհանուր լեզվաբանական ուղղվածություն ունի գլոսեմատիկան,
մասնավորապես՝ նրա մանիֆեստը համարվող՝ Լ. Ելմսլևի «Լեզվի տե-
սության հիմնավորման շուրջը»⁴⁵ աշխատությունը, սակայն այն ևս ՀԼՏ-
ից տարբերվում է իր բուն ելակետով, որովհետև ելնում է սուսյուրյան «լե-
զուն ձև է, այլ ոչ թե սուբստանցիա» դրույթից: «Լ. Ելմսլևի բոլոր քննա-
դատները նշել են նրա ուսմունքի վերացականությունը և ցույց են տվել
նրա թերությունները: Սակայն Լ. Ելմսլևի փորձը ստեղծելու լեզվի ամ-
բողջական տեսություն, փաստորեն մնաց բացառիկ»⁴⁶, -նշում է Գ. Ջա-
հուկյանը: Այս առումով ավելի խոցելի է Ն. Չոմսկու սերող քերականու-
թյունը, որը նույնպես հավակնում էր լինելու ընդհանուր լեզվաբանա-
կան, բայց այն ոչ միայն չընդգրկեց լեզվի բոլոր կողմերը, այլև քննա-
դատվեց իր քննության ոլորտներում՝ շարահյուսության և հնչույթաբա-
նության մեջ, գրավոր խոսքին հակված լինելու համար:

Զ. Նախադասագիտության (ավանդական եզրույթաբանությամբ՝
շարահյուսության) բնագավառում կարևորագույն դրույթը *նախադա-
սության բայակենտրոնության* սկզբունքի որդեգրումն է: Հայ քերակա-
նագիտության մեջ այդ սկզբունքը ավանդաբար կապվում է Մ. Աբեղյա-
նի անվան հետ⁴⁷: Ըստ ՀԼԿ-ի՝ «ցանկացած ենթամակարդակի գլխավոր
կամ միջուկային անդամը պարտադիր է, այսինքն՝ պարտադրակա-
նությունը նրա առանձնացման հիմքն է»: Պարզ նախադասության հա-
մար այդպիսի միջուկային անդամ է ստորոգյալը՝ «հանգույցի կապակ-

⁴⁵ Այս աշխատությունը ռուսերեն թարգմանվել է «Прологомены к теории языка»
(«Լեզվի տեսության նախագիտելիք») վերտառությամբ (տե՛ս «Новое в лингвистике»,
вып. I, М., 1960):

⁴⁶ **Джаукян Г. Б.** Универсальная теория языка, էջ 5: Այդ մասին ուշագրավ է նաև
Էյնար Հաուգենի կարծիքը «Ուղղությունները ժամանակակից լեզվաբանության մեջ»
հոդվածում. «Թվարությունը, որին բախվում է ընթերցողը, Ելմսլևի տեսության
վերացականության և նրա բովանդակությունը բացատրող ցուցադրական նյութի
համեմատական աղբատությունն է» (**Յ. Хауген.** Направления в современном языкозна-
нии // «Новое в лингвистике». Выпуск I, М., 1960, էջ 248): Լ. Ելմսլևի նշված
աշխատությունը բարձր գնահատելով իբրև գիտական նվաճում, ըստ էության,
վերոհիշյալ վերապահությունը կրկնում է Ա. Մարտինեն. «Ելմսլևը, իր տեսության
ստեղծման վրա ծախսելով տասը տարի, անողոր է ընթերցողի նկատմամբ. նա այնքան
վաղուց է վարժվել լեզվաբանական հիմնահարցերի մասին մտածել իր սեփական
եզրույթներով և հատկապես իր իսկ կողմից ստեղծված հայեցակետով, որ բոլորովին
աչքաթող է անում, որ մարդու համար, որը իր գործակիցների և աշակերտների
համեմատաբար նեղ շրջանակի անդամ չէ, նրա մտքի ձևը և արտահայտման եղանակը
(манера) անսովոր են թվում և նույնիսկ տարօրինակ» (**А. Мартине.** О книге «Основы
лингвистической теории» Луи Ельмслева // «Новое в лингвистике». Вып. I, с. 462):

⁴⁷ Տե՛ս **Մանուկ Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 362:

ցությունը որևէ շարույթի հետ, այդ թվում նաև բայի դիմավոր ձևով՝ որպես այդպիսի կապակցության կրողի»⁴⁸: «Առմիջուկային (իմա՝ երկրորդական-Վ. Պ.) անդամներ են ենթական և նախադասության մյուս անդամները՝ արտահայտված գոյականական շարույթներով»⁴⁹: Ուշագրավ է, որ ՀԼԿ-ի վաղ շրջանի պատկերացումներով շարադրված «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում հիմնավորվում է նախադասության երկկենտրոնության սկզբունքը՝ ենթակայով և ստորոգյալով⁵⁰: Ավելին, նկատելի է ենթակայակենտրոն հակվածություն. հմմտ. «Ենթական նախադասության, որպես հաղորդման ակտի, կենտրոնն է: Թվարկել ու բնութագրել նախադասության բոլոր մնացած անդամները, որոնց մեջ անմիջաբար կամ ստորոգյալի միջոցով լրացվում է ենթակայի այս կամ այն կողմը, նշանակում է բացահայտել ենթակայի ողջ բովանդակությունը»⁵¹: Նոր մոտեցումը, ըստ ամենայնի, թելադրված է ՀԼԿ-ի ճշգրտված սկզբունքների հետևողական գործադրությամբ, ինչպես նշում է նաև հեղինակը:

«Լեզվի համընդհանուր տեսությունը» ոչ միայն Գ. Ջահուկյանի գիտական վաստակի կարևոր ձեռքբերումներից է, այլև ընդհանրապես տեսական լեզվաբանության ամենաինքնատիպ և արժեքավոր ուսումնասիրություններից մեկը: Անվանի գիտնականը հիմնովին ուսումնասիրել է համապատասխան գրականությունը՝ փորձելով հավասարակշռված մոտեցումներ զարգացնել դիտարկվող հիմնահարցերի նկատմամբ, խուսափել այն բոլոր միակողմանի, երբեմն ծայրահեղ մոտեցումներից, որոնց համար քննադատվել են նախորդ տեսությունները: Լինելով ընդհանուր լեզվաբանական խիստ ինքնատիպ ուսմունքներից մեկը, ՀԼՏ-ն միաժամանակ բնութագրվում է համակողմանիությամբ ու համապարփակությամբ և որպես այդպիսին՝ հարկ է, որ այն գիտական մտքի կողմից արժանանար առնվազն այնպիսի ուշադրության, որին իրենց ժամանակին արժանացել են Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» և Լ. Ելմսլի «Լեզվի տեսության հիմնավորման շուրջը» գրքերը: Թերևս կանխագգալով այսօրվա վիճակը՝ Գ. Ջահուկյանը պատշաճ ուշադրության բացակայության պատճառների թվում ոչ պատահականորեն նշում է այսպես կոչված «ավտորիտարությունը» («авторитарность»), «հատկապես հոգեբանական ավտորիտարությունը, երբ հեղինակավոր անձանցից, դպրոցներից, երկրներից սկիզբ առնող գաղափարները ընդունվում են ուռճացված ձևով, իսկ իրապես կարևորները մնում են ստվերում»⁵²:

⁴⁸ Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 174.

⁴⁹ Նույն տեղում, էջ 175:

⁵⁰ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 340 և 388:

⁵¹ Նույն տեղում, էջ 388:

⁵² Джаукян Г. Б. Универсальная теория языка, с. 221.

Բանալի բառեր – համընդհանուր լեզվաբանական տեսություն, համընդհանուր լեզվական կաղապար, լեզվաբանության կառուցվածք, սուբստանցիոնալ լեզվաբանություն, անփոփոխակալի և փոփոխակալի լեզվաբանություններ

ВАРДАН ПЕТРОСЯН – Концептуальные основы «Универсальной теории языка» Г. Джаукяна. – В отличие от структуралистов, которые понимали язык как форму или сеть чистых отношений (глоссематика) и вслед за соссюрским «Курсом» изучали его как замкнутую систему («в самом себе и для себя»), в своей «Универсальной теории языка» (М., 1999), обобщающей его лингвистические взгляды, академик Г. Джаукян предлагает субстанциональную концепцию. Согласно ей, если изучать язык изолированно, в отрыве от вещественного мира, многие языковые явления (например, метафоры) станут попросту непонятны. «Универсальная теория языка» не только по-новому трактует ряд известных положений теоретической лингвистики, но и выдвигает новые идеи, среди них «универсальная лингвистическая модель» – метод анализа языковых фактов, оригинальное восприятие синтагмы, классификация языковых уровней и т. д.

«Универсальная теория языка» не только значительное достижение замечательного лингвиста, но и весомый вклад в теоретическое языкознание.

Ключевые слова – универсальная теория языка, универсальная языковая модель, структура лингвистики, субстанциональная лингвистика, инвариантная и вариативная лингвистика

VARDAN PETROSYAN – The Conceptual Fundamentals of G. Jahukyan’s “Universal Theory of Language”. – Academician G. Jahukyan’s “Universal Theory of Language” (published in 1999, in Russian) is a valuable work that recapitulates the author’s general linguistic views. In contrast to structuralist theories, which consider the perception of language predominantly as a framework of form and pure relations (glossematics); and those which following Saussure’s ‘Course’ analyse the language as a self-contained whole, Jahukyan offers a substantialist conception of language. According to this conception, many linguistic expressions (e.g. metaphors) connected with the material world or human relationships would simply be incomprehensible if analysed in isolation, cut off from the material world.

The celebrated scientist G. Jahukyan, on the grounds of the “universal theory of language” (UTL) developed by him, not only interprets many known principles of theoretical linguistics anew but he also offers up a number of new ideas (such as “universal patterns of language” (UPL) as a method of analysis for linguistic realities; a new scheme of linguistic structure based on invariant and variative aspects; syntagm – defined as an absolutely new perception of a linguistic unit; focus on the role of syntagm among other linguistic units; distinction of linguistic levels through biplane units, etc.).

G. Jahukyan’s “Universal Theory of Language” not only ranks as one of the greatest achievements of the author, but it is also an outstanding contribution to the field of theoretical linguistics in general.

Key words – Universal linguistic theory, Universal language model, linguistic structures, substance linguistics, invariant and variative linguistics

Գ. ՋԱՀՈՒԿՑԱՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Նախապես նշենք, որ իր բազմակողմանի ու բազմաբնույթ գիտական աշխատություններով հանդերձ՝ ակադ. Ջահուկյանին միջազգային ճանաչում բերեցին հատկապես նրա հնդեվրոպաբանական ուսումնասիրությունները: Հարկ է նկատել, որ լեզվաբանության այս բնագավառը բավականաչափ բարդ է թե՛ ուսումնասիրության նյութի ընդգրկման, թե՛ համապատասխան մեթոդաբանության և թե՛ համակողմանի տեսական գիտելիքների ու տարբեր լեզուների իմացության անհրաժեշտության տեսակետից: Եվ պատահական չէ, որ այսօր համեմատաբան-լեզվաբանների թիվն աշխարհում մեծ չէ, և այն կարելի է դասել, այսպես կոչված, «առանձնահատուկ» մասնագիտությունների շարքին: Նկատել ենք նաև մի հետաքրքիր օրինաչափություն. համարյա բոլոր խոշոր լեզվաբաններն իրենց ուսումնասիրությունները սկսել են հենց այս ոլորտում: Այս առումով բացառություն չէր նաև ակադ. Ջահուկյանը, որն այս դժվարին բնագավառ մուտք գործեց արդեն նախորդ դարի 50-ական թվականներին՝ ականավոր լեզվաբաններ Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի և մյուսների կողքին: Այս ժամանակաշրջանը յուրահատուկ էր նաև նրանով, որ հնդեվրոպաբանության երկարամյա զարգացման ընթացքում կուտակվել էր հսկայածավալ տեսական և փաստական նյութ, իսկ համեմատաբան-լեզվաբանները զբաղված էին դրանց ամբողջացմամբ ու դասակարգմամբ: Թերևս այդ է պատճառը, որ ակադ. Է. Աղայանը, գնահատելով այդ ոլորտում Աճառյանի կատարած աշխատանքները, գտնում էր, որ այստեղ այլևս որևէ նոր բան անել հնարավոր չէ¹: Սակայն Գ. Ջահուկյանը, թեև ավանդական հնդեվրոպաբանության հետևորդ էր, ելնելով այդ բնագավառում առաջ քաշված նոր տեսություններից ու դրույթներից, փորձեց ավելի առաջ գնալ: Այդ բանին, անշուշտ, մեծապես նպաստեց տարբեր լեզուների նրա իմացությունը, որի շնորհիվ նա կարողացավ խորանալ հնդեվրոպաբանական նորագույն տեսությունների էության մեջ և իր սեփական ներդրումն ունենալ դրանցում: Ասենք նաև, որ Ջահուկյանը հնդեվրոպաբանական որևէ ընդհանուր նոր տեսություն առաջ չի քաշել թերևս այն պատճառով, որ նա այս բնագավառ մուտք է գործել հիմնականում հայերենի

¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 184:

պատմական հիմքերի պարզաբանման նպատակով, սակայն իր բազմակողմանի ուսումնասիրություններով լրացրել և ճշգրտել է դրանք՝ ներգրավելով նաև նոր և հիմնավոր փաստեր: Այդ ընթացքում ձևավորվում են նաև Ջահուկյանի տեսական դրույթները հնդեվրոպաբանական տարբեր խնդիրների վերաբերյալ, որոնք նրան միջազգային ճանաչում են բերում: Նրա շնորհիվ էր, որ հնդեվրոպաբանական նորագույն տեսություններում հատուկ նշանակություն տրվեց նաև հայոց լեզվի փաստերին, և շատ դեպքերում դրանցում այդ փաստերը դիտվում էին առաջնային²: Միաժամանակ, Ջահուկյանը հիշյալ տեսությունների նկատմամբ ցուցաբերում է որոշակի զգուշավորություն և միշտ կարծես միջին դիրք է գրավում երկու հակադիր տեսակետների միջև, որը պայմանավորված է հնդեվրոպաբանության յուրահատկությամբ, եթե նկատի ունենանք, որ այդ տեսություններն ունեն հիմնականում վարկածային բնույթ և յուրաքանչյուր նոր լեզվաբանական, հնագիտական կամ պատմագիտական հայտնագործություն շատ կարճ ժամանակամիջոցում փոխում է դրանց նկատմամբ վերաբերմունքը: Չնոռանանք նաև, որ հնդեվրոպաբանությունը գործ ունի լեզուների նախագրային ժամանակաշրջանի պատմության հետ, որ համապատասխան լեզվական փաստերի բացակայության պայմաններում հետազոտողի համար տարբեր տեսակետների ու ենթադրությունների դաշտ է բացում: Երկար տարիներ զբաղվելով Ջահուկյանի համեմատաբանական ու հնդեվրոպաբանական ուսումնասիրություններով՝ նկատել ենք, որ չկա հնդեվրոպաբանական որևէ տեսություն կամ դրույթ, որին անդրադարձած չլինի նա: Ընդ որում, նրա համապատասխան վերլուծություններն աչքի են ընկնում այնպիսի խորությամբ ու ճշգրտությամբ, որ եթե նա որևէ տեսակետի վերաբերյալ նույնիսկ միանշանակ կարծիք չի հայտնում, ապա ընթերցողն ինքը, ելնելով այդ վերլուծություններից, կարող է կոնկրետ եզրակացության հանգել: Այս առումով, մեր կարծիքով, հատկապես հիշատակման է արժանի 1967 թ. Ջահուկյանի հրատարակած «Очерки по истории дописьменного периода армянского языка» ուղենշային աշխատությունը, որտեղ նրա առաջարկած դրույթներն ու վարկածները հետագայում հաստատվեցին հնդեվրոպաբանական և տիպաբանական տարբեր հետազոտություններով, ու թեև այն պատկանում է Ջահուկյանի վաղ հետազոտությունների թվին, դեռ այսօր էլ արդիական է և իր նշանակությունը չի կորցրել: Փորձենք հնարավորինս համառոտ անդրադառնալ լեզվաբանի այն դրույթներին, որոնք սերտորեն առնչվում են հնդեվրոպաբանական նորագույն տեսություններին:

Նախ շատ կարևոր է, որ Ջահուկյանի կողմից հստակեցվեցին և

² Տե՛ս հատկապես **Гамкрелидзе Т., Иванов В.** Индоевропейский язык и индоевропейцы. В двух томах. Тбилиси, 1981-1984:

սահմանվեցին լեզուների նախագրային ժամանակաշրջանների ուսումնասիրության մեթոդների էությունը և գործադրման պայմանները: Ի տարբերություն ավանդական հնդեվրոպաբանության, որը կիրառում էր հիմնականում արտաքին վերականգնման մեթոդը (այսինքն՝ նախաձևերի վերականգնում ցեղակից լեզուների փաստերի հիման վրա), Ջահուկյանը կարևոր է համարում նաև ներքին վերականգնումը՝ կոնկրետ լեզվի առավել հնատիպ բարբառային փաստերի վրա, որոնք կարող են հանգել ընդհանուր նախալեզվային վիճակին: Այս կերպ Ջահուկյանը հիմնավորում է նաև հնդեվրոպական բարբառների առաջացման նոր տեսություններից մեկը, ըստ որի՝ ցանկացած առանձին լեզվի ձևավորումը մեկ լեզվաընտանիքի ներսում տեղի է ունենում մի քանի բարբառային տարածքների առաջացմամբ՝ միաժամանակ: Սա իր հերթին հանգեցնում է լեզուների և լեզվական ձևերի տարբերակայնության գաղափարին, որը կարևոր ներդրում էր համեմատաբանության բնագավառում, էթե նկատի ունենանք, որ բնական լեզուն երբեք մեկ տարբերակով հանդես չի գալիս: Լեզվական փաստերի ժամանակագրավորման համար Ջահուկյանը հաջողությամբ կիրառեց նաև ամերիկացի լեզվաբան Մ. Սվոդեշի լեզվաժամանակագրական մեթոդը՝ իր կողմից ներմուծելով հետադարձ հաշվարկի եղանակը: Այդպիսով նրա կողմից իրականացված՝ հայերենի նախագրային ժամանակաշրջանի շրջանաբաժանումը (որ համընկնում է հնդեվրոպական ընդհանրության քայքայման շրջանի հետ) հնդեվրոպաբանների կողմից լայն ճանաչում գտավ: Այս շրջանաբաժանումը կարևոր է ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպաբանության համար այն առումով, որ նրա կողմից սահմանված «վաղնջահայերեն» իր առանձնահատկություններով պետք է առավել մոտ լիներ համահնդեվրոպական վիճակին: Համապատասխան արդյունքները հնարավորություն ընձեռեցին լեզվաբաններին լայնորեն գործադրելու հայերենի փաստերը հնդեվրոպաբանական տարբեր տեսությունների հիմնավորման նպատակով, որ արեցին մասնավորապես Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, որոնք, ելնելով դեռ Հ. Պեդերսենի կողմից առաջ քաշված՝ այսպես կոչված «նոստրատիկ տեսությունից», հայերենի փաստերն օգտագործում էին այդ տեսության հիմնավորման նպատակով: Ջահուկյանը թեև փոքր-ինչ այլ կերպ էր պատկերացնում նոստրատիկ ընդհանրությունը, այդուհանդերձ իր մի շարք ստուգաբանական հետազոտություններով փորձեց լրացնել Վ. Իլիչ-Սվիտիչի նոստրատիկ բառարանը:

Արդի համեմատաբանությունը հիշյալ տեսության առաջադրմանը զուգահեռ սկսեց քննարկել նոստրատիկ ընդհանրության, ինչպես նաև հ. է. ընդհանրության տեղաբաշխման կամ նախահայրենիքի հարցը: Այդ առումով Ջահուկյանը դեռ Գամկրելիձեից և Իվանովից առաջ հայտնում է վերջինիս՝ Առաջավոր Ասիայում գտնվելու վարկածը, որն

այսօր ընդունում է գիտնականների մեծ մասը: Այստեղ ուրվագծվում է նաև նրա տեսակետը հայասերենի՝ որպես հայերենի հիմքի վերաբերյալ տեսակետը: Դասելով հայասերենը հ. ե. լեզվաընտանիքի խեթալուվական ճյուղին և բացահայտելով հնդեվրոպական – ուրարտական գուգահեռներ՝ մի շարք ուսումնասիրություններում լեզվաբանը պարզում է, որ հայերենի այն արմատները, որոնք մինչ այդ համարվում էին անհայտ ծագման, կա՛մ հնդեվրոպական են, կա՛մ էլ ունեն հ. ե. շերտից տարբերվող այլ օրինաչափություններ: Այսպիսով հայերենի հիմնական հ. ե. շերտի կողքին նա տարբերում է՝ ա) հնագույն փոխառություններ այլ հ. ե. լեզուներից. բ) բառեր, որոնք հնդեվրոպական և հնդեվրոպականին մոտ լեզուների (այդ թվում՝ հայասերենի և ուրարտերենի) ենթաշերտային ազդեցության հետևանք են. գ) հիմնական շերտի փոխակերպումներ, որոնք հնագույն բարբառային տարբերությունների հետևանք են. դ) միջնորդական փոխառություններ հ. ե. լեզուներից. ե) հայերենի օրինաչափություններն արտահայտող, սակայն անբացատրելի բառեր: Հայերենի և ուրարտերենի փոխհարաբերության հարցում ելնելով «նոստրատիկ ցեղակցության» տեսությունից՝ Ջահուկյանը գտնում է, որ ուրարտերենը և խուտիերենը (խուտաուրարտական լեզվաընտանիքի լեզուները) հեռավոր ցեղակցություն ունեն հ. ե. լեզուների և, հետևաբար, նաև հայերենի հետ: Այդ դեպքում հայերենի փաստերը ձեռք են բերում կարևոր նշանակություն ինչպես հնդեվրոպական – խուտաուրարտական ցեղակցության, այնպես էլ ընդհանրապես «նոստրատիկ» ցեղակցության տեսության հիմնավորման համար: Իր հետագա ուսումնասիրություններում Ջահուկյանն ավելի է ճշգրտում հայերենի ու փոքրասիական հնագույն լեզուների փոխհարաբերությունը: Մասնավորապես, հայասերենի փաստերի նոր վերլուծությամբ ապացուցում է, որ այն հնդեվրոպական լեզու է և հայերենի հիմքը, այլ կերպ՝ անցման օղակը հ. ե. լեզվից հայերենին, իսկ ուրարտերենի համար գրում է. «Երկար տարիներ նվիրելով ուրարտական արձանագրությունների լեզվի ուսումնասիրությանը՝ մենք եկել ենք այն եզրակացությանը, որ հիշյալ բանաձևերի բառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ այդ բանաձևերը համարել հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը»³: Այս եզրակացություններն, անշուշտ, փոխում են ոչ միայն հայերենի և ուրարտերենի փոխհարաբերության վերաբերյալ մինչև այդ գոյություն ունեցած պատկերացումները, այլև առաջարկում են ընդհանրապես փոքրասիական հնագույն լեզուների հետ հայերենի ունեցած լեզվական աղերսների խնդրի լուծման նոր ուղիներ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ջահուկյանի կողմից

³ Գ. Ջահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, «ՊԲՀ», № 1, 2000:

հայերենի դիրքի ճշգրտումը ցեղակից լեզուների շրջանում: Ի տարբերություն հիշյալ խնդրի վերաբերյալ մյուս հայտնի ուսումնասիրությունների՝ նա հ. ե. լեզվաընտանիքում հայերենի բարբառային յուրահատկությունները սահմանում է միաժամանակ հնչյունական, քերականական և բառային գուգաբանությունների հիման վրա՝ գործադրելով նաև քանակական վերլուծության հայտնի մեթոդը: Կիրառելով նույնպես իր իսկ կողմից մշակված առավել հավաստի ստուգաբանությունների ընտրության, հ. ե. միասնության շրջանում գուգահեռ ձևերի զարգացման տարբերությունների, տարբեր հատկանիշների առանձնացման, ինչպես նաև փաստերի գնահատման սկզբունքները՝ լեզվաբանը հ. ե. լեզուները դասակարգում է ըստ հայերենի նկատմամբ ունեցած մերձավորության աստիճանի: Մույն հոդվածի սահմաններում, ցավոք, հնարավոր չէ հանգամանորեն անդրադառնալ հնդեվրոպական արդի այնպիսի տեսություններին, ինչպիսիք են «կոկորդայինների» և «կատկայինների» վարկածները, որտեղ մեծ ներդրում ունի նաև Ջահուկյանը: Նշենք միայն, որ այդ տեսությունների օգնությամբ նորովի են մեկնաբանվում ոչ միայն հնդեվրոպական ու ոչ հնդեվրոպական լեզուների ծագման ու զարգացման պայմանները, այլև հասնում ենք մինչև ընդհանրապես մարդկային լեզվի առաջացման ու տարածման ժամանակաշրջան: Առանձին կարևորություն է ներկայացնում արդի համեմատաբանության մեջ հաճախ կիրառվող տիպաբանական հավանականության սկզբունքի գործադրումը Ջահուկյանի կողմից: Նա առաջ է քաշում տիպաբանական կաղապարների արտալեզվական հիմնավորման հարցը, այսինքն՝ վերականգնումը պետք է լինի ոչ միայն լեզվաբանորեն ճիշտ, այլև իրական: Տվյալ դեպքում նա նկատի ունի վերականգնվող ձևերի տիպաբանական հավանականությունը իրացման տեսակետից. հնչույթների համակցման իրական հնարավորությունները վանկի մեջ և այդպիսով վանկինը՝ բառի, բառինը՝ շարույթի, իսկ շարույթինը՝ նախադասության մեջ: Ասենք, որ այստեղ մենք տեսնում ենք լեզվական միավորների իրացման բնականության տեսության սաղմեր, որը Եվրոպայում և Ամերիկայում զարգացվեց ավելի ուշ: Հետագայում այս մոտեցումը նա կիրառեց ձևաբանության մեջ և վերականգնվող նախաձևերը դիտարկում էր ոչ թե որպես մաքուր, այլ խոսքում իրացվող և խոսքային մյուս միավորներով պայմանավորված ձևեր: Սա իսկապես նոր մոտեցում էր լեզուների ծագումնաբանական տիպաբանության մեջ, որի շնորհիվ Ջահուկյանը կողմից ստեղծվեց լեզվական ձևերի կաղապարավորման իր տեսությունը, որը մի շարք յուրահատկություններով տարբերվում էր նման այլ տեսություններից: Ջահուկյանն իր վերջին գործերում անդրադարձավ նաև հնդեվրոպաբանության առավել վիճելի շարահյուսության խնդիրներին, եթե նկատի ունենանք, որ արդի հնդեվրոպաբանների մեծ մասը խուսափում է

այս խնդիրների քննարկումից, գտնելով, որ գրավոր տեքստերի բացակայության պայմաններում նախադասության մասին խոսելն իրական չէ: Այս առումով Ջահուկյանի վերլուծությունները ոչ միայն հետաքրքիր են, այլև արդյունավետ հնդեվրոպական լեզուներում շարահյուսական գուգաբանությունների սահմանման տեսակետից⁴:

Ամփոփելով ասենք, որ վստահ չենք, որ այս հոդվածով կարողացանք լիարժեքորեն ներկայացնել ակադ. Գ. Ջահուկյանի վաստակը հնդեվրոպաբանության բնագավառում, և, կարծում ենք, որ այն հատուկ և խոր ուսումնասիրության կարիք ունի, քանի որ նա անդրադարձել է նաև հնդեվրոպաբանության բազմաթիվ առանձին այլ խնդիրների և դրանց վերաբերյալ առաջարկել իր սեփական լուծումները, որոնք այսօր լայն ճանաչում ունեն: Ասվածը վերաբերում է թե՛ հնդեվրոպական նախալեզվի ու լեզուների և թե՛ այդ լեզուների միջև տարբեր փոխհարաբերությունների խնդիրներին:

Հետևաբար կարծում ենք, որ Գ. Ջահուկյանի աշխատությունները դեռ երկար ժամանակ կլինեն ոչ միայն հայագետների, այլև հնդեվրոպաբանների սեղաններին:

Բանալի բառեր – հնդեվրոպաբանություն, համեմատական քերականություն, տիպաբանական վերլուծություն, նոստրատիկ տեսություն, համակարգային վերլուծություն, հնդեվրոպական լեզուներ, ալիքների տեսություն, ծագումնաբանական ցեղակցություն

ЮРИЙ ГАБРИЕЛЯН – Г. Джаукян и современные индоевропейские теории. – В статье интерпретируются теоретические взгляды Г. Б. Джаукяна в области индоевропеистики. Принадлежит к представителям классической школы индоевропейского языкознания, учёный обращался и к вопросам, выдвинутым новейшими исследователями. Речь идёт прежде всего о так называемой „ностратической теории” происхождения и развития индоевропейских и неиндоевропейских языков. Исходя из неё, но руководствуясь собственными подходами, Джаукян не только уточнил место армянского и родственных ему языков, но и установил связи между языками различного происхождения. Он усовершенствовал методы глоттохронологии и типологической вероятности, что привело к новым оригинальным выводам.

Ключевые слова: индоевропеистика, сравнительная грамматика, типологический анализ, ностратическая теория, системный анализ, индоевропейские языки, теория волн, генетическое родство

YURI GABRIELYAN – G. Jahukyan and the Modern Indo-European Theories. – In this article, the author has tried to represent Jahukyan’s investment in contemporary Indo-European theories. Although Jahukyan mainly represents the field of classical Indo-European studies, he has also dwelt on the problems of contemporary Indo-European studies in his works and has often suggested his own solutions. This concerns, first of all, to the so-called “nostratic theory”, on the basis of which Jahukyan has elabo-

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003:

rated his own approaches about the origin and development of related and non-related languages. In the same way proceeding from the modern theories of linguistic chronology he has accomplished the chronology of facts of the Armenian language and its related languages and their spatial distribution according to isoglosses. Meanwhile, Jakhukyan's approach is widespread in Indo-European studies and is used by many linguists. With the combined use of the above-mentioned principles, the linguist has also regulated the general and different development circumstances of related and non-related languages.

Key words: *Indo-European studies, comparative grammar, typological patterns, nostratic theory, systemic analysis, Indo-European languages, wave theory, genealogical affinity of languages*

ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՑԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայերենի եղանակային ձևերը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են նշանակալից փոփոխությունների: Փոխվել են եղանակների ու ժամանակների քանակը (հինհայերենյան որոշ ժամանակաձևեր վերացել են՝ իրենց տեղը զիջելով նորակազմ բայական միավորներին), հարացուցային կազմությունների կառուցվածքը, բայի քերականական իմաստների դրսևորման միջոցները: Այս ամենի պատճառը լեզվի զարգացումն է, որը պայմանավորված է ներքին և արտաքին գործոններով: Որպես ներքին գործոններ՝ Գ. Ջահուկյանի կողմից նշվում են լեզվական համակարգի ներքին հակասությունները, կանոնավոր կազմությունների կողքին անկանոն ձևերի գոյությունը, լեզվական ձևերի և իմաստների անհամապատասխանությունը: Նրա կարծիքով՝ լեզուն «որպես ինքնակատարելագործվող դինամիկ համակարգ, գնում է անմիօրինակությունները հաղթահարելու, բացառություններն ու շեղումները վերացնելու, լեզվական իմաստները լեզվական արտահայտության ձևերին համապատասխանեցնելու ուղիով»¹:

Հայերենի եղանակային ձևերի առաջացման վերաբերյալ Գ. Ջահուկյանը արժեքավոր մեկնություններ է արել: Կատարելով հայոց լեզվի պատմության շրջանաբաժանում՝ նա անդրադարձել է նաև հայերենի տարբեր փուլերում ձևավորվող բայական հատկանիշներին և դրանց դրսևորումներին: Ըստ նրա՝ միջինհայերենյան շրջանի խոնարհման համակարգը բնութագրվում է լծորդությունների փոխանցման հաճախականությամբ, հինհայերենյան սահմանական ներկայի և անցյալ անկատարի՝ ըղձականի վերածմամբ²:

Գ. Ջահուկյանը անդրադարձել է նաև ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ *կու* եղանականիշ մասնիկով կառուցատիպերի առաջացմանը. «Խոնարհման համակարգի գլխավոր գիծը՝ *կու*-ով սահմանականի կազմությունը, իր հիմքերն ուներ նախորդ շրջանում՝ ստորադասական ներկան կամ ապառնին հաճախ փոխարինվում էր սահմանական ներկայով, իսկ սահմանական անցյալ անկատարը, ստորադասականի համապատասխան ժամանակի բացակայության պատճառ-

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987, էջ 10:

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 47:

ռով, միշտ հանդես էր գալիս նրա փոխարեն. այս բանը հանգեցնում է հին ստորադասականի ձևերի անհետացմանը և նրա՝ սահմանականի համապատասխան ժամանակներով փոխարինվելուն. սահմանականը ստորադասականից տարբերելու համար սկսում են օգտագործել *կու* մասնիկը»³:

Վերոբերյայից պարզ է դառնում, որ Գ. Ջահուկյանը ներկայի և անցյալ անկատարի՝ *կու* եղանականիչ մասնիկով հարադրված ժամանակաձևերի առաջացումը կապում է հինհայերենյան ստորադասականի անհետացման և հին սահմանականի՝ ըղձականի վերածման հետ, սակայն սահմանական եղանակի կազմությունները ստորադասականից տարբերակելու միջոց են ընտրվել հավանաբար ոչ թե *կու* եղանականիչ մասնիկով, այլ անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրությունները: Այս վարկածը կարելի է հիմնավորել մի շարք փաստարկներով: Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ անորոշ դերբայով հարադրված կազմությունների առաջին վկայությունները հասնում են մինչև 7-րդ դար, դրանց նախատիպերը դեռևս առկա են մեր մատենագրության սկզբնավորման շրջանում⁴, ժխտական կառուցատիպերը գործառնում են՝ 10-րդ դարից սկսած⁵, մինչդեռ ներկայի և անցյալ անկատարի՝ *կու* եղանականիչ մասնիկով և *-ու՛մ* վերջամասնիկն ունեցող դերբայով բաղադրված ժամանակաձևերի առաջին օրինակները մատենագրության մեջ հանդիպում են՝ 12-րդ դարից սկսած: Հետևաբար կարելի է ենթադրել, որ նորակազմ ներկայի և անցյալ անկատարի նախնական ձևերը եղել են անորոշ դերբայով և օժանդակ բայով գուցադրությունները, որոնք սկսել են կիրառվել այն ժամանակ, երբ հինհայերենյան ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ ստորադասականի իմաստով հետզհետե հաճախացող գործածության հետևանքով առաջացել էր նոր կառուցատիպերի անհրաժեշտությունը⁶:

Անդրադառնալով *կու* եղանականիչ մասնիկով կազմությունների հետագա զարգացմանը Գ. Ջահուկյանը կարծում է, որ նախապես այն ընդգրկել է հայերենի բոլոր բարբառները՝ գործածվելով նաև Ու՛մ ճյուղի բարբառներում. «*Կու*-ով ձևերը գործածվում էին ներկայի և ապառնիի համար, ինչպես համապատասխան առանց *կու*-ի ստորադասականի ձևերը. հետագայում *կու*-ով ձևերը արևմտահայ բարբառներում

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս **Ա. Այտրնեան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 87, **Ղ. Յովնանեան**, Հետազոտությունք նախնեաց ռամկօրենի վրայ, Վիեննա, 1897, էջ 254-255, **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. IV, Բ գիրք, Եր., 1961, էջ 174:

⁵ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 241, **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 165:

⁶ Տե՛ս **Գ. Վերոբյան**, Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը, Եր., 2013, էջ 27-28:

սկսում են նշանակել միայն ներկան (ապառնու համար օգտագործվում է *պիտի*-ով ձևը), իսկ արևելահայ բարբառներում միայն ապառնի (ներկան կազմելու համար գործածվում է *ուլ* մասնիկն ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով կազմվող բաղադրյալ ժամանակային ձևը)⁷:

Այս տեսակետը հաստատվում է նախ այն փաստով, որ *կու* (կը) մասնիկով բայաձևերն այսօր էլ շարունակում են գործածվել *ուլ* ճյուղի բարբառների ենթադրական եղանակի հարացույցում, ապա՝ մի շարք բարբառային միավորներ ներկայի՝ *-ուլ* վերջավորությամբ դերբայով կազմություններին զուգահեռ կիրառում են *կու* եղանականիշով բաղադրված ներկայի ձևերը: Այսպես՝ Նախիջևանի Շուրութ գյուղի խոսվածքը լրացնելիս (այն *ուլ* ճյուղին է պատկանում) Դ. Կոստանդյանը նկատել է հետևյալը. «Խոսվածքի հետաքրքիր հատկությունն է ընդհանրական ներկայի համար *կը*-ով ձևերի գործածումը՝ *Մէք կօթը-հան յիղած տանակին ճօնդիկ կասէնք: Յէղքարօլ մանգաղնին կըսրէն*⁸: Հայտնի են նաև Թիֆլիսի բարբառում գործառող ներկայի՝ *-ուլ* վերջամասնիկն ունեցող դերբայով և *կու* եղանականիշով բաղադրված զուգահեռ կազմությունները⁹: Եվ վերջապես *ուլ* ճյուղի բարբառներում նախնական *կու*-ով ներկայի գործածության կարևոր ապացույց է դրանցում *կու*-ով ձևերի առկայությունը պատմական ներկայի իմաստով. «Բայց եղել է մի ժամանակ, երբ *ուլ* ճյուղի մեջ էլ նա [իմա՝ *կը* ձևով ներկան - Գ. Գ.] գործածվել է իբր ներկա միայն և այդ պահվում է մինչև այժմ էլ պատմական ներկայի ձևով..., այսպես՝ Ժամանակով մի թաքաւոր կըլի, թաքաւորին կունենա իրէք տղա, իրէք ախչիկ»¹⁰:

Գ. Ջահուկյանը անդրադարձել է նաև *կու* եղանականիշի ծագման հարցին: Հայագիտության մեջ *կու*-ի առաջացման վերաբերյալ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Քննելով *կու*-ի ծագման հարցը՝ նա հավանական է համարում երկու վարկած. «Ա. Այտընյանինը, որ *կու*-ն բխեցնում է *կայ ու* կապակցությունից, և Մ. Աբեղյանինը, որ այն կապում է *կոյ* բառ-մասնիկի հետ. մեզ հավանական է թվում երկրորդը և ահա թե ինչու. նախ՝ Ա. Այտընյանը հաշվի չի առնում, որ որոշ վայրերում *կու*-ն արտահայտում է ոչ թե ներկա, այլ հավաստիության ապառնի, մի բան, որ դժվար է բացատրել *կայ ու* կապակցությամբ. երկրորդ՝ լեհահայ խոսվածքում (Առտիայի բարբառ) և Բասարգեչարում *կու*-ի դիմաց առկա է *կի* ձևը, որ անհնար է հնչյունապես բխեցնել *կայ ու*-ից կամ *կու*-ից, բայց դժվար չէ բխեցնել *կոյ*-ից»¹¹:

Այս խնդրին անդրադառնալիս հավանաբար պետք է հաշվի առ-

⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 47:

⁸ «Հայերենի բարբառագիտական ատլասի անտիպ նյութեր», էջ 212:

⁹ Տե՛ս Ա. Ղարիբջան, նշվ. աշխ., էջ 264:

¹⁰ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 87:

¹¹ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 104:

նել, որ հայերենի բարբառների ծավալուն տարածքում սահմանական ներկայի մասնիկները նախնական մեկ ձևից չէին կարող առաջանալ: Կարծում ենք՝ Մ. Աբեղյանի վարկածը հավանական պետք է համարել *կու* եղանականիշի, իսկ Ա. Այտրնյանինը՝ *կա*-ի ծագման հարցում, քանի որ, ինչպես Ա. Խաչատրյանն է նշում, «...*կը*-ի սկզբնաձև կու-ն չէր կարող ծագել *կայ ու* ձևից..., իսկ *կա*-ն կարող էր: Բանն այն է, որ *կայ ու* կապակցության մեջ շեշտյալ է բնի *ա* ձայնավորը և ոչ թե *ու* շաղկապը, հետևաբար և պիտի սղվեր անշեշտ *ու*-ն և ոչ թե *ա*-ն: Ուրեմն *կայ ու* ձևից կարող էր առաջանալ *կա*, բայց ոչ *կու*: *Կու*-ի ծագման Աբեղյանի բացատրությունը *կոյ* ձևից ավելի հավանական է»¹²:

Թեև հնչյունաբանորեն արդարացվում է *կոյ*>*կու* անցումը, սակայն Մ. Աբեղյանի տեսակետը լիովին ապացուցված լինելուն պակասում են մատենագիտական տվյալներ, որի մասին նշել է նաև ինքը. «*Կոյ* բառի համար հին գրականությունից օրինակ չունենք, որովհետև ընդհանրապես հին բարբառներով գրվածքներ չկան, բայց մեր ժամանակի բարբառներում շատ կգտնենք այդ բառը կո (կյո) կամ *գո (գյո)* ձևով դրված Սահմ. ներկայի կամ իբրև ապառնի գործածված ներկայի հետ. *Կո տու ես ասելի. Ես կո քնես եմ, Կո տանցմեն տրկի ըլի. Կո ըտենց կըլի* (Տ. Ավետ., Կիրակոսի հարսանիքը...)»¹³:

Հայտնի է, որ հայ բարբառագիտության զարգացման հետագա ուղին կապված է Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության հետ, որը «...նախատեսված է որպես հայ բարբառագիտության յուրատեսակ ներածություն, որտեղ դրված և ժամանակակից լեզվաբանության սկզբունքներով ու մեթոդներով ըստ հնարավորին լուծված են համաժամանակյա և տարաժամանակյա բարբառագիտության մի շարք հարցեր»¹⁴: Նկատի ունենալով բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների սահմանազատման, բարբառային սահմանների որոշման չափանիշների անմիօրինակությունը՝ Գ. Ջահուկյանը կատարել է բազմահատկանիշ դասակարգում: Բարբառների եղանակային ձևերի դրսևորած տարբերությունները նա արտահայտել է 25 զուգաբանություններով՝ ընտրելով առավել կարևոր և տարածված հատկանիշներ, ինչպես օրինակ՝ *ոււ*-ով ներկա (և անցյալ անկատար), *լիւ*-ով ներկա (և անցյալ անկատար), *ր*-ով վաղակատար, *ման*-ով դերբայ, *պիտի* եղանականիշ մասնիկի սղված ձև, բաղադրյալ անցյալ ձևերի կազմում անցյալ ժամանակ ցույց տվող բառ-մասնիկի կամ վերջամասնիկի օգնությամբ, ժխտական մասնիկների հետադաս գործածություն, ժխտական դերբայի հատուկ ձևի առկայություն և այլն¹⁵:

¹² Ա. Խաչատրյան, Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Եր., 1982, էջ 47:

¹³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 319:

¹⁴ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 5:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 100-103:

Այս գրքում թեև հեղինակի նպատակը հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգումն է, սակայն նա անդրադարձել է նաև եղանակային ձևերին առնչվող տեսակետների ու ըմբռնումների, պարզաբանել բարբառագիտության համար կարևոր նշանակություն ունեցող իրողություններ, արել դիտարկումներ, կատարել ճշտումներ: Այսպես՝ ձևաբանական դասակարգման սկզբունքի փոխարեն նա առաջ է քաշել պատմաձևաբանականը: Այս դեպքում բարբառային միավորները առանձնացնելիս նկատի է առնվում ներկայի կազմությանը մասնակցող նախամասնիկների և դերբայական վերջամասնիկների ելակետային, նախնական սկզբնաձևը:

Նա անդրադարձել է նաև *-ոււմ*, *-լիս* վերջամասնիկներով դերբայների առաջացման խնդրին: Պաշտպանելով *-ում* վերջամասնիկով անկատար դերբայի ծագման ավանդական տեսակետը՝ Գ. Ջահուկյանը նկատում է. «...դժվար է համաձայնվել այն կարծիքին, թե անկատարը անորոշի ներգոյականն է. անհասկանալի է, թե ինչպես կարող էր անորոշի ներգոյականն անցնել բուն անկատարին: Մեզ ավելի հավանական է թվում հետևյալ ենթադրությունը. *ոււմ*-ը դրվել է սկզբնապես այնպիսի անունների վրա, որոնք միաժամանակ և բայահիմքեր էին, ապա անալոգիայով տարածվել այլ ձևերի վրա»¹⁶:

Թեև *-ոււմ* վերջամասնիկով դերբայի առաջացման վերաբերյալ տարբեր կարծիքներ են արտահայտվել, սակայն հայ լեզվաբանության մեջ ընդունված է այն տեսակետը, որ անկատար դերբայի *-ոււմ* վերջավորությունը կապվում է ներգոյական հոլովի հետ: Տարակարծություններ կան միայն մեկ հարցի վերաբերյալ. *-ոււմ* ձևույթը նախապես անորոշ դերբայի՞ն է կցվել, թե՞ բայահիմքին: Հավանաբար *ոււմ*-ով անկատարը հայերենի բոլոր դրսևորումներում մեկ միասնական նախահիմք և զարգացման նույնական ընթացք չի ունեցել: Գուցե մի տարածքում այն ավելացած լինի անորոշին, իսկ մեկ այլ տարածքում՝ բայահիմքին: Մի շարք խոսվածքներում *-ոււմ*-ով անկատարի՝ անորոշից առաջանալը հաստատվում է Հավարիկի բարբառի ներկայի եզակի 1-ին դեմքի գրելը՝ *իւմ*, ինչպես նաև *Ոււմ* ճյուղի խոսվածքների զգալի մասում գործառող *գալում եւմ* տիպի ժամանակաձևերով: Այս հարցում վերջնական կարծիք հայտնելուն խանգարում է այն, որ հայերենի որևէ խոսվածքում չեն պահպանվել *սիրելում>սիրում* հնչյունական անցման օղակները՝ ի տարբերություն *գրելիս>գրելիս>գրես>գրել* հնչյունական շղթայի¹⁷:

-Լիս վերջամասնիկով դերբայի ծագումը Գ. Ջահուկյանը մեկնում է հետևյալ կերպ. «Բարբառների մոտիկից կատարվող քննությունը ցույց է տալիս, որ պատմական հիմունքով պետք է միացնել *Լ* և *Ս* ճյու-

¹⁶ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 47-48:

¹⁷ Տե՛ս Գ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 30:

ղերը. մի կողմից՝ *Մ* ճյուղի բարբառների միջակա աստիճանները (*լիս, յիս, յս, ս*) ցույց են տալիս *լիս* սկզբնաձևի առկայությունը, մյուս կողմից *Լ* ճյուղի բարբառների *լի*-ով ձևերը ժխտականում և երբեմն հաստատականում ենթադրել են տալիս սկզբնական *լիս* ձև...*լիս* ձևի հետ միասին *լուս* ձևի առկայությունը (Կողբ, այլև Գյառգյառ, Ղալաչա, Աշտարակ) ցույց է տալիս, որ *լիս*-ը գոնե մասամբ ծագել է *լոյս* ձևից (հմմտ. Կողբում՝ *լոյս > լուս* և *երթալոյս > էթալուս*)»¹⁸:

Այսպիսով, ինչպես երևաց վերոբերյալից, մեծ է Գ. Ջահուկյանի վաստակը հայ լեզվաբանության մեջ եղանակային կազմություններին առնչվող որոշ սկզբունքների տեսական և պատմական հիմքերի ճշգրտման ուղղությամբ: Նրա աշխատություններում եղանակային ձևերի վերաբերյալ արված են արժեքավոր դիտարկումներ, կարևոր մեկնություններ, ժամանակակից լեզվաբանության սկզբունքներով ու մեթոդներով պարզաբանված, հստակեցված և լուծված են դրանց առնչվող մի շարք հարցեր:

Բանալի բառեր – *դիտարկումներ, հայոց լեզու, ծագում, եղանակային ձևեր, բարբառային դրսևորումներ, բայական հատկանիշներ, հայագիտական ուսումնասիրություններ*

ГАЯНЭ ГЕВОРГЯН – Наблюдения Геворга Джаукяна над происхождением модальных форм в армянском языке. – В трудах Г. Джаукяна содержатся важные наблюдения над происхождением модально-временных форм армянского языка. Разработав его периодизацию, он обратился к особенностям образования глагольных форм на разных этапах развития языка и их диалектным проявлениям. Г. Джаукян обсуждал также точку зрения других учёных, их трактовки различных модально-временных форм, разъяснял важные для арменоведения факты, вносил уточнения.

Ключевые слова: *наблюдения, временные формы, арменоведение, диалектные проявления, модальная форма*

GAYANE GEVORKYAN - Gevorg Jahukyan's Observations on the Origin of Armenian Modal Forms. – Gevorg Jahukyan has made important interpretations on the origin of Armenian modal forms. Having divided the history of Armenian language into periods, Jahukyan referred to the formations of verbal features at different stages of the historical development of Armenian as well as to their dialect manifestations. Jahukyan also examined the various viewpoints and interpretations relevant to modal and tense forms, he clarified very important facts for Armenian studies, made observations and some corrections.

Key words: *observations, tense forms, the origin of Armenian studies, dialect manifestations, Armenian language, modal form*

¹⁸ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 106:

**ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՄԵԴԱ ԳԱՍՊԱՐՑԱՆ

Հայտնի է, որ արվեստի ցանկացած ստեղծագործության կայացման կարևորագույն նախապայմանը *երևակայության* առկայությունն է: Սա, անտարակույս, վերաբերում է նաև գրական երկին, քանզի գեղարվեստական ստեղծագործությունն էլ արվեստի բնագավառ է, օբյեկտիվ իրականության գեղարվեստական վերարտադրություն, որն իրագործվում է խոսքի ինքնատիպ կիրառությամբ:

Օրինակ, եթե անդրադառնալու լինենք չարենցյան հետևյալ տողերին «Երկիր Նաիրի»-ից. «Եվ նորից Բերդի անառիկ ամրություններից, որպես երկաթյա ահեղ մի սպառնալիք – կելնե, կհառնե ահասատ նաիրյան ոգին, կորովը, ուժը հազարամյա – նաիրյան աշխարհի...», ապա կարող ենք վստահաբար ասել, որ այս համատեքստի հիմքում ընկած արթնացող, սաստկացող ուժի պատկերն այստեղ ակնհայտորեն դինամիզմ է ապահովում, և լեզվական միավորների (մասնավորապես՝ կելնե – կհառնե, երկաթյա – ահեղ, ոգի – կորով – ուժ) հենց այդ ընտրությունն ու զուգակցումն է, որ այս շարժումն ուղղում է բարձրակետին (կհառնե ահասատ): Հեղինակի երևակայությամբ ու նաև լեզվական միավորների այսօրինակ կիրառությամբ է, որ համատեքստը հարստանում է անհնազանդ նաիրցու ոգու վերածննդի նրբերանգներով, որոնք առկա են նաև ստեղծագործության այլ հատվածներում:

Հետևաբար, գեղարվեստական ստեղծագործության կայացման ամենահիմնական ու պարտադիր տարրերը երևակայությունն ու լեզուն են, որոնք սակայն չեն բերի ցանկալի արդյունքի, եթե բացակայում է ընթերցողի՝ հեղինակի հույզերն ու ապրումները կիսելու ունակությունը:

Երբ Թ. Ս. Էլիոթը իր «Ալֆրեդ Փրուֆրոքի սիրո երգը» բանաստեղծության մեջ իջնող երեկոն համեմատում է վիրահատության սեղանին պատկած անզգայացված հիվանդի հետ, ակնհայտ է, անշուշտ, որ այստեղ գործ ունենք հեղինակային երևակայությամբ վերարտադրված իրականության պատկերի հետ: Բայց եթե ընթերցողն անկարող է գործի դնել իր երևակայությունը, և նրա ու հեղինակի միջև գիտելիքների որևէ ընդհանրություն չկա (գաղամերյան տերմինով ասած՝ բացակայում է

«ընդհանուր հորիզոն»¹-ը), ապա արդյո՞ք նա կկարողանա կիսել հեղինակի զգացողությունները և հասկանալ ու հնարավորինս ճիշտ մեկնաբանել պատկերի խորությունն ու գեղագիտական արժեքը ստեղծագործության մեջ: Հատկապես որ այսպես թե այնպես անկարելի է ակնկալել, որ հեղինակի ու ընթերցողի երևակայական ընկալման սահմանները նույնական լինեն, քանզի նրանց միջև ժամանակային, տարածական, մշակութային, տարիքային ու սեռային, լեզվամտածական և վերջապես անհատական փորձի տարբերությունները հաճախ, եթե չասենք միշտ, անխուսափելի են: Սա նշանակում է, որ հասկացումն ու մեկնաբանությունը երբեք չեն կարող միանշանակ լինել: Չեն կարող միանշանակ լինել նաև այն պատճառով, որ *երևակայությունն* ու *հեղինակի ապրումները կիսելու ունակությունը* լայն ու վերացական հասկացություններ են:

Այս ամենը գալիս է հաստատելու, որ եթե նույնիսկ առկա են ստեղծագործության կայացումն ապահովող նշված նախապայմանները, կա *երևակայությունը* և *ընթերցողին հեղինակի հետ կապող «ընդհանուր հորիզոն»*-ը, ապահովված է նաև *լեզվական կողմի* ընդհանրությունը, միևնույնն է, այդ դեպքում էլ գեղարվեստական տեքստի ընկալումը, հասկացումն ու մեկնաբանությունը բարդ գործընթացներ են, քանզի դրանց շրջանակներում կարևորվում են նաև բազմաթիվ այլ խնդիրներ՝ հեղինակ – ընթերցող հարաբերությունները, լեզվի ու մտածողության, խոսքային գործունեության ու հաղորդակցական մտադրության հարաբերակցության և բազմապիսի այլ հարցեր:

Հայտնի է, որ գեղարվեստական ստեղծագործությունը ընկալելու, հասկանալու և մեկնաբանելու հարցերի լուծման բանալին հարկ է փնտրել ինչպես լեզվաբանության ու գրականագիտության, այնպես էլ մի շարք այլ գիտությունների հետազոտական խաչմերուկում: Հետևաբար պատահական չպետք է համարել, որ այս խնդիրները գրականության պատմության բոլոր փուլերում, դեռ անտիկ ժամանակներից սկսած, հետաքրքրել են մտածողներին: Մակայն եթե անտիկ ստեղծագործողներին հետաքրքրում էին երկրայինի ու երկնայինի մշտնջենական բախումն ու բարդ փոխհարաբերությունները, վաղ միջնադարն առավելապես զբաղվում էր աստվածաբանական աշխատանքների մեկնաբանությամբ, ապա արդեն ավելի ուշ միջնադարում ի հայտ եկած այլաբանական ստեղծագործությունները շատ ավելի մեծ ջանքեր էին պահանջում մեկնաբանության ու բացատրության համար: Նշենք սակայն, որ գործադրվող այս ջանքերն էլ միանշանակ ուղղվածություն չունեին: Հաճախ անտեսվում էին վերը նշված երեք նախադրյալների, նաև ստեղծագործողի կերպարի կարևորությունը: Գրական երկը

¹ Гадамер Х. Г. Истина и метод. Основы философской герменевтики. М., 1988, с. 284.

քննվում էր որպես առանձին, հեղինակից անջատ երևույթ: Այնուամենայնիվ ռոմանտիզմի դարաշրջանում հաղթահարվեց այս մոտեցումը, երբ գրականությունն սկսեցին արժևորել որպես հեղինակի ինքնատեսակապի միջոց, օբյեկտիվ իրականության անհատական, հեղինակային մեկնաբանություն, հեղինակի սեփական տպավորությունների, հույզերի ու զգացմունքների յուրօրինակ վերարտադրություն, այլ ոչ թե իրականության հայելային արտացոլանք: Այս շրջանում էր, որ աստիճանաբար սկսեց կարևորվել տեքստի մեկնաբանության հերմենևտիկ մոտեցումը, հատկապես որ արդեն 18-րդ դարում գերմանական փիլիսոփայությունն սկսել էր ակտիվորեն զբաղվել լեզվին առնչվող հարցերի քննությամբ²: Այս շրջանում էր, որ դրվեցին համեմատական լեզվաբանության և պատմական ուսումնասիրության հիմքերը: Լեզվի էությունը, ծագումնաբանությունը և դրա առաջացումը հարցեր էին, որոնք հայտնվեցին լեզվաբանների ուշադրության կենտրոնում, և լեզվի մասին գիտական ձեռքբերումները նախադրյալ դարձան հերմենևտիկայի, հետագայում նաև բանասիրական հերմենևտիկայի՝ որպես գեղարվեստական տեքստի ուսումնասիրության մեթոդի կայացման համար³: Կարճ ժամանակում այս մեթոդի գլխավոր նպատակը, որը լայն առումով ցանկացած տեքստի մեկնաբանությունն էր, դարձավ պատմական և փիլիսոփայական մեթոդաբանության կենտրոնական խնդիրներից, և տեքստի ընկալման հարցում հատկապես կարևորվեցին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները: Ձևն ու բովանդակությունը սկսեցին դիտարկվել որպես մեկ անքակտելի ամբողջություն, և կարեվորվեցին տեքստի ընկալման՝ որպես եռակողմ ամբողջական գործընթացի մասին պատկերացումները (գործընթաց, որի ներսում շեշտադրվում էր երեք կողմ՝ պատմական ընկալումը՝ ստեղծագործության բովանդակության առումով, քերականական ընկալումը՝ տեքստի լեզվի առումով, և հոգեբանական ընկալումը, որը միտված էր հաշվի առնելու առանձին գրողի ներաշխարհը)⁴:

Հետաքրքրական է, որ ըստ Ֆոն Հումբոլդտի, որը նույնպես էապես որոշիչ էր համարում լեզվի դերը, բառերը ոչ թե առարկայական աշխարհի հատկանիշներն են, այլ այն անհատի, որը խոսում է այդ աշխարհի մասին: Հումբոլդտի համոզմամբ՝ լեզուն օգնում է արտահայտելու անարտահայտելին, և հենց դա է պատճառը, որ տեքստը բազմաթիվ մեկնաբանությունների առիթ է տալիս⁵: Ֆ. Շլեգելը, կիսելով այս

² Տե՛ս **Fr. Schleiermacher**, *Hermeneutics and Criticism and other writings*. Cambridge: Cambridge University Press, 1998, **W. Dilthey**, *Descriptive Psychology and Historical Understanding*. Hague, 1977, **Дильтей В.** Введение в науки о духе // "Зарубежная эстетика и теория литературы XIX и XX вв. (Трактаты, статьи, эссе)". М., 1987, էջ 110-135, **Гумбольдт В.** Избранные труды по языкознанию. М., 1984 և այլն:

³ Տե՛ս **Гумбольдт В.**, նշվ. աշխ., էջ 47:

⁴ Տե՛ս **F. Ast**, *Grundlinien der Grammatik. Hermeneutik und Kritik*. Landshut, 1808, էջ 177:

⁵ Տե՛ս **Гумбольдт В.**, նշվ. աշխ., էջ 80, 392:

կարծիքը, պնդում էր, որ արվեստի յուրաքանչյուր իսկական գործ բազմաթիվ իմաստներ է պարունակում⁶, և գեղարվեստական ստեղծագործության իմաստն էլ հենց այս բազմիմաստության և հնարավոր բազմաթիվ մեկնաբանությունների մեջ է: Հերմենևտիկայի տեսության մեջ անկյունաքարային արժեք ունի մասի ու ամբողջի սերտ փոխկապվածության դրույթը, որի հաշվառումը էական դեր է խաղում ստեղծագործության ընկալման ու հասկացման հասնելու գործում, քանզի միայն մասերի և ամբողջի անընդհատ համադրմամբ և փոխյրացմամբ է ձևավորվում ստեղծագործությունը, քանզի յուրաքանչյուր ստեղծագործություն, ըստ էության, դրանում առկա բազմաթիվ տարրերի միջև հաստատված հարաբերությունների մի հսկայական ցանց է, իսկ գեղարվեստական խոսքի էությունն էլ այն է, որ նրա մեջ մտնող յուրաքանչյուր տարր դառնում է անհրաժեշտ ու անփոխարինելի և սերտորեն կապված ողջ ստեղծագործությանը: Ամբողջի և մասի հարաբերակցության այս դրույթը մասնավորապես կարևորվում է տեքստի մեկնաբանության հերմենևտիկ շրջանի շլայերմախերյան տեսության համատեքստում, համաձայն որի՝ հասկացման գործընթացում մեկնաբանը ամբողջի ներըմբռնողականորեն ընկալված նախնական իմաստից անցում է կատարում դեպի առանձին մասերի ընկալում և հասկացում և ապա, ելնելով այդ մասերի վերլուծական ըմբռնման արդյունքից, նորովի ձևավորում ստեղծագործության ընդհանուր իմաստը: Ընդ որում՝ մեկնաբանի ուշադրությունը տեղափոխվում է մասից դեպի ընդհանուրը համեմատությունների, ինտուիցիայի միջոցով և հակառակը՝ ամբողջից դեպի մասը՝ այն կրկին մեկնաբանելու համար: Հետևաբար, մեկնաբանությունը մշտապես պահանջում է վերամեկնաբանություն: Սակայն, երբ ընթերցողը վերադառնում է մասնավորին, այն այլևս այնպիսին չէ, ինչպիսին թվում էր, քանի որ այն փոփոխության է ենթարկվել ընթերցողի կողմից ամբողջ տեքստի նորովի ընկալման շնորհիվ: Ստացվում է, որ հայտնի հերմենևտիկ շրջանը, ըստ էության, ավելի շուտ հերմենևտիկ պարույր է, որտեղից էլ կարելի է եզրակացնել, որ երբեք չի կարող խոսք լինել որևէ տեքստի բացարձակ մեկնաբանության մասին, քանի որ պարույրը անվերջ կոր է և, ի տարբերություն շրջանի, չի հատվում որևիցե կետում⁷:

Տեքստի լեզվական առանձնահատկությունների քննության առումով՝ Ֆ. Շլայերմախերի հերմենևտիկական սեփական մոտեցումն էր առաջարկում՝ կարևորելով ոչ միայն առանձին բառերի և արտահայտությունների իմաստի հասկացումը, այլև այն տեղը, որ դրանք զբա-

⁶ Տե՛ս **A. W. Schlegel**, *Kritische Schriften und Briefe*. Stuttgart, 1963, էջ 81:

⁷ Տե՛ս **L. Spitzer**, *Linguistics and Literary History*. New York, 1948, *Beurande*, Dressler, 1981, էջ 35, **I. Maclean**, *Reading and Interpretation // Modern Literary Theory: A Comparative Introduction*. London, B. T. Batsford, 1988:

դեցնում են ամբողջ համատեքստում և ստեղծագործության կառուցվածքում ընդհանրապես: Մա էլ է բխում հերմենևտիկայի առանցքային սկզբունքից՝ հասկանալ տեքստն ամբողջությամբ և ըմբռնել յուրաքանչյուր բառի իմաստը տեքստի մյուս մասերի հետ հարաբերության մեջ, քանի որ յուրաքանչյուր բառիմաստ որոշարկվում է կոնկրետ տեղում համատեքստի հետ իր հարաբերությամբ⁸:

Ֆ. Շլայերմախերի հերմենևտիկան կարելի է համարել բանասիրական հերմենևտիկայի հիմքը, քանի որ լեզուն նրա տեսության հիմնական գաղափարն է: Նա պնդում է, որ ընկալումը փաստորեն հենց լեզվի ընկալումն է, քանի որ մարդու մտածողությունն ու աշխարհայացքն էլ ձևավորվում և արտահայտվում են լեզվի միջոցով:

Հետաքրքրական են Ֆ. Շլայերմախերի մոտեցումները սուբյեկտիվության խնդրին. նա խոսքը իրավամբ համարում է առանձին սուբյեկտի ստեղծագործության արդյունք: Բոլոր լեզվական գործընթացները տեղի են ունենում առանձին սուբյեկտի գիտակցության մեջ, և չնայած ընդհանուր լեզվական առանձնահատկություններին՝ լեզվական գործունեությունը միշտ էլ անհատական է: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ հենց լեզուն է անհատական, այսինքն՝ սուբյեկտիվ խոսքի մեկնաբանության օբյեկտիվ հիմքը⁹:

Ըստ Ֆ. Շլայերմախերի՝ ընկալել նշանակում է վերարտադրել հեղինակի մտավոր գործընթացները, իհարկե՝ հակառակ հաջորդականությամբ: Ընկալման գործընթացը սկսվում է այն պահից, երբ ձեռքդ ես առնում պատրաստի և ավարտուն ստեղծագործությունը և շարժվում դեպի դրա սկզբնագաղափարը¹⁰: Այդուհանդերձ, եթե հեղինակի արարման գործընթացում անգիտակցականն է իշխում, ապա տեքստի մեկնաբանը պարտավոր է ենթարկվել գիտակցականի գերիշխանությանը: Եվ քանի որ տեքստում առկա ցանկացած գաղափար մարմնավորվում ու նյութականանում է լեզվի միջոցով, ապա ցանկացած ստեղծագործության մեջ հենց լեզվական հայեցակերպն է, որ առավելագույն ուշադրություն է պահանջում: Սակայն մեկնաբանությունը չի կարող լիարժեք համարվել, եթե այն սահմանափակվի տեքստի միայն լեզվական նյութի ուսումնասիրությամբ: Այդ էր պատճառը, որ տեքստի առավելագույն ընկալման, հասկացման ու մեկնաբանության հասնելու իր որոնումներում Շլայերմախերն առաջ քաշեց, այսպես կոչված, քերականական և հոգեբանական մեկնաբանությունների անհրաժեշտության գաղափարը, որը միտված էր քննելու ստեղծագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հայեցակերպերը և բացահայտելու դրանց փոխադարձ կապը¹¹:

⁸ Տե՛ս **Fr. Schleiermacher**, Hermeneutik und Kritik mit besonderer Beziehung auf das Neue Testament. Berlin, Reimer, 1838, էջ 69:

⁹ Տե՛ս **K. Vossler**, Sprache als Schopfung und Entwicklung. Heidelberg, 1905, էջ 14:

¹⁰ Տե՛ս **Fr. Schleiermacher**, նշվ. աշխ., էջ 78:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

Մեր ուսումնասիրություններում¹² հանգել ենք այն համոզման, որ էլնելով գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության հերմենևտիկ մոտեցման այս ընդհանուր և հիմնարար դրույթների կարևորությունից և հաշվի առնելով վերջին տասնամյակների ընթացքում մշակված ու մեծ արդյունավետությամբ գործարկված՝ տեքստի վերլուծության տարբեր մեթոդների համակցված կիրառության հուսալիությունը՝ գեղարվեստական ստեղծագործության հնարավոր լիարժեք մեկնաբանության հասնելու համար անհրաժեշտ է հերմենևտիկ մոտեցման կիրարկման կոնկրետ մեթոդաբանական մեխանիզմ: Մեր համոզմամբ՝ գեղարվեստական ստեղծագործության ընկալման, հասկացման ու մեկնաբանության բարդ գործընթացը կարող է իրականացվել փուլ առ փուլ: Ամենանախնական, ստորին, բայց և անխուսափելի փուլը, այսպես կոչված, աքսիոլոգիականն է, որը ստեղծագործության՝ զգայական ընկալման վրա հիմնված արժևորումն է: Հաջորդ փուլը ստեղծագործության լեզվական հայեցակերպի ընկալումն ու հասկացումն է: Ընդ որում՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ստեղծագործության լեզվական հայեցակերպի հասկացման կարելի է հասնել լեզվաոճական քննությամբ, որն իրականացվում է վերլուծության երկու մակարդակում՝ իմաստային և վերնշանային: Իմաստային մակարդակում տեքստը կազմող բոլոր հնարավոր լեզվական միավորները քննության են առնվում որպես լեզվական համակարգի տարրեր, վեր են հանվում դրանց համակարգային յուրահատկությունները: Քննության հաջորդ մակարդակը վերնշանայինն է, որը չունի իր սեփական արտահայտության պլանը: Այստեղ ոճական այս կամ այն մետաբովանդակությունն արտահայտելու համար որպես ձև է ծառայում իմաստային մակարդակի ձևի ու բովանդակության միասնական ամբողջությունը: Վերլուծությունն այս մակարդակում միտված է բացահայտելու լեզվական միավորների ոճավորված կիրառությունները, լրացուցիչ հուզաարտահայտչական երանգների առկայությունը, ոճական տարաբնույթ հնարների գործածությունները:

Այսպիսով՝ լեզվաոճական վերլուծության մեթոդի կիրառմամբ բացահայտվում է լեզու - խոսք հարաբերակցությունը, որն ընկած է ցանկացած, այդ թվում նաև գեղարվեստական տեքստի հիմքում: Մակարևոր, թեև ոչ բավարար փուլ է ստեղծագործության ընկալման, հասկացման ու մեկնաբանման գործընթացում¹³:

Հայտնի է սակայն, որ այս գործընթացի վերջնանպատակը երկի

¹² Տե՛ս **S. Gasparyan**, *The Recreation of Symbolic Images in Literature. //In Search of (Non) Sense.* / Ed., Elzbieta Chrzanowska-Kluczevska, Grzegorz Szpila. Newcastle upon Tyne: Cambridge Scholars Publishing, 2009, էջ 65-74, **S. Gasparyan**, *On Objectivity in Understanding Verbal Art. // The Knowledge of Literature.* Vol. V. / Ed. Angela Locatelli. Bergamo: Bergamo University Press, 2006, էջ 67-72 և այլն:

¹³ Տե՛ս **Гаспарян С. К.** Лингвопоэтика образного сравнения. Ер., 2008, էջ 27-35:

գաղափարական նպատակադրումը, հեղինակի մտադրությունը վեր հանելն է, որին, ինչպես պարզվում է, խոսքի (ռճի) մակարդակից մի ցատկով հասնելն անհնար է: Սա նշանակում է, որ հետազոտողը դեռ ճանապարհ ունի անցնելու, և այդ ուղին անցնում է հեղինակի լեզվապոետիկայի դաշտով՝ ոլորտ, որի քննությունը նպատակամիտված է բացահայտելու հեղինակի պոետիկայի և նրա լեզվի սերտ կապով ու փոխհարաբերակցությամբ ապահովվող գեղագիտական ազդեցությունը: Սա ենթադրում է քննության առավել բարձր մակարդակ, որը և իրականացվում է լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդի կիրառությամբ¹⁴:

Այս ամենով հանդերձ՝ ակնհայտ է, որ թե՛ լեզվաոճական և թե՛ լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդները միտված են ուսումնասիրելու ստեղծագործության ձևի յուրահատկությունները: Մինչդեռ հնարավոր լիարժեք հասկացումն ու մեկնաբանությունը ձևի և բովանդակության միասնական ընկալումն է, որը, ինչպես արդեն նշել ենք, ընդգրկում է նաև գրական երկի գաղափարական բովանդակությունն ու հեղինակի մտադրությունը: Սրանց բացահայտումը կարելի է իրականացնել ուսումնասիրության մետամետա (վեր-վերնշանային) մակարդակում, որն ըստ էության գրականագիտության ոլորտում է:

Գեղարվեստական ստեղծագործության ընկալման, հասկացման ու մեկնաբանության գործընթացն իրականացնելու այս ուրվագիծը, մեր համոզմամբ, արդարացված է: Այն մի կողմից շեշտադրում է լեզվաբանության ու գրականագիտության փոխգործակցության արդյունավետությունը բանասիրության բնագավառում, մյուս կողմից կոնկրետ ու հուսալի մեթոդական մեխանիզմ է ապահովում հերմենևտիկ մոտեցումը գործարկելու համար:

Բանալի բառեր – գեղարվեստական ստեղծագործություն, հասկացում, հերմենևտիկ մոտեցում, մեթոդաբանական մեխանիզմ, լեզվաոճական վերլուծություն, լեզվաբանաստեղծական վերլուծություն

СЕДА ГАСПАРИЯН – Герменевтика как методология интерпретации словесно-художественного творчества. – Статья посвящена теоретическому аспекту одного из основных вопросов филологии – восприятия и понимания словесно-художественного произведения. Роль герменевтического подхода к изучению художественной литературы незаменима, поскольку он обеспечивает её возможно полное восприятие. Такие важнейшие категории произведения, как воображение, языковой код и способность читателя разделить авторские переживания, рассматриваются на фоне основных положений герменевтики, в частности теории герменевтического круга Шлайермахера. Понимание художественного произведения – сложный поэтапный процесс, а надёжность герменевтического подхода обеспечивается аналитическим (лингвостилистическим, литературоведческим)

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 36-41, նաև՝ **Գասպարյան Ս. Կ.** Բնալի մեթոդը հայ գեղարվեստագիտության մեթոդաբանության մեջ: Եր., 2013, էջ 162-240:

механизмом. Первый тип анализа раскрывает соотношение языка и речи, лежащее в основе любого текста, второй тип анализа выявляет эстетическое воздействие произведения на читателя. Литературоведческое же осмысление раскрывает идейное содержание произведения и авторскую интенцию.

Ключевые слова: *словесно-художественное творчество, восприятие и понимание, герменевтический подход, методологический механизм, лингвостилистический анализ, лингвопоэтический анализ*

SEDA GASPARYAN – *Hermeneutics as Methodology of Interpreting Works of Verbal Creativity*. – The present theoretical research deals with the question of reading and understanding a work of verbal creativity – a question which has long declared itself to be one of the intricate problems of philology. The paper aims at emphasizing the methodological value of the hermeneutical approach to the study of literature which comes into being due to the presence of three basic components: *imagination, language as a code between the writer and the reader, and the expected ability of the reader to share the author's emotions and thoughts*. Proceeding from the basic statements of hermeneutics and Schleiermacher's theory of hermeneutical circle, in particular, as well as considering the results of our former investigations we come to the conclusion that understanding verbal art is a complex process which is achieved step by step. To provide a reliable mechanism for the application of the hermeneutical approach the investigator has to take the following steps: to reveal the correlation of language and speech with the help of the linguostylistic method of analysis, to understand the aesthetic value of the work built up due to the complex relationship of the linguistic elements used in the work and its poetics which is brought out by the linguopoetic method of analysis and thus come up to the metametasemiotic level of analysis which, in fact, belongs to the sphere of literary studies and helps to reveal the intention of the author and the idea of the work.

Key words: *verbal art, understanding, hermeneutical approach, methodological mechanism, the linguostylistic analysis, the linguopoetic analysis*

**ԱՆՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՅԱՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԿԱՐԳԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼՋԱՏՅԱՆ

Անցողականության և բայական սեռի քերականական կարգերը, ըստ էության, ենթակարգերն են արժույթայնության: Ճիշտ այդպես է քննել նշված ենթակարգերը Լ. Տենիերն իր «Կառուցվածքային շարահյուսության հիմունքներում»¹:

Մեզանում նշված կարգերի (կամ ենթակարգերի) շահեկան քննություն է կատարել Է. Ադայանը, որի՝ հայերենի համար առանձնացրած սեռերի քանակը (վեց սեռ) և տեսակները կարծես հաստատումն են Լ. Տենիերի՝ ընդհանուր լեզվաբանության հայեցակերպով լեզուներում վերհանած հնարավոր սեռերի²:

Մանուկ Աբեղյանից սկսած՝ հայ լեզվաբանության մեջ ընդունված է ներգործական և պատճառական սեռի բայերը համարել անցողական, իսկ մյուս սեռերինը՝ անանցողական³ (այդպես է նաև ռուս լեզվաբանության մեջ)⁴: Այս հարցում Լ. Տենիերի մոտեցումը բոլորովին այլ է: Նա անցողական է համարում բոլոր սեռերի բայերը՝ բացի չեզոքից: Բանն այն է, որ բայասեռով պայմանավորված անցողականության դեպքում քննության է առնվում գործողությունը՝ գործողի և գործողության առարկայի հարաբերությամբ, իսկ գործողը միայն ենթական չէ, և գործողության անցումը նրան ևս կարող է ուղղված լինել⁵:

Անցողականությունը՝ որպես (ենթա)կարգ, հիմնավորվում է «անցողականություն / ոչ անցողականություն» քերայթյունների գոյությամբ և իրացվում է բայի հնարավոր գործորդների (actant) ձգողականության հասկության՝ արժույթայնության շնորհիվ⁶: Լեզվականորեն ներգործական և կրավորական սեռերի համար պարտադիր է երկուական գործորդի առկայություն (հմմտ. երկարժույթ բայեր), պատճառական սեռի համար՝ երկու կամ երեք գործորդի առկայություն (հմմտ. եռարժույթ բայեր), անդրադարձ և փոխադարձ սեռերի համար՝ մեկական գործոր-

¹ Տե՛ս Լ. **Теньер** *Л.* Основы структурного синтаксиса. М., 1988, էջը 250 – 296:

² Տե՛ս Է. **Ադայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջը 320 – 327:

³ Տե՛ս Մ. **Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջը 375 – 379:

⁴ Տե՛ս **Валгина Н., Розенталь Д., Фомина М., Цапукевич В.** Современный русский язык. М., 1962, էջը 221 – 223:

⁵ Տե՛ս Լ. **Теньер** *Л.*, նշվ. աշխ., էջը 254 – 255:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 250:

դի առկայություն (հմմտ. մենարժույթ բայեր), վերջապես չեզոք սեռի համար՝ մեկ կամ զրո գործորդ (հմմտ. անարժույթ կամ արժութագուրկ բայեր): Բաղդատելով պատճառական և ներգործական սեռի բայերը՝ Է. Աղայանն այն տեսակետն է առաջ քաշում, թե ներգործական սեռի բայի հիմնությից բաղադրված պատճառական բայերը պատճառական սեռի են, իսկ չեզոքի հիմնությից կազմվածները՝ պատճառական կամ ներգործական սեռի⁷: Սակայն հայտնի է՝ ներգործական կառուցվածքը կրավորականի փոխակերպելիս առաջինի ենթական երկրորդում դառնում է ներգործող խնդիր, իսկ ներգործական սեռի բայը՝ կրավորական սեռի բայ, մինչդեռ նույնիսկ երկարժույթ պատճառական բայով կառուցվածք ունեցող նախադասության ենթական ոչ թե ներգործող, այլ **պատճառի խնդիր** է դառնում՝ լրացնելով **չեզոք սեռի** բային: Եվ դա շատ լավ ցույց է տալիս Մ. Աբեղյանը հետևյալ օրինակով. «Տիգրանը վախեցրեց Արտաշեսին: Արտաշեսը **վախեցավ Տիգրանից**»⁸: Սա չափազանց լուրջ փաստարկ է, որ մղում է հետազոտողին՝ անցողականությամբ պայմանավորված կառուցվածքային նոր տիպեր վեր հանելու նախադասությունների մեջ: Դիտարկենք երկու օրինակ:

Հմմտ.

Հայրը խմեցնում է պատանի **որդուն**: Հայրն օղի է խմեցնում պատանի **որդուն**:

Ձախակողմյան նախադասության ընդգծված անդամը կարծես կասկած չի հարուցում մասնագետների շրջանում. ուղիղ խնդիր են համարում, այնինչ երկրորդ նախադասության նույն անդամը նույն ոլորտում շատերը համարում են անուղղակի խնդիր:

Այս դրույթն ունի դյուրավ հերքելի իր **հակադրությունները**: Ա) Դիտարկենք հետևյալ օրինակը. «Հայրը, երեխայի ձեռքից բռնած, վազեցնում է նրան»: Հազիվ թե գտնվի մի հայախոս, որ օրինակը մեկնաբանելիս ասի, թե հայրը միայն երեխայի գործողության պատճառն է և չի ազդում որդու վրա: Ավելին. եթե նույնիսկ ձեռքը բռնած էլ չլիներ, այլ միայն փաղաքուշ խոսքով հորդորեր զավակին, որ վազի, դարձյալ **անմիջական ներգործություն կունենար** նրա վրա. կամքի վրա ազդելն ամենից մեծ ներգործությունն է: Վերջապես, եթե համարում ենք, որ «Երեխան գնդակ ունի» նախադասության «ունենա» կայական բայը ներգործում է «նշում», հազիվ թե հնարավոր լինի պատճառականությունից զատել կամ անտես առնել ներգործման թանձր երանգը: Եզրակացությունն այն է, որ պատճառական սեռի կամայական բայ համատեղում է

⁷ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 324: Ավելի ուշ մտավորապես նույն տեսակետն է հայտնում Գ. Ջահուկյանը՝ ասելով, որ երկրորդ դեպքում պատճառականը «գրեթե նույնանում է ներգործականի հետ... այսինքն՝ դրանց տարբերությունը չեզոքանում է» (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը (Համառոտ ուրվագիծ), Եր., 1969, էջ 256): Սակայն պիտի նշենք, որ այս դեպքում խոսք կարող է լինել միայն բովանդակային չեզոքացման մասին:

⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 378:

պատճառականության և ներգործականության իմաստները: Ի տարբերություն բուն ներգործականի՝ **պատճառական սեռը կամագղեցական ներգործական է**: Սրանից էլ բխում է, որ ամեն մի պատճառական սեռի բայ նաև ներգործական սեռի է, մինչդեռ հակառակը, հասկանալիորեն, պնդել չենք կարող: Հետևաբար, մի կողմից՝ սա, մյուս կողմից էլ՝ պատճառական բայերի մեծ մասին հատուկ **միջնորդական** իմաստային երանգը հուշում են, որ այնուամենայնիվ ներգործականից տարբեր սեռի հետ գործ ունենք պատճառական բայերի դեպքում, որն առավել ակնբախ է դառնում շարահյուսական գործառությամբ ու նշույթավորմամբ (այս մասին՝ քիչ հետո): Բ) Ասվածից հետևում է երկրորդ հակադրությունը, որ է՝ **եռարժույթ պատճառական սեռի բայը կարող է ունենալ տարասեռ ուղիղ խնդիրներ՝ անձնանշության քերականական կարգի անձնանիշ և ոչ անձնանիշ քերույթների միաժամանակյա գործառությամբ, դրանց՝ պատճառագրու գործողության միջնորդավորված հարաբերությամբ**: «Հայրը խմեցնում է պատանի *որդուն*» ընդգծված անդամի պաշտոնը՝ տրականաձև ուղիղ խնդիր, չի փոխվում և չի կարող փոխվել «օղի» ուղղականաձև ուղիղ խնդրի հավելումով: Երկու դեպքում էլ նույն պատճառագրու ոլորտում է «որդուն» անդամը: Հարկ է նկատել, որ առնվազն եռարժույթ պատճառական սեռի բայի արժույթային տիրույթը անձնանշության հակադիր բնեռների միաժամանակյա հանդիպման եզակի **ուժեղ դիրքերից** է, որտեղ անձնանիշ և ոչ անձնանիշ եզրերը «դիրքավորված» են **միադասական հարաբերությամբ**⁹, ուստի գտնվում են **չեզոք բաշխման հարաբերության** մեջ: Գ) Երրորդ հակադրությունը պիտի փորձենք հիմնավորել այն վարկածը, թե նախադասության՝ անցողականությամբ պայմանավորված կառուցվածքային տիպերը չեն սահմանափակվում ներգործականով ու կրավորականով: Դիտարկենք հետևյալ օրինակը. «Ուսուցիչն աշակերտին կարդացրեց// կարդալ տվեց դասը»: Նախադասությունը փոխակերպելիս առաջնորդվելու ենք այն տրամաբանությամբ, որ շարահյուսական մեկ այլ կառուցվածք ունեցող փոխակերպն արտահայտի ելակետային կառուցվածքի **նույն** կամ, ավելի հաճախ, **նույնամերձ հաղորդանյութը**: Որպեսզի փոխակերպման արդյունքը հնարավորինս մոտ լինի ելակետային կառուցվածքին, պիտի ունենանք փոխակերպման քիչ թե շատ հստակ քայլեր: Ըստ հաղորդանյութի՝ կարդացնողն ուսուցիչն է, կարդացողը՝ աշակերտը, որի կարդացածը դասն է: Դրա համար մեր ուշադրությունը բնեռում ենք նախադասության միջուկին՝ **գերակային** (բայ-ստորոգյալին՝ ըստ Մ Աբեղյանի)¹⁰: Քանի որ փոխակերպումը

⁹ Միադասական հարաբերության մասին տե՛ս **Գ. Ջահուկյան**, Խոսքի մասերի կադապարային դասակարգումը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 1, էջ 23:

¹⁰ Տե՛ս **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջք 365-366: Տողերիս հեղինակն ընդունում է Մ. Աբեղյանի նախադասության մեկ գլխավոր անդամի տեսությունը, որը Մ. Աբեղյանն

պայմանավորված է միջուկի և նրա շուրջը եղած «ատոմների» գործորդների հարաբերությամբ, ապա փոխակերպումը կսկսենք ապաստորոգացման¹¹ սկզբունքով տրամաբանական երկանդամների արտածմամբ և կշարունակենք շարակազմի մեկական անդամի աստիճանական հավելմամբ՝ հասնելով վերաստորոգացման: Այսպես՝ **I աստիճան՝ երկանդամ շարակազմներ՝** ա) *կարդացած* աշակերտ, բ) դասը-*կարդացած*, գ) *կարդացրած* // *կարդալ տված* ուսուցիչ: **II աստիճան՝ եռանդամ շարակազմներ՝** ա) դասը *կարդացած* աշակերտ, բ) աշակերտին *կարդալ տված* ուսուցիչ: **III աստիճան՝ քառանդամ շարակազմ՝ ուսուցչի տված** դասը *կարդացած* աշակերտ: **IV աստիճան՝ մակերեսային ստորոգակազմ՝ Աշակերտը կարդաց ուսուցչի տված դասը:**

4-րդ աստիճանը փոխակերպման եզրափակիչ փուլն է, որը հենց ներգործական կառուցվածքի արտահայտվածությամբ փոխակերպն է **պատճառական կառուցվածքի:**

Հմնտ.

Աղյուսակ 1

Պատճառական կառուցվածքի նախադասության փոխակերպումը ներգործական կառուցվածքի

ՊՍՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
Ուսուցիչն աշակերտին կարդալ տվեց դասը:	Աշակերտը կարդաց ուսուցչի տված դասը:

Մեր կարծիքով, այս կառուցվածքային յուրահատկությունն ապացուցողական հերքումն է այն բանի, թե պատճառական բայերը նշույթով տարբերակն են ներգործական սեռի բայերի: Առնվազն եռարժույթ պատճառական բայով կազմավորված նախադասության կրավորական կառուցվածքի անցումը տեղի է ունենում աստիճանականորեն՝ միայն պատճառականից ներգործական կառուցվածքի փոխակերպման միջնորդությամբ: Ահա՛ պատկերը.

Ուսուցիչն աշակերտին կարդալ տվեց դասը:→

Աշակերտը կարդաց ուսուցչի տված դասը: →

→ Ուսուցչի տված դասը կարդացվեց աշակերտի կողմից:

Պարտ է մեզ խոստովանել՝ միշտ չէ, որ այսպես հարթ է պատճառական կառուցվածքից ներգործականի փոխակերպումը: Նույնիսկ մեր օրինակում դժվար չէ մատնանշել այս կառուցվածքների ոչ լիակատար համարժեքությունը: Բայց սա էլ հենց պատճառականության ենթա-

անվանում է **բայ-ստորոգյալ**: Ըստ այդմ՝ վերջինիս՝ **ենթակայի** նկատմամբ ունեցած **գերակա հակադրությունը** շեշտելու համար բայ-ստորոգյալին տալիս ենք **գերակա** անվանումը (տե՛ս **Դ. Գյուլաստյան**, Մակերեսային ստորոգական կառուցվածքի բաղադրությունը և գոյամակարդակային շերտավորվածությունը // «Տարեգիրք», գիտական աշխատությունների ժողովածու, Եր., 2006, էջք 124-128):

¹¹ Այս մասին տե՛ս **Ա. Մուրադյան**, Ստորոգական կառույցների ապաստորոգացումը ֆրանսերենում և հայերենում, Եր., 2003, էջք 5-10, 54-56:

կարգի առանձնահատկությունն է, որը փոխակերպումների ժամանակ նվազ խստություն է ենթադրում և հնարավորություն է տալիս պատճառի իմաստին մերձիմաստ բառեր ներմուծելու՝ արտահայտված **դրդել, հանձնարարել, պատճառել, ստիպել** և այլ բայերի հարակատարով կամ նույնարմատ գոյականների գործիականով (**դրդմամբ, պատճառով** նն): Ի տարբերություն ներգործական և կրավորական կառուցվածքների գրեթե մենարժեքության հասած փոխակերպական հնարավորության՝ պատճառական և ներգործական կառուցվածքներում դա տեղի չունի՝ պայմանավորված պատճառական սեռի բայերի բառային իմաստների բազմազանությամբ, և պատահական չէր, որ վերը պատճառական կառուցվածքի փոխակերպման նախնական բնութագրությունը տալիս գործածեցինք «մերձիմաստ հաղորդանյութ» ձևակերպումը: Այսպես՝ եթե մեր բերած **խմեցնել, կարդացնել** օրինակների հանգույն ունենք մի քանի պատճառական բայեր, ինչպիսիք են՝ **հազցնել, հսկացնել, ուտեցնել** նն, որոնցով կազմավորված պատճառական կառուցվածքները հնարավոր է քիչ թե շատ սահուն փոխակերպման ենթարկել, ապա նույն սահունությունը չունենք **հիշեցնել, զգացնել, լսեցնել, ճանաչեցնել** և մի քանի այլ բայերով ձևավորված պատճառական կառուցվածքի փոխակերպումներում: Հապացույց այն բանի, որ բայի տարբեր սեռեր են պատճառայնություն և ներգործայնություն նշող քերականական իրակությունները, բավական է հանդիպադրել դրանցով բաղադրված շարահյուսական կառուցվածքները՝ համապատասխան փոխակերպումներով: Ա) Ներգործական կառուցվածքը փոխակերպվում է միայն կրավորականի, մինչդեռ պատճառական կառուցվածքը՝ կամ ներգործական, կամ չեզոք կառուցվածքի: Բ) Ներգործական կառուցվածքը կրավորականի փոխակերպելիս ներգործական կառուցվածքի ենթական կրավորական կառուցվածքում վերածվում է ներգործող անուղղակի խնդրի, մինչդեռ պատճառական կառուցվածքը չեզոքի փոխակերպելիս երկարժույթ պատճառական բայերի ենթական վերածվում է պատճառի անուղղակի խնդրի, իսկ ներգործականի փոխակերպելիս եռարժույթ բայերի ենթական՝ «կողմնակի» ենթակայի՝ «տալ» բայով ձևավորված դերբայական դարձվածի կազմում (դերբայը՝ հարակատար): Գ) Ներգործական կառուցվածքում բայը միայն մեկ ուղիղ խնդիր է ունենում, որը փոխակերպման ժամանակ կրավորական կառուցվածքում դառնում է ենթակա՝ անկախ անձնանշության կարգից, պատճառական կառուցվածքում երկարժույթ պատճառական բայի միակ ուղիղ խնդիրը նույնպես ենթակա է դառնում, իսկ եռարժույթ պատճառական բայը երկու տարասեռ ուղիղ խնդիր է առնում, որոնցից ենթակա է դառնում անձնանիշը, իսկ ոչ անձնանիշը մնում է նույն կրող խնդրի պաշտոնում: Դ) Ներգործական կառուցվածքը փոխակերպելիս ներգործական սեռի դիմավոր բայը վերածվում է կրավորական սեռի,

իսկ պատճառական կառուցվածքը փոխակերպելիս պատճառական սեռի բայը երկփեղկմամբ փոխակերպվում է ներգործական սեռի և **տալ** բայի հարակատարի, որի ենթակա տիրույթին է անցնում պատճառական կառուցվածքի ենթական:

Անցողականությամբ պայմանավորված քառակառուցվածք այս հանդիպադրությունը եզրափակենք հետաքրքիր մի նկատումով: Պատճառական, ներգործական և կրավորական կառուցվածքներն ինքնին **փոխակերպելիներ** են, սեփական կառուցվածքով իսկ հուշում են, որ ունեն լեզվականորեն տրված **հնարավոր փոխակերպներ**: Մինչդեռ չեզոք կառուցվածքն այդպիսին է մի միայն պատճառական կառուցվածքի հանդիպադրությամբ գուտ իրադրոբեն: Նշված հանդիպադրությունից դուրս **չեզոք կառուցվածքը չեզոքանում է**: Այսինքն՝ չեզոք սեռը, ինքնին վերցրած, պատճառական կառուցվածքի համապատասխան բայի հանդիպադրությունից դուրս անմասն է անցողականության կարգին:

Այժմ փորձենք պարզել՝ ինչ հարաբերություն ունի անցողականությունը անդրադարձ և փոխադարձ սեռի բայերի հետ: Վերն ասացինք, որ անցողականությունը պայմանավորված է գործողի և գործողության առարկայի հարաբերությամբ: Արդ՝ կա՞ գործողության առարկա **սանրվել, կովել, համբուրվել, հարդարվել, ողջագուրվել, լվացվել** և այս կարգի այլ բայերի ձգողական դաշտում: Արտահայտության ոլորտում կրավորականություն հիշեցնող սեռային արտահայտություն կա բերված բայերի մեջ: Սակայն առեղծվածորեն **վ** կրավորական ածանցով ներգործականության իմաստ է հաղորդվում այս բայերին, այլ կերպ ասած՝ տեղի է ունենում **ներգործական և կրավորական եզրերի բովանդակային հակադրության չեզոքացում**, քանի որ **սանրվել**-ը նշանակում է ինքն իրեն **սանրել**, ինչպես նաև **համբուրվել**-ն ընկալվում է ոչ թե **{նրանք համբուրվում են միմյանց կողմից}*, այլ որպես **{նրանք համբուրում են միմյանց}*՝ իբրև փոխադարձ **ներգործության** արտահայտություն:

Ի մի բերելով ցարդ ասվածները՝ պարզում ենք, որ **անցողականությունը գործողությամբ պայմանավորված միջառարկայական հարաբերություն է**, այն է՝ **գործողության անցումը ենթակային կամ խնդրին**, այլ կերպ ասած՝ **անցողականությունը ենթակայի և խնդրի հարաբերությունն է՝ գերակայի միջնորդությամբ**: Քանի որ նախաստույթան միջուկային (առաջնային) երկանդամն են կազմում գերական և ենթական, ուստի գործողության շարժման **նշանային ուղղվածությունը** որոշում ենք քերականական ենթակայից: Ըստ այդմ՝ ունենում ենք **արտակենտրոն, առկենտրոն և ներկենտրոն** անցումներ: Առաջին երկուսի դեպքում գործ ունենք **տարանցման** կամ **այլանցման**, վերջին դեպքում՝ **ինքնանցման** հետ: Բուն տարանցումը գործում է պատճառական և ներգործական կառուցվածքներում, որոնցից պատճառականի եռարժույթ բայերի պարագայում առկա է **զուգանցումն** առ տարասեռ

ուղիղ խնդիրներ: Տարանցման մի դրսևորումը կա կրավորական կառուցվածքում, սակայն քանի որ շարժման ելակետ ենք դիտում նախադասության ենթական, ապա այն կանվանենք **հականցում**՝ շարժում դեպի կենտրոն (առկենտրոն անցում): Անդրադարձ բայերն օժտված են **ինքնանցման** հատկությամբ, որ է ներկենտրոնությունը: Փոխադարձ սեռի բայերը տարանցման երկու հակադիր ուղղությամբ են դրսևորվում: Մի դեպքում դա փոխադարձ անցումն է՝ փոխներգործությունը կամ փոխտարանցումը, որ անվանում ենք **խաչանցում**, մյուս դեպքում՝ փոխադարձաբար բաժանական / անջատական գործողությունը կամ եղելությունը, հմմտ. **նրանք բաժանվեցին**: Այս վերջինն ըստ էության **փոխանդադարձականություն** է, որ անվանում ենք **փոխզատանցում** կամ **փոխինքնանցում**: Հականցում ունենք նաև չեզոք կառուցվածքի՝ միայն որպես պատճառական կառուցվածքի փոխակերպի դեպքում, վերջինիս հանդիպադրությամբ: Մնացած դեպքերում չեզոք սեռի բայերն ունեն **զրոյական անցում**: **Անանցողականության** միակ դաշտը չեզոքության տիրույթում է:

Համփոփումն ասվածի՝ անցողականության և բայասեռի հարաբերակցությունը կարելի է պատկերել 2-րդ աղյուսակով:

Աղյուսակ 2

Անցողականության և բայասեռի տիպաբանական հարաբերակցությունը

Բայասեռ	Ա ն ց ո ղ ա կ ա ն ո յ ո ն								
	Տարանցում	Զուգանցում	Հականցում	Խաչանցում	Ինքնանցում	Փոխզատանցում	Արտակենտրոն անցում	Առկենտրոն անցում	Ներկենտրոն անցում
Պատճառական	+	+	-	-	-	-	+	-	-
Ներգործական	+	-	-	-	-	-	+	-	-
Կրավորական	+	-	+	-	-	-	-	+	-
Փոխադարձ	+	-	-	+	+/-	+	+	-/+	-
Անդրադարձ	-	-	-	-	+	-	-	-	+
Չեզոք	-/+	-	-/+	-	-	-	-/+	-	-

Բանալի բառեր – անցողական և անանցողական բայեր, պատճառական սեռ, պատճառական կառուցվածք, ներգործական կառուցվածք, կրավորական կառուցվածք, չեզոք կառուցվածք, տարանցում, հականցում, խաչանցում, ինքնանցում, զրոյական անցում

ДАВИД ГЮЛЬЗАТЯН – Типология грамматических категорий переходности и глагольного залога. – Переходность и грамматическая категория залога – это, по существу, подсистемы категории валентности, что наглядно показано в работе Л. Теньера «Основы структурного синтаксиса». В армянской лингвистике,

начиная с М. Абегиана, переходными считаются каузативы и глаголы активного залога, все остальные – непереходными. Действие может быть направлено от подлежащего к другому предмету, от последнего – к подлежащему (а также от подлежащего к самому себе). При этом Л. Теньер считает непереходными лишь одновалентные глаголы среднего залога. Его концепция в статье разделяется. В случае с каузативами и глаголами активного залога переходность проявляется как экзотранзиция, в случае со страдательным залогом – как контртранзиция, в случае отражения – как автотранзиция, в случае рецепции – как кросс-транзиция, в средней позиции – как нулевая транзиция. К активным и страдательным типам предложения, обусловленным глагольным залогом, добавляются ещё два. Такая классификация продиктована необходимостью уровневой трансформации структур.

Ключевые слова: *переходность, категория залога, валентность, каузатив, одновалентные глаголы среднего залога, залоговые трансформации, экзотранзиция, контртранзиция, автотранзиция*

DAVID GYULZATYAN – *Typology of the Grammatical Categories of Transitivity and the Voice of the Verb.* – The grammatical categories of transitivity and the verbal voice are in essence subordinate to the category of valency. The position has been clearly presented by L. Tenier in his “Basics of Structural Syntax”. In the Armenian linguistics, beginning with M. Abeghyan, transitivity is attributed to the verbs of the causative and active voice, the rest being considered intransitive. The rationale is the direction of the action from the subject (towards an object). In reality, however, the action may pass both from the subject to another object and from the latter to the subject (also, from the subject to itself). With such an approach to the issue, L. Tenier considers only the univalent verbs of the middle voice as intransitive. Based on this proposition, we typify transitions according to the voice of the verb. Thus, for causative and active verbs the transition is outbound, for passive verbs the transition is inbound, for the reflexive voice the transition is automotive, for the verbs in the reciprocal voice the transition is cross-over, while, for those in the middle voice, there is a zero transition. To the active and passive types of sentences, as determined by the voice of the main verb, we hereby add two more types: causative-structured and middle-voice-structured. This is not discretionary, rather, it is necessitated by the gradual transition of structures. In the Armenian language, the causative structure, if its main causative verb is formed from the active voice, transforms into the active structure and, if its main causative verb is formed from the middle voice, transforms into the middle-voice structure. However, a transformation from the causative to the passive structure is possible only by an intermediary transformation into the active structure.

Key words: *transitivity, grammatical category of voice, valency, valency, causative, monovalent verbs of middle voice, voice transformations, zero transition, causative-structured, middle-voice-structured*

ԱԾԱԿԱՆԻ՝ -ԳՈՒՅՆ ՄԱՍՆԻԿՈՎ ԿԱԶՄՎՈՂ ԳԵՐԱԴՐԱԿԱՆԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Հայտնի է, որ ածականը ժամանակակից հայերենում ունի համեմատության երեք աստիճան՝ *դրական*, *բաղդատական* (*համեմատական*) և *գերադրական*: Համեմատության այս երեք աստիճանները կային թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում, սակայն լեզվի զարգացման ընթացքում փոփոխվել են նրանց կազմության ձևերը:

Գրաբարում բաղդատականը կազմվում էր առավելապես *-գոյն* մասնիկով՝ *մեծագոյն*, *լավագոյն* և այլն, բայց կարող էր կազմվել նաև նկարագրական եղանակով, ինչպես՝ *լաւ քան գնա* և այլն: Գերադրական աստիճանը արտահայտվում էր *յոյժ*, *կարի*, *անհնարին*, *սաստիկ* և այլ բառերով: Ժամանակակից հայերենում փոխվել է *-գոյն* (*-գույն*) մասնիկի գործառույթը. նրանով այժմ կազմվում է ածականի գերադրական աստիճանը: Պետք է նշել, սակայն, որ դեռևս գրաբարում առանձին դեպքերում հանդիպում են *-գոյն* մասնիկով կազմություններ, որոնք գերադրականի արժեք ունեն¹:

Աստիճանաբար դուրս են մղվում *-գոյն* մասնիկով ձևերը, թեև ուշ շրջանում էլ, երբ արդեն ձևավորվել էր միջին հայերենը, դեռևս հանդիպում են կիրառություններ նաև մակբայական իմաստով և բաղդատականի նշանակությամբ, ինչպես. «-Ո՛վ որդեակք, բազում գանձ կայ պահեալ ի հարցն իմոց յայգին մեր, իսկ գտեղին ոչ ցուցանեմ ձեզ, այլ որ աշխատի և *խորագոյն* փորէ, նա գտանէ զգանձն» (Վարդան Այգեկցի):

Խոսելով *քան*-ով և *-գոյն*-ով կազմվող ձևերի մասին՝ Հր. Աճառյանը գրում է. «Միջին դարերում երկու ձևերը կողք կողքի գործածվում էին, բայց թվում է, թե *-գույն* վերջավորությամբ բաղդատականները ավելի վերամբարձ էին, իսկ *քան* նախադրությամբ ձևերը ավելի պարզ ու սովորական:Միջին կամ Կիլիկյան հայերենում *-գույն* մասնիկը վերացավ, և նրա փոխարեն դրվեց *այլ* «ավելի» մակբայը՝ դրական ածականի վրա, իսկ համեմատելի բառը ստանում է *քան*, *քանց* նախադրությունը»²:

Այսուհանդերձ, *-գույն* բաղդարիչը՝ որպես ածականների գերադրական աստիճանի կազմիչ, պահպանվում է մինչև հիմա: Գ. Գարե-

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 59:

² Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Եր., 1952, էջ 64:

գինյանը այս մասնիկի գործածության վերաբերյալ գրում է. «Գերադրականի *գույն* մասնիկը, որ նախատվետական շրջանում էլ կենսունակ չէր, սկսեց ևս իր դիրքերը զիջել և հանդես գալ միմիայն որոշակի բառերի հետ՝ նույնիսկ հաճախ զրկվելով գերադրականի բուն նշանակությունից և հանդես գալով երբեմն բաղդատական աստիճանի արժեքով: ...Հենց *գույն* մասնիկի իմաստի թուլացումն է պատճառը, որ վերջերս սկսեցին տարածվել գերադրականի կրկնակի մասնիկներով ձևեր (ամենա...գույն), ինչպես՝ *ամենաբարձրագույն, ամենալավագույն, ամենաթեթևագույն* (բոնցքամարտիկի ամենացածր քաշի համար, որին հաջորդում է թեթևագույն քաշը), գործածական են նաև *ամենավատթարագույն, ամենակարծրագույն, ամենադառնագույն, ամենաազնվագույն և նման ձևեր*»³: Փաստորեն, գրաբարյան շրջանից հետո *-գույն* բաղդադրիչով գերադրականները միշտ էլ սահմանափակ կիրառություն են ունեցել, բայց դրանով հանդերձ դուրս չեն եկել գործածությունից և իմաստային ու կիրառական որոշ փոփոխություններով շարունակել են իրենց գոյությունը: Իրոք, իմաստի թուլացում կա, և գործածվում են նաև *ամենա...գույն* կազմությամբ ածականներ, բայց *-գույն* բաղդադրիչով կազմված ածականների՝ բաղդատականի իմաստով կիրառություններ մենք չգտանք, և վերը նշված ուսումնասիրության մեջ էլ այդպիսիք բերված չեն: Դրանց մասին խոսում է նաև Հ. Օհանյանը: Նշելով, որ *-գույն* բաղդադրիչով կազմվում է սահմանափակ քանակով ածականների գերադրական աստիճանը՝ նա գրում է. «Ժամանակակից հայերենում (*ա*)*գույն* ածանցը, բաղդադրվելով ածականի ուղիղ ձևին, երբեմն արտահայտում է ոչ թե գերադրական, այլ բաղդատական աստիճանի նշանակություն: Ավելի ճիշտ՝ այդ ածանցով կազմված ածականները միաժամանակ և՛ գերադրական, և՛ բաղդատական աստիճանի նշանակություն ունեն: Այսպես՝ թանձրագույն կարող է նշանակել ամենաթանձր և ավելի թանձր, նորագույն՝ ամենանոր և ավելի նոր, այդպես են նաև փոքրագույն, նվազագույն, դառնագույն, մերձավորագույն, խոշորագույն, պնդագույն, համեստագույն և այլն»⁴: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում էլ բնագրային օրինակներ չեն բերվում, որովհետև բաղդատականի գրաբարյան իմաստը այլևս չի դրսևորվում, և նման կիրառություններ ժամանակակից հայերենին բնորոշ չեն: Ի դեպ, պետք է նշել, որ *-գույն*-ը շատ աշխատություններում է համարվում ածանց: Բայց եթե ածականի համեմատության աստիճանների դրսևորումը քերականական կարգ է, ապա *-գույն*-ն էլ քերականական կարգի ցուցիչ է: Հենց վերը մեջբերված հատվածին նախորդող մասում էլ գերադրականի կազմության վերաբերյալ գրված է. «Ածականի ուղիղ

³ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Եր., 1973, էջ 352-353:

⁴ Մ. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 161:

ձևին բաղադրվում է (*ա*)*գույն* վերջածանցը: Գերադրականի կազմության այս եղանակը ձևաբանական է և իբրև այդպիսին գրեթե միակն է գերադրականի կազմության բազմաթիվ ձևերի մեջ»⁵: Միգուցե պետք է նշվի, որ *-գույն* մասնիկն իր մեջ ամփոփում է թե՛ ածանցին, թե՛ քերականական մասնիկին բնորոշ հատկանիշներ, քանի որ վիճահարույց է նաև այն, թե ածականի համեմատության աստիճանների ձևերը ինքնուրույն բառե՞ր են, թե՞ բառաձևեր: Այս հարցի վերաբերյալ Ալ. Մարգարյանը հետևյալ դիրքորոշումն է արտահայտում. «Ածականի համեմատության գերադրական աստիճանը կազմող ձևերը նույնպես բառաքերականական միավորներ են, ուստի և ոչ միայն ձևաբանական-քերականական, այլև բառային իմաստով են հատկանշվում և, իբրև այդպիսիք, լիիրավ լիարժեք բառեր են և անպայման պետք է ներկայացվեն բառարաններում: Մինչդեռ եթե գրաբարի բառարանագիրները հենց այդպես էլ վարվել են, ապա ժամանակակից հայոց լեզվի բառարաններ կազմողները, դրանք ինքնուրույն բառային միավորներ չհամարելով, անտեսել ու չեն արտացոլել նրանցում»⁶:

Ինչ վերաբերում է *ամենա...գույն* կազմությամբ ածականների կիրառությանը, ապա դրանք սովորաբար համարվում են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ոչ ճիշտ ձևեր⁷ (բացի մարզական տերմինի արժեք ձեռք բերած ձևերից), թեև լեզվաբանների մի մասը դրանք մերժելի չի համարում: Մ. Ասատրյանը դրանց մասին գրում է հետևյալը. «Երբեմն *գույն* վերջածանցը կարծես թե չի արտահայտում գերադրականի նշանակություն: Այս է պատճառը, որ *գույն* վերջածանց ունեցող ածականները ևս կարող են բաղադրվել *ամենա* ձևի հետ, ինչպես՝ «Նա իմ *ամենալավագույն* ընկերն է». «Վերլուծությունը կատարված է *ամենանորագույն* մեթոդներով»⁸:

Այստեղ նպատակ չունենալով քննել ածականի համեմատության աստիճանների կազմության զարգացման ընթացքը՝ անդրադառնանք միայն ժամանակակից հայերենում *-գույն* բաղադրիչով կազմվող գերադրականների իմաստային մի առանձնահատկությանը: Մակայն մինչ այդ տեղին ենք համարում մեջբերել Մ. Աբրահամյանի մի դիտարկումը: Որակական ածականների համեմատության աստիճանները քննելիս նա գրում է. «Պետք է ածականի համեմատության աստիճանը որպես ածականի ձևաբանական կարգ, տարբերել առարկայի հատկության տարբեր չափերի, աստիճանի նկարագրական արտահայտություններից: Այսպես, կան մի շարք բառեր ու բառակապակցություններ, այլև շարահյուսական կառույցներ, որոնց շնորհիվ նկարա-

⁵ Նույն տեղում, էջ 160:

⁶ Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Եր., 2004, էջ 210:

⁷ Տե՛ս Մ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 167:

⁸ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2002, էջ 137:

գրական եղանակով կարող են արտահայտվել առարկայի հատկանիշի տարբեր չափեր: Ինչպես՝ *պակաս, նվազ, քիչ, մի քիչ...* և այլն: Համեմատության աստիճանի իմաստ կարող է արտահայտվել նաև *բացառական հոլով+ածական, ածական+(օժանդակ բայ)+քան...* կառույցներով: ...Այսպիսի դեպքերում ածականը դրական աստիճանի է, նշված միջոցներով արտահայտված հատկանիշի տարբեր չափերի իմաստը խոսքային երևույթ է, որ վերաբերում է ոչ թե հատկապես ածականին, այլ համապատասխան շարահյուսական կապակցություններին»⁹: Այս տարբերակումը կարևոր է ածականի համեմատության աստիճանների՝ որպես քերականական կարգի սահմանազատման համար:

Ժամանակակից հայերենում որակական ածականների գերադրական աստիճանը կարող է կազմվել *ամենից* բառով, *ամենա-* և *-գույն* բաղադրիչներով, ինչպես՝ *ամենից մեծ, ամենամեծ, մեծագույն*: Եթե առաջին երկու ձևով հնարավոր է կազմել համեմատության աստիճաններ ունեցող բոլոր ածականների գերադրականը, ապա *-գույն*-ով սահմանափակ քանակով ածականների գերադրականն է կազմվում: Սրա պատճառը Գ. Ջահուկյանը համարում է այն, որ *-գույն*-ով կազմվող ձևերը գալիս են գրաբարից և բնորոշ չեն ժողովրդախոսակցական լեզվին: Քննելով *ամենա-* և *-գույն* բաղադրիչներով գերադրականների կազմությունը՝ նա գրում է. «Այս երկու կաղապարների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին կաղապարն ավելի ընդհանրական է և ոճականորեն չեզոք. երկրորդ կաղապարը գործում է միայն որոշ կարգի՝ հնից եկող (գրաբարին ևս հատուկ), բայց ոչ ժողովրդական-բարբառային ածականների դեպքում. *չաղագույն, ազիզագույն* տիպի ձևեր հնարավոր չեն»¹⁰: Ինչպես նշվեց, դեռ միջին շրջանի մասին Հր. Աճառյանը գրում է, թե «*-գույն* վերջավորությամբ բաղադատականները ավելի վերամբարձ էին»:

Հաշվի առնելով վերն ասվածները՝ *-գույն* բաղադրիչով կազմվող գերադրականների վերաբերյալ հնարավոր է նշել երկու էական առանձնահատկություն.

ա) ժամանակակից հայերենում այս բաղադրիչով կազմվում է սահմանափակ թվով ածականների գերադրական աստիճան. դրանցից են՝ *ազնիվ, լավ, խիստ, խոշոր, ծանր, կոպիտ, հզոր, հին, մեծ, նոր, նվազ, պարզ, վատ* և այլն.

բ) այս բաղադրիչով կազմվող գերադրականները բնորոշ չեն ժողովրդախոսակցական ոճին:

Այս դիտարկումներն անշուշտ ճիշտ են և հիմնավորված, սակայն *-գույն* բաղադրիչով գերադրականներն ունեն նաև մեկ այլ առանձնահատկություն, որին կանդրադառնանք:

⁹ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 167:

¹⁰ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 311:

Ուսումնասիրողները սովորաբար համեմատում են *-գույն* և *ամենա-* բաղադրիչներով կազմվող գերադրականների իմաստային հարաբերությունը և նշում, որ *-գույն* բաղադրիչով կազմվող գերադրականները արտահայտում են հատկանիշի բարձրագույն աստիճան առանց համեմատության¹¹: Բայց գերադրականի երկու ձևերը տարբերվում են նաև մեկ այլ հատկանիշով, որն առնչվում է դրանց իմաստային հարաբերությանը: Թեև այս երկու բաղադրիչները քերականական միևնույն իրողության, այսինքն՝ որակական ածականի գերադրական աստիճանի արտահայտիչներ են, սակայն նրանցով կազմվող ձևերը մեծ մասամբ իրենց արտահայտած իմաստներով տարբեր են: Սովորաբար, եթե քերականական միևնույն կարգը կազմվում է տարբեր մասնիկներով, ապա դրանք իրարից ոճականորեն են տարբերվում: Օրինակ՝ գոյականի հոլովման համակարգում առկա *արյունով-արյամբ, մեծությունով-մեծությամբ* ձևերի տարբերությունը առաջին հերթին ոճական է, մասամբ էլ՝ կիրառական, որը պայմանավորված է հենց ոճական տարբերությունով:

Առաջին հայացքից թվում է, թե ածականի *-գույն* և *ամենա-* բաղադրիչներով կազմվող գերադրականների դեպքում էլ նույնը պետք է լինի, և, ասենք, *ամենանոր* և *նորագույն* ձևերը պետք է որ համարժեք լինեն և տարբերվեն միայն ոճականորեն, սակայն այս դեպքում ոճական տարբերությունն ի վերջո հանգեցրել է իմաստային էական տարբերության, որի հետևանքով էլ առաջ է եկել կիրառական տարբերություն: Այսպես՝ *ամենանոր* գերադրականը կարող է որոշիչ դառնալ բազմաթիվ գոյականների համար, ինչպես՝ *ամենանոր հագուստը // կահույքը // շենքը* և այլն, մինչդեռ *նորագույն պատմություն // գրականություն* կապակցություններում այն չի փոխարինում *նորագույն* ձևին և հակառակը: Նույն ձևով՝ գործածական են *խորագույն հարգանք, բարձրագույն կրթություն, հնագույն վկայություն, ծանրագույն հանցանք* և այլ կապակցություններ, բայց *ամենախոր փոսը, ամենաբարձր շենքը, ամենահին տունը, ամենածանր քարը*, և բերված երկրորդ կապակցություններում չեն գործածվի *-գույն* բաղադրիչով կազմված գերադրականները: Այսինքն՝ *-գույն* բաղադրիչով կազմված գերադրականները մեծ մասամբ կիրառվում են վերացական կամ հոգևոր, գիտական, մշակութային հասկացություններ արտահայտող գոյականների հետ, և որոշ դեպքերում էլ այդ կապակցությունները կայունացել են, ինչպես՝ *նորագույն պատմություն, բարձրագույն կրթություն*:

Թերևս մի քանի ածականների դեպքում հնարավոր են այլ կիրառություններ, ինչպես՝ *թեթևագույն քաշ* (մարզական տերմինի իմաստով), *լավագույն սպրանքներ* և այլն, սակայն նման կիրառություններ

¹¹ Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 167, Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 137, Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 210:

սակավաթիվ են: Բիարկե, գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են որոշ կիրառություններ, որոնցում *-գույն* բաղադրիչով կազմված գերադրականները գործածված են որպես ոչ վերացական գոյականների լրացումներ, օրինակ՝ «Եվ այդ օրից *նրբագույն* բեղիկներն սկսեցին ավելի զբաղեցնել նրան» (Շիրվանզադե): Սակայն նման կիրառությունները առավելապես դիպվածային բնույթ ունեն և իմաստով էլ տարբերվում են: Բերված օրինակում *նրբագույն*-ը նշանակում է «շատ նուրբ» և ոչ թե «ամենանուրբ»:

Ինչպես նշվել է, երբեմն, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, գործածվում են միաժամանակ *ամենա-* և *-գույն* մասնիկներով կազմված գերադրականներ: Այդպիսի ձևերի առկայությունը ցույց է տալիս, որ *-գույն* բաղադրիչով կազմված գերադրականները այս ճանապարհով մուտք են գործում կիրառական ավելի լայն ոլորտներ: Նման կիրառություններում էապես փոքրանում է բարձր ոճին բնորոշ երանգավորումը, ինչպես նաև ընդլայնվում է գործածությունների շրջանակը:

Պետք է նշել, որ ընդհանրապես *-գույն* բաղադրիչով գերադրականները, եթե նոր կիրառություններ էլ ունենում են, ապա դարձյալ պահպանվում է իմաստային զարգացման նույն միտումը: Հր. Աճառյանը գրում է. «Ամեն ածական չի կարող ստանալ *-գույն* մասնիկը. օրինակ՝ կարելի է ասել *բարձրագույն, մեծագույն, փոքրագույն, լավագույն, ազնվագույն, գեղեցկագույն* և այլն, բայց չի կարելի ասել *շատագույն, սրատեսագույն, մոտիկագույն, դժգունագույն* և այլն: Ընդհանրապես *-գույն* մասնիկով կազմված բաղադրականները գրաբարից ավանդված ձևեր են. բուն ժողովրդական և գավառական բառերը, ինչպես նաև օտար փոխառյալ բառերը, սովորաբար չեն ստանում *-գույն* մասնիկը. օրինակ՝ չի կարելի ասել *աղեկագույն, աղվորագույն, գեշագույն, պզտիկագույն, պաղագույն, չաղագույն, նորմալագույն* (վերջերս սովորական դարձավ *խոշորագույն*)»¹²: Ուշադրություն դարձնենք վերջում հավելվածին. փաստորեն այսօր այնքան տարածված *խոշորագույն*-ը սովորական ձև է դարձել միայն 20-րդ դարի երկրորդ քառորդում: Սակայն այս նոր տարածված ձևն էլ կիրառվում է *-գույն*-ով կազմվող մյուս ձևերի նման, այսինքն՝ որպես վերացական, հոգևոր, գիտական, մշակութային հասկացություն արտահայտող գոյականների որոշիչ, ինչպես՝ *խոշորագույն նվաճում // հայտնագործություն* և այլն: Թերևս փոքր-ինչ տարբերվում են *խոշորագույն գիտնական // նկարիչ // ճարտարապետական կառույց* և նման կապակցությունները, սակայն ընդհանուր իմաստով դրանք էլ ի վերջո հեռու չեն վերը նշվածներից: Սակայն գործածական չեն *խոշորագույն խնձոր // սենյակ* և նման կապակցությունները:

Վերն ասվածներից կարելի է եզրակացնել հետևալը: Լեզվի զար-

¹² Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 77:

գացման ընթացքում փոփոխվել են *-գույն* մասնիկով բաղադրվող ձևերի իմաստային և կիրառական հատկանիշները: Նախ այդ ձևերը բաղադրականից վերածվել են գերադրականի: Բացի դրանից՝ սահմանափակվել է նրանց կիրառության ոլորտը, ընդ որում՝ սահմանափակվել է երկու առումով. դրանք բնորոշ են դարձել բարձր ոճին, ինչպես նաև սահմանափակվել է *-գույն* մասնիկով բաղադրվող գերադրականների գուգորդական կապակցելիությունը, այսինքն՝ ոչ միայն փոքրաթիվ ածականներ են ստանում *-գույն* մասնիկը, ոչ միայն այդ գերադրականները բնորոշ են առավելապես «բարձր» ոճին, այլև այդպիսի գերադրականները կապակցվում են սահմանափակ թվով գոյականների և իմաստային որոշակի տարբերություն ունեն *ամենա-* բաղադրիչով կազմված վերադրականների համեմատությամբ: Ինչքան էլ *ամենա-* և *-գույն* մասնիկները քերականական միևնույն ձևը կազմող և հետևաբար լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ եղող ձևեր կազմող մասնիկներ են, այնուամենայնիվ բավականին տարբերվում են հոլովական, թվակազմության և այլ համակարգերում եղած գուգաձևություն կազմող մասնիկներից:

Բանալի բառեր – *ածական, համեմատության աստիճաններ, լեզվի զարգացման փուլեր, սեմանտիկ (իմաստային) տարբերություններ, ոճական տարբերություններ*

АРТАШЕС САРКИСЯН – Семантические особенности превосходной степени прилагательных с частицей -гуйն. – Статья посвящена выявлению функционально-семантических особенностей превосходной степени прилагательных с частицей *-гуйн*. Отмечается, что превосходная степень прилагательных с этой частицей семантически отличается от превосходной степени прилагательных с препозитивной частицей *амենա-*. Рассматривается также вопрос о сочетаемости прилагательных с этими частицами с существительными. Прилагательные с частицей *-гуйн* обычно употребляются с существительными, выражающими духовные, научные, культурные понятия. Частица *-гуйн* образует превосходную степень ограниченного числа прилагательных, тогда как употребление частицы *амենա-* более универсально.

Ключевые слова: *прилагательное, степени сравнения, этапы развития языка, семантические различия, стилистические различия*

ARTASHES SARKISYAN – Semantic Peculiarities of the Superlative Degree of Adjectives Formed by Particle -гуйн. – The article studies semantic and functional peculiarities of the superlative degree of adjectives formed by particle *-гуйн* [-guyn]. The superlative degree formed by this particle semantically differs from the superlative adjectives formed by the prepositional particle *амենա-* [amena-]. The adjectives with the particle *-гуйн* are mostly used with nouns which express abstract or mental, scientific, cultural conceptions. It is also noted that a small number of superlative adjectives can be formed by this particle. The particle *амենա-* is more universal.

Key words: *adjective, degrees of comparison, stages of language development, semantic differences, stylistic differences*

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատկերավոր կայուն կապակցությունները (ՊԿԿ) լեզվաոճական որոշակի արտահայտություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որը՝ իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով: Մասնագիտական գրականության մեջ այս կարգի կապակցությունները կոչվում են նաև *համեմատություն-դարձվածային միավորներ (ՀԴՄ) կամ համեմատություն-դարձվածային արտահայտություններ*¹: Այդ կառույցների բաղադրիչները գրաբարում միավորվում են *իբրև, քան, որպես* նախադրություններով, օր. *խոյանալ իբրև զարծուի, չարքան զթոյնս իժից, որպես լոյս առ խաւար* և այլն:

ՊԿԿ-ները բնութագրվում են բառին հատուկ բառաքերականական հատկանիշներով, ուստի կարելի է խոսել ինչպես նրանց բառիմաստային հատկանիշների և ձևաբանական արժեքների, այնպես էլ տարբերակների մասին:

Լեզվում ընդհանրապես տարբերակներն առաջանում են այն բանի հետևանքով, որ քերականական իմաստներն ավելի շատ են, քան դրանք արտահայտելու լեզվական հոմանշային միջոցները: Հոմանշային այդ ձևերը հանդիպում են լեզվական համակարգի գրեթե բոլոր մակարդակներում. դրանք սովորաբար ընդգրկում են լիիմաստ բառերն ու ձևույթները, բառակապակցական ու շարահյուսական միավորները: Այդպիսի միավորները համարվում են տարբերակներ, որոնք առանձնանում են բառայնորեն: Լեզվում առանձնացվում են համագոր և ոչ համագոր լեզվական տարբերակներ: Համագոր են համարվում այն տարբերակները, որոնք կարող են ազատորեն փոխարինվել մեկը մյուսով, կիրառվել գրեթե բոլոր ոճերում, խոսքի բոլոր ոլորտներում: Տարբերակները ոչ համագոր են, երբ ունեն իմաստային, ոճական, կիրառական և տարածական տարբերություններ²:

Գրաբարի պատկերավոր կայուն կապակցությունների շրջանակ-

¹ Հմմտ. **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջք 126-127, 140, 260-263, **Назарян А. Г.** Фразеология современного французского языка. М., 1987, էջք 111-125, 194-199, **Պ. Քեղիքյան**, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50-51:

² Տե՛ս **Զ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 116:

ներում առկա են դարձվածային-բառակապակցական տարբերակների գրեթե բոլոր տեսակները՝ բառային (հոմանշային), քերականական (ձևաբանական և շարահյուսական) և քանակային³:

Ա. Բառային (հոմանշային) տարբերակներ: Բառային (հոմանշային) տարբերակներն այնպիսի կապակցությունների հոմանշային գույգեր են, որոնք միմյանցից տարբերվում են հոմանշային որևէ բաղադրիչով՝ միաժամանակ պահպանելով իմաստային մերձավորության որոշակի աստիճան: Բառային տարբերակները ունեն հետևյալ կառուցատիպերը.

- ա) նախադրությունների տարբերակներով,
- բ) գերադաս բաղադրիչների տարբերակներով,
- գ) ստորադաս բաղադրիչների տարբերակներով:

Ա. Գրաբարի ՊԿԿ-ներում տարբերակայնություն են դրսևորում այն կապակցությունները, որոնց կառուցվածքում առկա են հոմանիշ նախադրություններ (հաճախ էլ՝ հետադրություններ). *քան զձին սպիտակ // իբրև զձին սպիտակ, որպես ի կարկտոյ հարեալք // իբրև ի կարկտոյ հարեալք, իբրև զաւագ բազմանալ // քան զաւագ բազմանալ, որպես լոյս առ խաւար // զոր օրինակ լոյս առ խաւար, քան զսուր երկսայրի // որպես զսուր երկսայրի, իբրև զաւագ // որպես զաւագ // քան զաւագ* և այլն:

Հմմտ. Եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիթ, *իբրև զձին սպիտակ արարից* (Եսայ. Ա. 18): Լուս և *քան զձին սպիտակ եղէց* (Սաղ. Օ. 9): Եւ եղից զաւակ քո *իբրև զաւագ ծովու* (Մնն. ԼԲ. 12): Տեղեաց ի նոսա միս... որպես զաւագ ծովու զթոշունս թնաւորս (Սաղ. ՀԷ. 27): Բազմեցան զինն այրիք նոցա *քան զաւագ ծովու* (Երե. ԺԵ. 8):

Երբեմն նախադրությամբ տարբերակները ձևավորվում են նաև հավելական նախադրության միջոցով, ինչպես՝ *օրինակ իմն դաշնաւոր // օրինակն իմն իբր դաշնաւոր*:

Նման կապակցությունները կարող են տարբերակներ կազմել նաև առանց ավանական բաղադրիչի. *իբրև բոց // որպես բոց, իբրև զաւագ ծովու // որպես զաւագ ծովու // քան զաւագ ծովու* և այլն: Հմմտ. Թո՛րչք նորա *իբրև զթռիչս բոցոյ հրոյ* (Երգ. Ը. 6): Աչք նորա *որպես բոց հրոյ* (Յայտ. Ա. 14):

Այս կարգի կապակցությունների տարբերակները կարող են հանդես գալ նաև նախադրության զեղջումով, հմմտ. Աչք նորա *բոց հրոյ* (Յայտ. ԺԹ. 12):

Հանդիպում են երկանդամ ՊԿԿ-ների տարբերակներ, որոնք դիտվում են ավանական բաղադրիչի կրճատման հետևանք, ինչպես՝ *հլու որպես զանասունս // որպես զանասունս, // իբրև զանասունս,*

³ Գրաբարի դարձվածային տարբերակների մասին տե՛ս **Պ. Բեղիբյան**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 213-216:

այդպես նաև՝ շանց գունակ // շանց օրինակ, իբրև (զ)Աստուած // որպէս (զ)Աստուած և այլն: Հմմտ. Աստուած ... ոչ կամէր թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին (Եզն., 76): Յիրաւի են իբրեւ զանասունս (Ագաթ., 37):

Բ. Գերադաս բաղադրիչներով տարբերակայնություն են դրսևորում այն կապակցությունները, որտեղ առկա են ածականական կամ բայական գերադաս բաղադրիչներ. քաջ քան զԱքիլէս // արի քան զԱքիլէս, տրտում մինչեւ ի մահ // անմխիթար մինչեւ ի մահ, ի վեր քան զմիտս // գերազանց քան զմիտս, իբրև զհուր վառել // իբրև զհուր բորբոքել (իմ), իբրև զխոտան ի բաց թողուլ // իբրև զխոտան հատանել ընկենուլ, ազդող քան զամենայն սուր // հատու քան զամենայն սուր, վառեալ իբրև զհնոց // ջեռեալ իբրև զհնոց, վատթար քան զշուն // լիրբ քան զշուն և այլն:

Հմմտ. Ումեմն իբրև զհուր բորբոքեալ երեւեցաւ (Ագաթ., 179): Իբրև զհուր վառեալ էր (ն. տ., 214): Եւ ասէ Դաւիթ. «Նա եւ վատթար ևս ես քան զշուն» (Ա. Թագ. ԺԷ. 43): Իբրև շունք լիրբք եղեն յանձին իւրեանց, որ ոչ զիտեն զյագուրդ (Եսայ. ԾԶ. 11):

Խնդրո առարկա տարբերակները կարող են հանդէս գալ նաև համակցված ձևով, որ պայմանավորված է լեզվի տնտեսման օրենքով. քաջ քան զԱքիլէս // արի քան զԱքիլէս // քաջ և արի քան զԱքիլէս: Հմմտ. Իսկ Արշակ ... արհամարհեաց զնոսա ... քաջ և արի երեւեալ քան զԱքիլէս (Խոր., 278):

Գ. Ստորադաս բաղադրիչներով ՊԿԿ-ների տարբերակները հանդէս են գալիս կամ բառային փոփոխակներով, կամ նախդրային համարժեք կապակցություններով:

Հմմտ. Համարեցաք իբրև զոչխար ի սպանումն (Ագաթ., 111): Համարեցաք որպէս զոչխար ի սպանող (Փարպ., 91): Իբրև զգազանս վայրենիս արիննախանձս ուսուցին զնոսա (Եղ., 161): Չենք մարդատեացք իբրև զգազանս շաղակերս և արիննարբուս (ն. տ., 165):

Բառային տարբերակներ են ստեղծում սեռականով ավելադրությունները, որոնք ցուցաբերում են հոմանշային հարաբերություններ, ինչպես՝ Աչք իւր են իբրև զբոց հրոյ (Յայտ. Բ. 18): Չի նա մտցէ իբրև զբոց հալոցի (Մաղա. Գ. 2):

Տարբերակներ կարող են դառնալ համարժեք նախդրավոր կառույցներով ՊԿԿ-ները, ինչպես՝ Եւ էլին ինքեանք և թագաւորք ... բազում իբրև զաւագ առ ափն ծովու բազմութեամբ (Յեսու. ԺԱ. 4): Եւ ուղտուց նոցա ոչ գոյր թիւ, այլ էին իբրև զաւագ առ եզր ծովու բազմութեամբ (Դատ, Է. 12):

Բառային տարբերակներ կարող են ի հայտ գալ նաև կապակցության համեմատվող մասերի այնպիսի փոփոխակներով, որոնք հաճախ բառային մակարդակում չեն միավորվում որպէս բուն հոմանիշներ,

ինչպես՝

կարծրագոյն իբրու յականս // կարծրագոյն իբրու ի պողովատսն,
քան զեզն պակասամտագոյն // քան զէշ պակասամտագոյն,
ըստ մարգարէիցն նմանութեան // ըստ առաքելոցն նմանութեան,
սպիտակ իբրեւ զլոյս // սպիտակ իբրեւ զձիւն // սպիտակ իբրեւ
զասր // սպիտակ իբրեւ զեղեամն // սպիտակ քան զկաթն,
իբրև զջահ վառել // իբրև զլոյս վառել,
իբրև զջուրս բազմանալ // իբրև զգետս բազմանալ // իբրև հեղե-
ղատ բազմանալ,
սեաւ իբրև զագռաւ // սեաւ իբրև զկապերտ այծեայ⁴,
իբրև զառիւծ // իբրև զվիշապ,
որպէս սուր // որպէս ածելի և այլն:

Հմտ. *Հանդերձք* նորա եղեն *սպիտակ իբրեւ զլոյս* (Մատթ. ԺԷ. 2):
Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն և *հանդերձ նորա սպիտակ իբրև
զձիւն* (Մատթ. ԻԸ. 3): *Չուարթագին են այք նորա ի զինոյ և սպիտակ
ատամունք նորա քան զկաթն* (Ծննդ. ԽԹ. 12): *Իբրև զառիւծ ի մէջ խա-
շին* (Միքիէ. Ե. 8): *Իբրև զվիշապս առաջի խաշանց* (Երեւ. Ծ. 8): Լեզուք
նոցա *որպէս զսուր սուսերի* (Մաղ. ԾԶ. 5): *Որպէս ածելի սուր* սրեաց
զնենգութիւն (Մաղ. ԾԱ. 5):

Ստորադաս բաղադրիչները կարող են տարբերակներ ձևավորել՝
պայմանավորված բառակազմական գործոնով, ինչպես՝ Չիւն և սառն
... թէ յայլմէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա Հոգին ի փառաւորութիւն, այլ
իբրեւ զօտարտոխս մեկուսի դնէր (Եզն., 195): Ուստի յայտ է՝ թէ ոչ *իբրեւ
զօտարտոք* առ յափշտակութեամբ, այլ ի հօրէ տուաւ ի ձեռս նորա (ն. տ.,
269-270)⁵:

Բ. Քերականական տարբերակներ: Քերականական տարբերակ-
ներն առաջանում են կառույցների բաղադրիչների ձևաբանաշարա-
հյուսական հատկանիշների հիման վրա. ընդ որում նկատի են առն-
վում ինչպես նրանց բաղադրիչների դրսևորման ձևաբանական միջոց-
ները (հոլովման, թվի և այլ կարգերում), այնպես էլ ամբողջական կա-
պակցության շարահյուսական (շարադասական) տարատեսակները:

1. ՊԿԿ-ների ձևաբանական տարբերակներն ի հայտ են գալիս
հիմնականում կապակցությունների անվանական բաղադրիչների հո-
լովական գուգաձևություններով, եզակի-հոգնակի ձևերով, ինչպես նաև
կապակցությունների բայ բաղադրիչների լծորդությունների երկձևու-
թյուններով (առանց իմաստային փոփոխության):

⁴ *Սեաւ* միջուկի գունային ենթադաշտին աղերսվում են *ագռաւ* և *կապերտ* (այ-
ծեայ) գունային երանգի հասկացությունները (տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գունանուն բա-
ղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում (ըստ Աստվածա-
շնչի), «Միխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 2003, հ. 1, էջ 23):

⁵ Այս կարգի կապակցությունները կարող են դիտվել բառակազմական տարբե-
րակներ:

ա) Հոլովական գուգաձևությամբ⁶, հմմտ. *մահու չափ // մահուամբ չափ, իբրև գառինք // իբրև զգառինս, իբրև ոչխարք // իբրև զոչխարս, ըստ կամս // ըստ կամաց(ն)* և այլն:

Հմմտ. Գնացին նոքա *ըստ կամս* անձանց իւրեանց (Ագաթ., 122): Եթէ դարձջիք և *ըստ կամաց* նոքա գնասջիք, տացէ ձեզ զանմահութիւն կենաց (ն. տ., 119):

բ) Եզակի-հոգնակի ձևերով. *իբրև զմանուկ // իբրև զմանուկս, իբրև զանասուն // իբրև զանասունս, իբրև զայր // իբրև զարս, իբրև զոչխար // իբրև զոչխարս, որպէս ծնող // որպէս ծնողք* և այլն: Հմմտ. *Իբրև զմանուկ* ի գիրկս առնէին (Ագաթ., 317): Լիջի՛ք *իբրև զմանկունս* զայսոսիկ (ն. տ., 221): *Իբրև այր* մի չար ինքնահալած (Առակ. Չ. 11): Եթող առ իւր ի նոցանէ *իբրև արս* երիս հազարս (Ա. Մակ. ԺԲ. 47):

Միաժամանակ և՛ թվային, և՛ հոլովական միջոցներով են կազմվել հետևյալ ՊԿԿ-ները. *իբրև զգառն // գառինք, իբրև զոչխար // ոչխարք* և այլն: Հմմտ. Սոքա *իբրև գառինք* մատուցան ի մահ (Ագաթ., 305): Եկիր ի սպանումն *իբրև զգառն* (ն. տ., 59):

գ) Գրաբարյան ՊԿԿ-ների ձևաբանական տարբերակներում հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնք դրսևորում են միաժամանակ բառային (տվյալ դեպքում՝ նախադրությունների) և քերականական (հոլովական) տարբերություններ՝ պայմանավորված նախադրությունների (հետադրությունների) հոլովառության հանգամանքով. *նման Աստուծոյ // որպէս զԱստուած, նման արծաթոյն // իբրև զարծաթ, նման անասնոյ // իբրև զանասունս, իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանալ // նման արծուոյ ի կաքաւուց սլանալ* և այլն: Հմմտ. Իշխանութիւնս ունիս *նման Աստուծոյ* ի վերայ մեր և ամենայն մարդոյ (Փարպ., 48): Զծառայութիւնն և զվաստակ *որպէս զԱստուած* խնդրէր (ն. տ., 166): Պատիւն և մեծութիւնս *նման արծաթոյն* ընդ մատնութեանն իամայելացի վաճառականացն (ն. տ., 25): *Իբրև զարծաթ* ընտիր ... յամենայն ազգս ընդունողաց սիռեալ տարածեցաւ բանն (ն. տ., 33):

դ) Նախադրությունների հայցական խնդիրը կարող է հանդես գալ որոշիչ հոդով և առանց դրա. *որպէս զմեղուս // որպէս մեղուս, որպէս զորդիս // որպէս որդիս, ըստ կամաց // ըստ կամացն և այլն*: *Նախադրության խնդիրը կարող է ստանալ կրկնակի հոդ. իբրև զմարգարիտ // իբրև զմարգարիտն պատուական* և այլն:

ե) Բայական ՀԴՄ-ներում բայական գերադաս բաղադրիչները

⁶ Հայ քերականագիտության մեջ ընդհանրապես քերականական, մասնավորաբար հոլովական գուգաձևություններին անդրադարձել են **Մ. Սեբաստացին** (Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջք 20-43, 253-293), **Մ. Չամչեանը** (Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1843, էջ 11-34), **Ա. Բագրատունին** (Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջք 6-7, 9, 11, 13, 17-29, 94), **Զ. Աղաջանյանը** (Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 144-163) և ուրիշներ:

տարբերակներ են ստեղծում տարբեր լծորդություններով⁷, ինչպես՝ *իբրև զարմաւենի ծաղկել // իբրև զարմաւենի ծաղկիմ*:

2. ՊԿԿ-ների շարահյուսական տարբերակները պայմանավորված են կապակցությունների *կառուցվածքային գործոններով*: Այդպիսի տարբերակներ կարող են առաջանալ կա՛մ ՊԿԿ-ների բաղադրիչների շարահասական փոփոխություններով, կա՛մ ամբողջ կառույցի ձևափոխությամբ: Հետևյալ ՊԿԿ-ների տարբերակները պայմանավորված են բաղադրիչների շարահասական դիրքի փոփոխություններով. *իբրև զմարգարիտն պատուական // իբրև զպատուական մարգարիտն, քաղցր քան զմեղու խորիսիս // քաղցր քան զխորիսիս մեղու, խաղալ նովաւ իբրև հաւու // իբրև հաւու խաղալ նովաւ, իբրև զարծաթ ի բովս (քննել) // (մտանել) ի բովս իբրև զարծաթ, ծագել իբրև զոյս // իբրև զլոյս ծագել, գոչել իբրև զառիւծ // իբրև զառիւծ գոչել* և այլն: Հմմտ. Եկն գոգի Աստուածութեանն փորձել և քննել զամենեսեան *իբրև զարծաթ ի բովս* (Ագաթ., 323): Մտին *ի բովս իբրև զարծաթ* (ն. տ., 326): Իսկ զհոգևորացն առաքինութիւն աստուածաւեր սիրողացն մեծութիւն *իբրև զմարգարիտն պատուական* (Ագաթ., 6): ... Հասեալ գեղեցկագոյն *իբրև զպատուական մարգարիտն* (ն. տ., 9): Վասն Երուսաղէմի ոչ ներեցից, մինչև *ծագեսցէ իբրև զլոյս արդարութիւն* նորա (Եսայ. ԿԲ. 1): Եւ կոտորեցի զնոսա բանիւ բերանոյ իմոյ, եւ *իբրաւունք քո իբրև զլոյս ծագեսցեն* (Ովսէ. Զ. 5):

Շարահյուսական տարբերակներ են ստեղծվում համեմատելի հասկանալի բաղադրիչի (ածականի) զեղչման դեպքում. *սուր քան զամենայն սուր երկսայրի // քան զամենայն սուր երկսայրի, քաղցր քան զխորիսիս մեղու // իբրև զխորիսիս մեղու* և այլն: Հմմտ. Քաղցր էր ի ճաշակելիս խորհրդոյ հոգևոր և իմաստուն լսողաց ... *քան զխորիսիս մեղու* (Փարպ., 20): Եւ համ նորա *իբրև զխորիսիս մեղու* (Ելք. ԺԶ. 31):

Գ. Քանակական տարբերակներ: Այս տարբերակները հանդես են գալիս բաղադրիչների քանակային տարբեր կազմերով. ի հայտ են գալիս համառոտ և ծավալուն կառույցներ, որոնք, պահպանելով իմաստային մերձավորությունը, կազմում են հոմանշային զույգեր:

Քանակական տարբերակները սովորաբար ձևավորվում են այն դեպքում, երբ ելակետային բառակապակցության նախադրության խնդիրը ստանում է որևէ կարգի լրացում՝ այդպիսով շեշտելով ՊԿԿ-ի իմաստային բեռնվածությունը: Ընդ որում՝ այդպիսի լրացումները կարող են արտահայտվել ինչպես բառով, այնպես էլ բառակապակցությամբ և նախդրավոր կապակցությամբ:

1. Քանակական տարբերակներից մեկում լրացական անդամն արտահայտված է բառով.

⁷ Բայական զուգահեռ լծորդություններին անդրադարձել են **Ա. Աբրահամյանը** (Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 101-104), **Վ. Առաքելյանը** (Գրաբարի քերականություն, հ. 1, Ձևաբանություն, Եր., 2008, էջ 105-111) և ուրիշներ:

իբրև զապառած // իբրև զապառած խստաքար,
իբրև զեղբայր // իբրև զեղբայր հարազատ,
իբրև ոչխարք // իբրև ոչխարք մոլորեալք,
որպէս անձրեւ // որպէս անձրեւ սաստիկ / անչափ,
յորդել իբրև զհեղեղ // յորդել իբրև զհեղեղ անհուն,
գոչել իբրև զառիւծ // գոչել իբրև զառիւծ զայրագին,
որպէս զբարբարոսս // որպէս զբարբարոսս այլանդակեալս ,
որպէս խաշն // որպէս զխաշն լքեալ և այլն:

Հմնտ. Եւ որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն,
քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոսս (Խոր., 190): Եւ էր այ-
նուհետև տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս զբարբարոսս այլանդա-
կեալս (ն. տ., 280): Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան քո (-
Սաղ. ՀԶ. 21): Եւ որ շէնն մնացե, եղիցի իբրև զխաշն լքեալ (Եսայ. ԻԷ.
10):

2. Լրացական անդամն արտահայտուած է բառակապակցությամբ
կամ նախդրավոր կապակցությամբ: Ինչպէս՝ *օրինակ իմն որպէս փո-
թորիկ // օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերևաթափի, իբրև
զփայլակն // իբրև զփայլակն անկեալ յերկնից, իբրև զաւագ ծովու //
իբրև զաւագ առ ափն ծովու* և այլն:

Հմնտ. Եղից զաւակ քո իբրև զաւագ ծովու, որ ոչ թուիցի ի բազմու-
թենէ (Մնն. ԼԲ. 12): Եւ էլին ... իբրև զաւագ առ ափն ծովու բազմու-
թեամբ (Յեսու. ԺԱ. 4):

Որոշ դեպքերում քանակական տարբերակ է ստեղծում բայական
անդամի լրացումը, ինչպէս՝ *Իբրև զհուր բորբոքեցի* բարկութիւն ի վե-
րայ մնացելոցն (Եղ., 156): *Բորբոքեցաւ իբրև զհուր հնոցին* ի Բաբիլոն
(ն. տ., 13):

Բառակապակցական տարբերակների բայական անդամը կարող է
զեղչվել, ինչպէս՝ *որպէս մեղուս // որպէս մեղուս ընդդէմ ծաղկանց,
իբրև զարծաթ // իբրև զարծաթ ի բովս* և այլն: Հմնտ. Ընտրեցէ նախ
գնոսա իբրև զարծաթ (Ագաթ., 324): Եկն Հոգի փորձել և քննել զամենե-
սեան իբրև զարծաթ ի բովս (ն. տ.):

Քանակական տարբերակներ կարող են ձևավորվել կապակցույթ-
յան կամ ընտրական անդամի առկայությամբ, ինչպէս՝ *իբրև զհնոց և
իբրև զհնոց վառեալ, իբրև զլոյս և իբրև զլոյս տօթագին, իբրև զլոյս և
իբրև զլոյս արեգական*: Հմնտ. Զի բորբոքեցան իբրև զհնոց (Ովսէ. Է. 6):
Ջեռան իբրև զհնոց վառեալ (Ովսէ. Է. 7): Եւ իրաւունք քո իբրև զլոյս ծա-
գեցեն (Ովսէ. Զ. 5): Եւ եղիցի լոյսն լուսնի իբրև զլոյս արեգական (Ե-
սայ. Լ. 26):

Այսպիսով, գրաբարում ՊԿԿ-ների տարբերակները բնութագրվում
են որոշակի կառուցատիպերով, որոնք բաժանվում են հետևյալ տե-
սակների՝ բառային (հոմանշային), քերականական և քանակական:

Բառակապակցական տարբերակների ձևավորման գործում զգալի դեր ունեն ինչպես գերադաս բաղադրիչների, այնպես էլ կախյալ անդամների քերականական հատկանիշները. չպետք է անտեսել նաև նախդիրների կապակցական հնարավորությունները:

Բանալի բառեր – *կայուն կապակցություն, համեմատություն, տարբերակ, բառային, քերականական, քանակական, գերադաս բաղադրիչ, ստորադաս բաղադրիչ, կառուցատիպ, նախդիր*

ЛАЛИК ХАЧАТРЯН – Варианты образных устойчивых словосочетаний в грабаре. – Варианты образных устойчивых словосочетаний в грабаре характеризуются конкретными моделями, которые делятся на следующие подгруппы: лексические (սպիտակ որպէս զձին // սպիտակ իբրև զկաթն. белый как снег // белый как молоко), грамматические (նման Աստուծոյ // որպէս զԱստուած. подобно Богу // как Бог), квантитативные (քաղցր իբրև զմեղր // քաղցր քան զխորիսխ մեղր. сладкий как мёд // сладкий как соты мёда).

В образовании таких вариантов важную роль играют способы выражения доминирующего компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также особенности сочетаемости предлогов с разными падежами.

Ключевые слова: *устойчивый оборот, сравнение, вариант, словесный, грамматический, квантитативный, доминирующий компонент, подчинительный компонент, структурный тип, предлог*

LALIK KHACHATRIAN - The Variants of Image-Bearing Word-Combinations in Old Armenian. – The variants of image-bearing word-combinations in Old Armenian are characterized by specific models, which are divided into the following types: (lexical, սպիտակ որպէս զձին // սպիտակ իբրև զկաթն. white as snow. white as milk), grammatical (նման Աստուծոյ // որպէս զԱստուած. like the god // as a god), quantitative (քաղցր իբրև զմեղր // քաղցր քան զխորիսխ մեղր. sweet as honey // sweet like a comb of honey).

The ways of expressing the dominant components, the grammatical features of dependent members and the combinability of prepositions play an important role in the formation of these variants.

Key words: *set expression, comparison, variant, verbal, quantitative, dominating component, subordinative, component, structural type, preposition*

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՉՍՓԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀԱՄՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բնիկ հայախոսների հաղորդակցության ժամանակ հաճախ գործածվում են լեզվական այնպիսի կառույցներ, որոնք չափահասների նորմավորված խոսքում համարվում են անընդունելի (*ինչա՞հնչ, իրա՞իր, ումի՞/ում, էսի/ես/այս* և այլն), իսկ մանուկների խոսքում անսովոր և/կամ անբացատրելի (Տիգրան 1.2 տ. — «*Հարիկ սենակ մըտ ցե՞*» /*Հայրիկի աշխատասենյակ չեմ մտել*):

Ցավոք սրտի, առօրյա բնական, չմշակված խոսքը հայ լեզվաբանական ուսումնասիրության մեջ որոշակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով պատշաճ ուշադրության չի արժանացել, մինչդեռ, ի հակադրություն նորմավորված և որոշ առումով արհեստական գրական խոսքի, անբռնազբոս ու ինքնաբուխ խոսքում արձանագրվող լեզվական փաստերը միանգամայն բացատրելի են ու հասկանալի և զարմանալիորեն՝ օրինաչափ: Ի դեպ, ուշադրության են արժանի խնդրո առարկա լեզվական միավորների խոսակցական/բարբառային բոլոր տարբերակները, քանի որ դրանք հուսալի ու արժեքավոր նյութ են տրամադրում լեզվաբաններին՝ տվյալ լեզվի յուրացման սկզբունքների, կառուցվածքային առանձնահատկությունների և ընդհանրապես լեզվի մասին: Մա համալեզվական երևույթ է և վերաբերում է լեզվի ցանկացած մակարդակի (շարահյուսական, իմաստային, ձևաբանական, հնչյունաբանական և հնչույթաբանական) վերլուծությանը:

Հայտնի է, որ անհատի լեզվական վարքագծի կայացման գործում վճռական դեր է կատարում մարդու լեզվական բնագրով պայմանավորված քերականական սկզբունքների ու պարամետրերի մի բազմաշերտ համակարգ, որին հստակորեն վերագրվում են որոշակի համալեզվական հատկանիշներ:

Մույն ուսումնասիրության մեջ խոսքի չափական կառուցվածքը քննարկվում է համընդհանուր քերականությամբ (ՀՔ) սահմանված չափական սկզբունքների համատեքստում: ՀՔ սերողական (generative) ուսմունքի մեթոդաբանության շրջանակներում բանավոր խոսքի չափական կառուցվածքի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացատրելու և հիմնավորելու, թե ինչպես են լեզվի

շեշտադրության, վանկաբաժանման կամ կրճատման կանոնները ենթարկվում լեզվահատկանշական պարտադիր պայմաններին կամ ինչու են, ասենք, որոշ խորքային արտահայտություններ մակերեսային ձևերում վերածվում յամբական ոտքերի համապատասխանող միավորների ((C)VC→(C)V.C□') և միաժամանակ ներդաշնակորեն տեղավորվում ՀՔ համապատասխան կանոնների ու օրինաչափությունների սահմաններում: Այսպես, հայ երեխաները խաղի ժամանակ հաշվելիս հաճախ գործածում են հետևյալ կառույցը՝ *երեք ու յու չորս* կամ *երեք ու յու չորս ու կես*: Առաջին հայացքից սա կարող է որևէ «գիտական արժեք» չունենալ, մինչդեռ երեխաների խոսքում հստակ երևում է, որ նրանք *տիրապետում* են մայրենի լեզվի չափական կառույցներին՝ առանց հատկապես դա գիտակցելու: Լեզվի տեսությամբ սահմանվող յամբական ոտքերի կառուցվածքը՝ CV.C□' (*), լիովին համընկնում է վերոհիշյալ արտահայտության կաղապարին:

(1)

ՉՓԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՀՆՉՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ			Ե.ՐԵՔ ՈՒ.ՅՈՒ ՉՈՐՍ (բայց ոչ՝ * Երեք ու չորս) <i>հնչույթաբանական արտահայտություն</i> /ե.րե քու.յու չոր.ս/ <i>հնչունաբանական արտահայտություն</i> [յե.րե քու.յու չոր.սո]			
ՉՔ 	ՉՔ 	ՉՔ 	ՉՔ ՉՓԱԿԱՆ ԲԱՆ	ՉՔ յերե	ՉՔ քույու	ՉՔ չորս
Σ /\	Σ /\	Σ /\	Σ ՈՏՔ	Σ յերե՛	Σ քույո՛ւ	Σ չորսո՛
σ σ Λ Λ CV CV	σ σ Λ Λ CV CV	σ σ //\ Λ CVC C□	σ ՎԱՆԿ	σ σ Λ Λ XX XX	σ σ Λ Λ XX XX	σ σ //\ Λ XXX XX
 յ ե . ր ե	 ք ու . յ ու	 չ ո ր . ս օ	ՄԵՂԵՂԻ	 յ ե . ր ե	 ք ու . յ ու	 չ ո ր . ս օ

Բանավոր հաղորդակցության ժամանակ, անկախ կրթության աստիճանից ու ձեռքբերովի լեզվական գիտելիքի մակարդակից, հայախոս մարդիկ ինքնաբերաբար գործածում են չափական այնպիսի կառույցներ, որոնք առաջին հայացքից տարօրինակ են թվում կամ «սխալ» են համարվում, մինչդեռ լեզվի խորքային միավորից մակերեսային ձևի անցման ժամանակ իրականում տեղի է ունենում ենթագիտակցական համապատասխանեցում խոսքի չափական կառույցին: Օրինակ՝

¹ Աստղանիշով (*) տրվում են սխալ կամ վատ կազմված օրինակները:

(2)

Խորքային ձև (C)VC	Մակերեսային ձև (C)V.C□	Չափական կառույց (.*)
(C)VC. → (C) V.C□		(*)
է՛ւ, է՛տ	էսի՛, էտի՛/էտա՛(Վն.)	VC → V.CV (*)
ի՞նչ	ինչա՞	VC.C → VC.CV (*)
ն՞ւմ	ումի՞ (Թեհ.)	VC → V.CV (*)
մեր	մերի (Պլ.)	CVC → CV.CV (*)

Լեզվի խորքային կառույցների մակերեսային/հնչյունաբանական դրսևորումների տեսական վերլուծությունը հիմնավոր վկայություն է տալիս հայերենի վանկերի ներքին կառուցվածքի, վանկի ենթաբաղադրիչների միջև որոշակի հարաբերությունների, ինչպես նաև լեզվի ռիթմային-չափական կառուցվածքի վերաբերյալ:

Հիմնվելով ՀՔ տեսական դրույթների վրա՝ կարելի է ցույց տալ, թե լեզվի տեսությամբ սահմանված չափական օրինաչափությունները ինչպես են ազդում մանուկների լեզվայուրացման գործընթացների վրա, թե ինչպես են նույնիսկ գրագետ ու կրթված մարդկանց բանավոր խոսքի մեջ սպրդում սովորաբար «անընդունելի» համարվող բառաձևեր:

Հարկ է նշել, որ չափական կառույցների առանձնահատկությունները ուսումնասիրվում են նաև չափական ձևաբանության (Prosodic Morphology) տիրույթում: Վերջինս քննության է առնում բնական լեզուներում դիտվող այն երևույթները, որոնցում բառերի ձևը հիմնականում պայմանավորված է հնչույթաբանական և հատկապես ֆոնոտակտիկական գործոններով: Դրանցից են, օրինակ, խոսքային միավորների որոշակի կառույցների

ա) ենթարկվելը լավ կազմված վանկերի կամ ոտքերի կառուցվածքային պահանջներին,

բ) համապատասխանեցումը շեշտային զագաթներին կամ լայն առումով՝ հնչեղության սկզբունքին:²

Հոդվածում քննարկվում են այնպիսի հնչույթաբանական երևույթներ, որոնց վերաբերյալ գիտելիքը ներակա է, այսինքն՝ գիտելիք, որի հիմնական մասը անհատին տրվում է որպես նրա լեզվական բնագոյի հնչույթաբանական բաղադրիչ, այլ ոչ թե կյանքի ընթացքում ձեռք բերվող լեզվական ու հանրային փորձառության արգասիք: Խոսքային կառույցների վրա ազդող երևույթները քննվում են հետևյալ գործոնների առնչությամբ.

² Տե՛ս **Walter, M.**, *One-Level Prosodic Morphology*, Marburger Arbeiten zur Linguistik, 1999, November №1:

1. Վանկերի ներքին աստիճանակարգային կառուցվածք,
2. Վանկերի ենթաբաղադրիչների միջև գործող որոշակի հարաբերություններ,
3. Լեզվի ռիթմային կառուցվածք:


Վերլուծության մեջ ներառված օրինակներում գերակշռում են իրական փաստերից արձանագրված բնական խոսքի դեպքերը:

Վանկի կառուցվածքի վերաբերյալ համալեզվական ու լեզվահատկանշական տեսությունների համադրությունը հստակ պատասխաններ է տալիս հայերեն չափական խոսքում հանդիպող մի շարք երևույթների: Դրանցից են՝ ա. **վանկասկզբի պարզեցումը**՝ բաղաձայնական կուտակումներից խուսափելու համար, բ. որոշակի **հատույթի ներմուծումը**՝ կառուցվածքային օրինաչափությունները պահպանելու համար: Համալեզվական փաստերը վկայում են, որ պարզեցումը կատարվում է քիչ թե շատ կանխատեսելի հնչյունական միջավայրում, պարզեցման/փոփոխության բնույթը (հատույթների շարքում ձայնավորական հենարանի ներմուծումը կամ որոշակի բաղաձայնի հեռացումը) պայմանավորված է բաղաձայնական շարքերի տեսակով/հատույթային կազմով, ավելի ստույգ՝ վանկի ենթաբաղադրիչների միջև հարաբերություններով:

Վանկասկզբում բաղաձայնների շարքերի պարզեցման մեխանիզմի ընտրությունը կախված է բացառապես բաղաձայնների հնչեղության դիրքային հաջորդականությունից (տե՛ս (3)). **CC** շարքերը պարզեցվում են՝ ձայնավորական հենարան ներմուծելով՝

- բաղաձայնների միջև (**Cə.C /CəC.**), օրինակ՝ բըլուր, խըրատ, դըպիր, գըրչակ և այլն, կամ
- նախասկզբնական դիրքում (**əC.CV**), օրինակ՝ ըշտապ, ըշպար, ըսպիտակ, ըսկյուռ և այլն:

(3)



Բաղաձայնական շարքերի պարզեցում կարող է տեղի ունենալ տարբեր նպատակներով.

- **ներլեզվական** հնչույթաբանության մեջ խորքային ու մակերեսային կառույցների միջև որոշակի համապատասխանություն ստեղծելու համար, օրինակ՝ /մկրատ/ → [մըկրատ], /hrwl/ → [her.wel] (բերբ. արար.), /dalt/ → [dalet] (եբբ.), /vixr^j/ → [vixə^r] (ռուս.),
- **միջլեզվական** հնչույթաբանական կառույցների միջև ֆոնոտակտիկական անհամապատասխանությունները հարթելու, լեզվահատկանշական կառույցներին հավատարիմ մնալու համար: Օրինակ՝ արաբերե-

նում /plastik/ բառն ընդունում է [bilastik] ձևը, ֆարսիում /sparta/ բառը վերածվում է [esparta]-ի, /fri lanka/-ն՝ [feri lanjka]-ի, ճապոներենում /gas/ բառը դառնում է [gasu], հայերենում /minsk/ բառը վերածվում է [minəsk]-ի, /grip/-ը [gərip/-ի և այլն: Նույն նպատակով ձայնավորական տարավանկ հորանջ պարունակող կառույցներում CV.V(C) բաղաձայն է ներմուծվում՝ CV.CV կաղապար ապահովելու համար. օրինակ՝ ալո.ե→ալո.յե, երեխաների խոսքում՝ կակա.ո→կակա.վո, Լա.ուրա→Լա.վուրա և այլն:

Տարբեր լեզուներում պարզեցումը ենթարկվում է համալեզվական մի շարք սահմանափակումների, որոնց համաձայն ստացված (ելքային) արդյունքը մուտքային միավոր հանդիսացող բառաձևի համեմատությամբ հնարավորինս նվազագույն փոփոխություն պետք է կրի, և ելքային միավորում մուտքային տարբերակի «աղավաղումը»/փոխակերպումը թույլատրելի է այնքանով, որքանով դա համապատասխանում է տվյալ լեզվի օրինական կառույցներին և փոփոխության հիմքում ճանաչվում ու համապատասխանաբար ընկալվում է մուտքային/խորքային տարբերակի ձևը:

Ելնելով հայերենի բուն վանկի կաղապարից, դիրքային հատույթների քանակից՝ $[x_0^1]$ վանկասկիզբ, $[x^1]$ միջուկ, $[x_0^1]$ վանկավերջ, կարելի է ենթադրել, թե ինչու հայերենը բաղաձայնական կուտակումներ չի հանդուրժում. սովորաբար /CCVC/ կաղապարի (բառասկզբի, վանկասկզբի) բաղաձայնները ձայնավորական հենարան ներմուծելու շնորհիվ ստանում են $[C_0.CV.C]^3$ (= CV.CVC) տեսքը: Ցանկացած $C_1VC_2C_3$ միջավայրում վերջահար C_2C_3 բաղաձայնները գրավում են տարավանկ դիրքեր. $C_1VC_2.C_3$ – տանձ→տան.ձ (հմմտ. տան.ձենի, տան.ձուտ): Վանկավերջում, ի տարբերություն վանկասկզբի, $(C_1)VC_2C_3$ շարքեր հնարավոր են, եթե դրանք ենթարկվում են հնչեղության⁴ և օրինականության⁵ սկզբունքներին:

Խորքային կամ գրական ձևերի «սխալ», փոփոխված տարբերակները մեծահասակների բարբառային կամ առօրյա խոսքում քիչ թե շատ կանխատեսելի են ու հասկանալի: Սակայն առանձնահատուկ ուշադրության են արժանի մանուկների խոսքում արձանագրվող «արտասովոր» դեպքերը:

Նորածին երեխաները ծննդյան առաջին իսկ օրերից սկսում են «մշակել» իրենց ականջին հասնող խոսքային ազդակները: Համալեզ-

³ Հնչույթաբանական վերլուծության մեջ բառավերջի բաղաձայնը դիտվում է որպես տվյալ վանկի պոտենցիալ վանկասկիզբ՝ միջուկի ժամանակավոր դատարկ դիրքով. $C.V. C_0'$ (=CV.CV):


⁴ Հնչեղության սկզբունք (Sonority Principle). հնչույթների համընդհանուր դասակարգումը կատարվում է համաձայն նրանցում առկա հնչեղության աստիճանի:

⁵ Օրինականության սկզբունքը (Legality Principle) հիմնվում է տվյալ լեզվում ֆոնոտակտիկական սկզբունքների ու ընդհանրացումների վրա: Վերջիններս հնարավորություն են տալիս որոշելու այս կամ այն հատույթի/հատույթների ֆոնոտակտիկական օրինականությունը:

վական բազմաթիվ փորձարարական ու տեսական հետազոտություններ ցույց են տալիս, որ 2–4-օրական հասակից մանուկները բացառիկ զգայունություն են ցուցաբերում բնական լեզվի ակուստիկական ազդանշանների նկատմամբ: Նրանք կարողանում են տարբերակել իրենց մայրենի լեզուն որևէ այլ՝ օտար լեզվից: Փորձերի արդյունքների համաձայն՝ նորածինը իր մայրենի լեզուն «ճանաչում» է չափական խոսքի հատկանիշների (հնչերանգի, ռիթմի) շնորհիվ: Պարզվում է, որ 1200 մ/վրկ. տևողությամբ խոսքի չափական տեղեկությունը բավարար է, որ նորածին երեխան «ճանաչի» իր մայրենի լեզուն⁶:

Առողջ մանուկներն իրենց մայրենի լեզվի հիմքը կազմող կառույցների հիմնական մասը յուրացնում են միջև մոտավորապես հինգ տարեկան դառնալը⁷, և հաճախ աշխարհի ամենատարբեր լեզուներով խոսող մանուկների կողմից չափահասների խոսքի «աղճատումներն» ու «կրճատումները» ունեն զարմանալիորեն ընդհանուր, կանոնավոր հիմքեր և ենթարկվում են, այսպես կոչված, «չգրված ու անգիտակցական օրենքների»⁸: Մանուկների խոսքի առանձնահատկությունների խորագնին ու բազմաձևավալ ուսումնասիրությունները, այդ թվում նաև «չգրված ու անգիտակցական օրենքները», քննարկվում են լեզվի տեսության մի շարք ոլորտներում, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, նյարդալեզվաբանությունը, խոսքի, լսողական ընկալման ու արտաբերության խնդիրներով զբաղվող հնչյունաբանական գիտությունները, մարդու ընդհանուր զարգացումն ու նրա կողմից լեզվի յուրացումն ուսումնասիրող գիտաճյուղերը:

Մովորաբար վանկային կաղապարների յուրացումը սկսվում է պարզ՝ CV հիմք-վանկից, որին հետևում է վերջինիս նվազագույն ածանցյալների յուրացումը՝ CVC→V→VC (տե՛ս (4) Գաթմանի սանդղակը): Վանկատեսակների պարզից բարդ աստիճանական յուրացման հետագա ընթացքը պայմանավորվում է մայրենի լեզվի ֆոնոտակտիկական սկզբունքներով, լեզվին բնորոշ վանկի կառուցվածքով (սանդղակում համապատասխանաբար՝ խումբ Ա / խումբ Բ լեզուներ):



⁶ Տե՛ս **Guasti, M.T.**, *Language Acquisition*, Cambridge, Massachusetts, MIT press, 2004, էջ 32:
⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 4:
⁸ Տե՛ս **Roca, I. & W. Johnson**, *A Course in Phonology*. Blackwell. UK, 1999, էջ 237:
⁹ Տե՛ս **Levelt, C., N. O. Schiller & W. J. Levelt**, The Acquisition of Syllable Types. *Language Acquisition* 8, 2000, էջ 242:

Այժմ վերլուծենք մանուկների խոսքում գրանցված որոշ փաստեր, որոնք տեսական առումով արժանի են առանձնահատուկ ուշադրության:

ԱՐՄԱՆ (1 տարեկան) – CVC_1C_2 (որտեղ $C_1=j$) բաղաձայնական կուտակումներով բոլոր միավանկ բառերը Արմանի խոսքում հնչում են C_1C_2 բաղաձայնական խմբի շրջված՝ C_2C_1 արտասանությամբ, այսինքն՝ /գայլ/ բառը նրա խոսքում դառնում է գա.յլ՝ /→ [գալը], /դույլ/ բառը՝ /դույլ՝ /→ /դուլը՝ / և այլն: Ինչպիսի՞ հնչույթաբանական/հնչյունաբանական խնդիրներ է «լուծում» Արմանը: Նախ՝ նա կատարում է բաղաձայնական խմբի պարզեցման գործողություն՝ $CC \rightarrow C^{j0}$, ապա, շեշտը տեղափոխելով բառավերջ, միավանկ բառը վերածում է երկվանկանի բառի ու միանգամից «հոգում» է ձայնավորական հենարան տեղադրելու խնդիրը. $CV'C_1C_2 \rightarrow CV.C_2' \rightarrow CV.C'\square' \rightarrow CV.C'V'$:

(5) ԱՐՄԱՆ 1 տարեկան

$CV'C_1C_2$	→	CVC_2C_1'	→	$CV.C'$	$CV.C'\square'$	→	$CV.C'V'$	Σ
գա՛յլ	→	գալյ՛	→	գա.լ՛	գա.լ՛□՛	→	գա.լը՛	(.*)
դո՛ւյլ	→	դուլյ՛	→	դու.լ՛	դու.լ՛□՛	→	դու.լը՛	(.*)
հա՛յր	→	հարյ՛	→	հա.ր՛	հա.ր՛□՛	→	հա.րը՛	(.*)

ՎԱԶԳԵՆ (1.2 տարեկան) – Փոքրիկ Վազգենի միավանկ թոթովանքներում $CVCC$ բառերը փոխարինվում են CVC կառույցներով: CVC բառերի վերջնաբաղաձայն արտասանվում է ընդգծված երկարությամբ ($C:$), որի հետևանքով շեշտը տեղափոխվում է դեպի բառավերջ ($CVC:$): Վերլուծենք Վազգենի խոսքում առկա լեզվաբանական նյութը. $CVCC$ բառերը՝ /դուրս/, /բարձ/, /մարդ/ և այլն, նրա խոսքում դառնում են [դուս], [բաց], [մաթ] ($CVCC \rightarrow CVC$): Այլ կերպ ասած՝ երեխան իր խոսքում անգիտակցորեն «կիրառում» է *վանկավերջի դիրքի պարզեցման սկզբունքը*: Մեկ այլ *վերջահար վանկասկզբի սկզբունքն* էլ «արտացոլվում» է /հաց/, /արջ/, /ուրթ/ և նման բառերում, երբ երեխան դրանք համապատասխանաբար արտաբերում է շեշտված ու երկարատև վերջնաբաղաձայնով՝ [հաց:], [արջ:], [ուրթ:]։ Այստեղ նաև հիմքվանկերի կառուցման միտում է նկատվում. Արմանի նման շեշտը տեղափոխելով բառավերջ՝ Վազգենը միավանկ բառը վերածում է երկվանկանի բառի՝ «կառուցելով» հիմք-վանկեր և ձայնավորական հենա-

¹⁰ Նկատենք, որ հայերենում C_1C_2 (որտեղ $C_2=j$) բաղաձայնական խմբերը մյուս CC շարքերի նման ը գաղտնավանկի ներմուծում չեն պահանջում, և $C_1+C_2 (=C+j)$ բաղաձայնական շարքում C_1 բաղաձայնը պարզապես դիտվում է որպես քմայնացած հատույթ և վանկում միաճյուղ դիրք է զբաղեցնում ($C_1+C_2 =C+j=C$): Օրինակ՝ /գյուղ/ [գուղ], /հյուր/ [հուր], բայց ոչ՝ * [գըյուղ] կամ * [հըյուր] (հմմտ. /զուլիս/[զըլուլիս], /հմուտ/[հըմուտ]):

րան՝ վանկի միջուկի պարտադիր դիրք ապահովելու նախապայմանով: Միավանկ բառերի փոխարեն երկվականի բառերի կազմությունն ու դրանց յուրօրինակ արտասանությունը վկայում են 1.2 տարեկան փոքրիկի մտային կառույցներում յամբական ռիթմի վերաբերյալ պատկերացումների առկայության մասին:

(6) ՎԱԶԳԵՆ 1.2 տարեկան

(C) VCC	→	(C) VC	→	(C) V.C:՝	→	(C)V.C: օ՝	→	(C)V.CV՝	Σ
դուրս	→	դուս	→	դուս:(=սս)	→	դու.ս:օ՝	→	դու.սը՝	(.*)
արջ	→	աց	→	աց:(=gg)	→	ա.ց:օ՝	→	ա.ցը՝	(.*)
մարդ	→	մաթ	→	մաթ:(=թթ)	→	մա.թ:օ՝	→	մա.թը՝	(.*)

ՏԻԳՐԱՆ (1.5 տարեկան) – Տիգրանի խոսքում գերակշռում են բալերի *արմատական* ձևերը: Մանուկների խոսքային վարքագծում սա տարածված երևույթ է¹¹. /Հարիկ սենակ **մըտ ցե**/ (=Հայրիկի աշխատասենյակ չեմ մտել) կամ /Ատո խըփ, գըմփ, կանգ/ (= Ավտոմեքենան խփեց (խփելու ձայնն է փորձում նմանակել) ու կանգնեց): Նրա կազմած նախադասությունները հետաքրքիր են նաև շարահյուսական տեսակետից. բոլոր ժխտական բառերը/մասնիկները դրվում են նախադասության վերջում: Մա ևս աշխարհի բազմաթիվ մանուկների խոսքում տարածված ու բազմիցս արձանագրված փաստ է¹²: Տիգրանի խոսքում նկատելի են նաև վերը քննարկված երևույթները. հիմք-վանկ կազմելու նախապատվությամբ բաղաձայնների սդում և կառույցի պարզեցում, օրինակ՝ սեն.յակ→սե.նակ, ավ.տոո→ա.տոո, հայ.րիկ→հա.րիկ:

(7) ՏԻԳՐԱՆ 1.5 տարեկան

(C)VC.	→	(C)V.	(C)V. CV.		ԱՐՄԱՏԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
սեն.յակ	→	սե.նակ	սե.նա.կ		խփել	→ խըփ
հայ.րիկ	→	հա.րիկ	հա.րի.կ		մտնել	→ մըտ
ավ.տոո	→	ա.տոո	ա.տոո		կանգնել	→ կանգ

Ոչ միայն երեխաների, այլև բոլոր մարդկանց խոսքը կարգավորվում է մի շարք լեզվաբանական օրենքներով ու սկզբունքներով: Տեսա-

¹¹ Տեսական լեզվաբանության մեջ այս երևույթն ուսումնասիրվում է «*արմատի ձևաբանություն*» (Root Morphology) բաժնում:

¹² Տեսական դրույթների համաձայն՝ երեխաները ժխտական կառույցների կազմությունը բավականին ուշ են յուրացնում:

կանոթեն հայերենում ռիթմային կադապարները համապատասխանում են երկձյուղ յամբական ոտքերի` (*): Առօրյա խոսակցական/բարբառային միավորների հնչյունաբանական/հնչույթաբանական կադապարները լիովին համապատասխանում են տեսությամբ կանխատեսվող պարամետրերին ու սկզբունքներին: Այսպես, հայերենում միավանկ շեշտված բառերը, կախված հնչյունական միջավայրից, կանոնավոր կերպով վերածվում են երկվանկանի միավորների` այդպիսով ապահովելով երկձյուղ յամբական ոտքերի պայմանը:

(8)	ի՞նչ	ինչա՞	շու.ն	շը.նի՛կ
	քե.գ	քե.գի	հո.փ	հո.պա՛
	ի.բ	ի.բա	մե.բ	մե.բի՛(Պլ.)
	(հ)է՞.բ	(հ)է.բի՞/է.բի՞(Կր.)	է.դ	է.տի՛/ը.դի՛գ (Մշ.)

Խոսակցական հայերենում շատ բառեր ևս կրճատումով կամ հավելումով ընդունում են երկվանկանի (յամբական) ձևեր.

(9)	ԿՐՃԱՏՈՒՄ	ՀԱՎԵԼՈՒՄ
	մանկապարտեզ – մըն.կ/զո	ճուտ – ճուտո,ճու.տիկ
	մաթեմատիկա – մա.թեմ	գիծ – գը.ծո, գը.ծուկ
	հաջողություն - հա.ջող	դինջ – դըն.ջո
	հորեղբայր – հո.պ/բար	սիգ – սի.գա
	անգլերեն – ան.գըլ	չաղ – չա.ղո

Հատուկ անունների թե՛ բազմավանկ և թե՛ միավանկ միավորները խոսքում ընդունում են անփոփոխ յամբական կադապարներ.

(10ա)	ԲԱԶՄԱՎԱՆԿ ԱՆՈՒՆՆԵՐ	(10բ)	ՄԻԱՎԱՆԿ ԱՆՈՒՆՆԵՐ
	Ա.բուս.յակ – Ա. բուս		Հայկ -Հայ.կո
	Կա.բա.պետ – Կա.բո		Սոս – Սո.սո, Սո.սիկ
	Ար.մե.նակ – Ար.մո, Ար.միկ		Գոռ – Գո.դիկ, Գո.բո
	Սի.բա.նուշ – Սի.բուշ, Սի.բո		Վան – Վ ա.նուշ, Վա.նո

Ուշադրության է արժանի նաև միանգամից մի քանի սկզբունքների կիրառումը բանավոր խոսքում, երբ խոսքային միավորը և՛ պարզեցվում է, և՛ համապատասխանեցվում լեզվահատկանշական երկձյուղ/երկվանկանի ռիթմային կադապարների¹³:

¹³ Այս երևույթների վերաբերյալ ծավալուն նյութ է տրամադրում նաև հայերենում գաղտնալեզուների ցանկացած ուսումնասիրություն:

(11)

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Մելքոն – Մե.լո/*Մել.քո	Անդրանիկ – Ան.դո/*Անդ.քո
Միհրան – Մի.քո/*Միհ.քո	Գրիգոր – Գր/ն.քո(ր) /*Գր.քոր
Մեդրակ – Մե.թո/*Մեդ/թ.քո	Ադրինե – Ա.դո/*Ադ.քո
Պետրոս – Պե.տո/*Պեա.քո	Մկրտիչ – Մը.կո/*Մկր.տո
Սարգիս – Սա.քո/*Սար.գ/քո	Սաքրոսի – Մա.քո/*Սաքրո

Այսպիսով, լեզվական բնագործը հզոր գործոն է, որի շնորհիվ մենք հաղորդակցվում ենք՝ լսում, ընկալում, մտքեր փոխանակում՝ անկախ դպրոցում կամ համալսարանում մեզ դասավանդվող քերականությունից ու դրա իմացության մակարդակից, ինչպես նաև հաճախ (բարբառներից հրաժարվելու կամ դրանցով խոսելը անընդունելի համարելու գնով) չափազանց ջերմեռանդորեն քարոզվող գրական նորմավորված խոսքից: Մարդիկ առանց բացառության տիրապետում են իրենց մայրենի լեզվի կառույցներին, հստորեն բանեցնում են վանկի բաղադրիչներն ու ենթաբաղադրիչները, ռիթմային կաղապարները՝ առանց երբևիցե գիտակցորեն տիրապետելու համապատասխան լեզվաբանական օրենքներին, օրինաչափություններին կամ սկզբունքներին:

Բանալի բառեր – չափական ձևաբանություն, բառաբարդում, ռիթմային կաղապարներ, յամբական ոտք, լեզվի յուրացում, համալեզվական/լեզվահատկանշական կանոններ, վանկի կառուցվածք, հնչեղություն, օրինականություն, ֆոնոտակտիկա

АСМИК ОГАНЕСЯН – Просодические особенности устной речи в армянском языке. – Некоторые просодические выражения, встречающиеся в армянской устной речи, обычно рассматриваются как неприемлемые в нормированной речи (*ira - ir 'eë/ego', incha? - inch? 'что?', mezi - mez 'нам/нас'*) или как необычные / необъяснимые формы в детской речи (*“Harik senak mat tse” (Тигран 1, 2 շ.) - “Hairiki seniak tjem matel” - ‘Я не вошёл в папин кабинет’*). К сожалению, естественная, непринуждённая повседневная речь не была предметом серьёзного анализа в лингвистических исследованиях армянских учёных. Однако, в отличие от нормированной и в известной мере искусственной литературной речи, аутентичные устные выражения могут содержать ключевую информацию о просодических, ритмических структурах языка и вообще о языке. В статье рассматриваются случаи, когда односложные лексические единицы на фонетическом уровне изменяются, приобретая свойственную армянской метрической структуре форму двусложной бинарной (ямбической) стопы: (C)VC→(C)V.C□– *mez* → *me.zi* (*нам/нас*), *ir*→*i.ra* (*eë/ego*).

Ключевые слова: метрическая морфология, словообразование, ритмические модели, ямбическая стопа, усвоение языка, универсальные/специфические законы, силлабическая структура, сонорность, легальность, фонотактика

HASMIK HOVHANNISYAN – *Prosodic Features of Spoken Utterances in Armenian.* – Certain metrical patterns attested in native Armenian spoken utterances are usually labelled as unacceptable in adult standardized speech (*ira* cf. *ir* ‘his/her’, *incha?* cf. *inch?* ‘what?’, *mezi* cf. *mez* ‘us’, etc.) or strange/unaccountable in child language (“*Harik senak mət tse*” (Tigran 1.2) cf. “*Hairiki seniak tsem mətəl*”-‘I haven’t entered daddy’s study’). Unfortunately, authentic spoken utterances have not been seriously addressed in Armenian linguistic studies, though as compared to the so-called ‘literary’ (standardized and to some extent artificial) speech, naturally spoken utterances often reveal crucial information about the structure of a language or language in general. The present analysis accounts for certain monosyllabic structures surfacing consistently as bisyllabic (C)V.C□’ by adding an obligatory nucleus constituent to the final onset - *mez*→*me.zi* ‘us’, *ir*→*i.ra* ‘his/her’. This reality suggests that the occurrence of augmented units in surface representations is directly dependent on certain phonological processes, those that secure Foot Binarity in prosodic structures to satisfy UG or/and language specific well-formedness conditions for metrical representations.

Key words: *prosodic morphology, derivation, rhythmic patterns, iambic foot, language acquisition, universal/language-specific rules, syllable structure, sonority, legality, phonotactics*

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ -
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ՀԱԿՈՒՑՄԱՆ

Մույն հոդվածը նվիրված է անգլերեն օրենսդրական տեքստի շարահյուսական-կառուցվածքային հիմնական առանձնահատկությունների քննությանը ԱՄՆ-ի Սահմանադրության լեզվական նյութի հիման վրա¹: Օրենսդրական տեքստն ունի հաղորդակցական որոշակի նպատակ, որն իրականացվում է համապատասխան ոճակառուցվածքային հնարների կիրառմամբ²: Ստորև կփորձենք դիտարկել հատկապես այն լեզվական միջոցները, որոնք նպաստում են Սահմանադրության ուղղորդող-գնահատողական գործառնությունի իրացմանը: Դրանք են՝ կրավորական սեռի կառույցները, *shall* եղանակավորող բայով կազմված բաղադրյալ բայական ստորոգյալները, Noun + of + Noun տիպի բառակապակցությունները, շարահարությունը, հարակրկնությամբ կազմված զուգահեռ կառույցները:

Ինչպես հայտնի է, կրավորական ձևերի կիրառության դեպքում ավելի մեծ ուշադրություն է դարձվում բուն գործողությանը, քան գործողություն կատարողին³: Ընդհանուր առմամբ կրավորական սեռի ձևերը կիրառվում են հետևյալ դեպքերում. ա) երբ հայտնի չէ գործողություն կատարող անձը, բ) երբ գործող անձը հայտնի է կամ ոչ կարևոր, գ) երբ գործող անձի ինքնությունը հայտնի է, սակայն այն չի նշվում գործողության անհատականացումից և անձնավորումից խուսափելու նպատակով, դ) երբ գործողությունն իր վրա կրողը (տրամաբանական օբյեկտը) ավելի է կարևորվում, քան գործող անձը (տրամաբանական սուբյեկտը) և այլն:

Արդ, օրենսդրական տեքստում կրավորական կառույցների գործածության նպատակն է ընթերցողի ուշադրությունն առավելապես

¹ Տե՛ս «The Constitution of the United States with Index and the Declaration of Independence Published by the Commission on the Bicentennial of the United States Constitution», Washington D.C., 1991:

² Տե՛ս **D. Crystal, D. Davy**, Investigating English Style, Bloomington & London, Indiana University Press, 1969, էջ 193, **R. Hiltunen**, Chapters on Legal English, Aspects Past and Present of the Language of the Law, Helsinki 1990, էջ 25, **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 44, **Գ. Ջահուկյան, Ֆ. Խղաթյան**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2007, էջ 67:

³ Տե՛ս **B. Ilyish**, The Structure of Modern English, Ленинград, 1971, էջ 115, **E. Keenan**, Passive in the World's Languages, Language Typology and Syntactic Description, Clause Structure, Cambridge University Press, 1985, էջ 243-281, **J. Steer, K. Carlisi**, The Advanced Grammar Book, Massachusetts, 1998, էջ 262, **Լ. Եզեկյան**, նշվ. աշխ., էջ 275:

կենտրոնացնել օրենքով ամրագրված գործողությունների կատարման անհրաժեշտության վրա: Օրենքը նախատեսված է բոլորի համար, այն անձնավորված և անհատականացված չէ, ուստի առավել կարևորվում է օրենքով ամրագրված գործողության կատարման փաստը, քան թե գործող անձը. օրինակ՝

Section 1. All legislative Powers herein granted shall be vested in a Congress of the United States, which shall consist of a Senate and House of Representatives.

(Constitution of the United States, Article I, p. 1)

Section 1. The judicial Power of the United States shall be vested in one supreme Court, and in such inferior Courts as the Congress may from time to time ordain and establish.

(Constitution of the United States, Article II, p. 12)

Ուշագրավ է, որ նույնիսկ գործող անձը նշվելու դեպքում ևս հաճախ նախապատվություն է տրվում կրավորական սեռի կառույցներին, ինչպես՝

Section 1. The right of citizens of the United States, who are eighteen years of age or older, to vote shall not be denied or abridged by the United States or by any State on account of age.

(Constitution of the United States, Amendment XXVI, p. 34)

Բերված պարբերության մեջ խոսվում է այն մասին, որ Միացյալ Նահանգների՝ տասնութ և ավելի տարիքի հասած քաղաքացիների ընտրություններին մասնակցելու իրավունքը երկրի կամ առանձին նահանգների կողմից չպետք է մերժվի կամ սահմանափակվի տարիքի պատճառաբանումով: Տվյալ դեպքում կրավորական կառույցի վերը նշված առանձնահատկությամբ պայմանավորված՝ իմաստային տեսանկյունից ավելի կարևորվում և ընդգծվում է քաղաքացիների ընտրելու իրավունքը չմերժելու և չսահմանափակելու փաստը, քան այդ իրավունքը մերժելու կամ սահմանափակելու բուն գործողությունը կատարողը, այսինքն՝ ԱՄՆ-ը կամ նրա առանձին նահանգները: Իհարկե, ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստում կրավորական կառույցների լայն կիրառությունը մասամբ էլ պայմանավորված է անգլերենի այն առանձնահատկությամբ, որ կրավորական ձևերը կարող են կազմվել ոչ միայն անցողական, այլև անանցողական բայերից, եթե վերջիններս կարող են ստանալ որևէ ուղիղ կամ անուղղակի խնդիր: Այլ կերպ ասած՝ անգլերենում կրավորական ձև կազմելու և բայասեռային հա-

կադրություն արտահայտելու հարցում կարևորը ոչ այնքան բայի անցողականությունն է, որքան բայի օբյեկտային՝ խնդրային բնույթը. օրինակ՝ անցողական բայեր *to invite, to kill* (ակտիվ), *to be invited, to be killed* (պասիվ), անանցողական բայեր *to take care of, to speak of* (ակտիվ), *to be taken care of, to be spoken of* (պասիվ)⁴:

Ուշագրավ է, որ Սահմանադրության տեքստում կրավորական կառույցները կիրառվում են *shall* եղանակավորող բայի հետ միասին, որը տվյալ դեպքում արտահայտում է բարոյական պարտավորվածություն և համապատասխան գործողությունների կատարման անհրաժեշտություն. գործածվելով կրավորական սեռի կառույցներում և կազմելով բաղադրյալ բայական եղանակավորող ստորոգյալներ (օրինակ՝ *shall be vested, shall be elected, shall be entitled, shall be tried, shall be prescribed, shall be suspended, shall be granted, shall be executed, shall be convicted, shall be discharged, shall be submitted, shall be examined, shall be prosecuted, shall be dissolved* և այլն)՝ *shall* եղանակավորող բայը Սահմանադրության տեքստի առանձին հոդվածներում կիրառվում է հրաման, հարկադրանք, պարտավորվածություն, զգուշացում, խոստում ցույց տվող նրբիմաստային երանգավորմամբ, որն էլ բխում է օրենսդրական տեքստի նպատակադրումից: Պաշտոնական խոսքին հաղորդելով որոշակի խստություն և հանդիսավորություն՝ *shall* եղանակավորող բայով կազմված բաղադրյալ բայական եղանակավորող ստորոգյալներն ուղղորդում են ընթերցողին՝ նրա մեջ առաջացնելով իրավական նորմերը գնահատելու և դրանց հավատարիմ մնալու բարոյական պարտավորվածություն:

ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստին բնորոշ լեզվառճական երեւոյթներից մեկն էլ Noun + of + Noun տիպի բառակապակցությունների մեծ կիրառությունն է: Ինչպես հայտնի է, այլ լեզուներում սեռական հոլովի միջոցով դրսևորվող շարահյուսական հարաբերությունները անգլերենում դրսևորվում են երեք եղանակով՝ Noun + Noun, Noun Genitive + Noun, Noun + of + Noun տիպի բառակապակցությունների միջոցով. օրինակ՝ *the aircraft engine* – *ինքնաթիռի շարժիչը*, *my father's room* – *իմ հոր սենյակը* և *the door of my room* – *իմ սենյակի դուռը*: Ընդ որում՝ Noun + Noun, Noun Genitive + Noun, Noun + of + Noun տիպի բառակապակցությունները կարող են արտահայտել թե՛ որոշչային, թե՛ հատկացուցչային հարաբերություններ. օրինակ՝ Noun + Noun - *a stone wall* (որոշչային կիրառություն), *an aircraft engine* (հատկացուցչային կիրառություն), Noun Genitive + Noun - *a summer's day* (որոշչային կիրառություն), *my father's room* (հատկացուցչային կիրառություն), Noun + of + Noun - *a*

⁴ Տե՛ս **B. Ilyish**, նշվ. աշխ., էջ 115, **E. Keenan**, նշվ. աշխ., էջ 243-281, **J. Steer, K. Carlisi**, նշվ. աշխ., էջ 262, **E. Gordon, I. Krylova**, A Grammar of Present Day English, Practical Course, Moscow, 2000, էջ 86:

man of violence (որոշչային կիրառություն), *a page of a book* (հատկացուցչային կիրառություն)⁵: Այդ պարագայում հարց է առաջանում, թե ինչու նշված երեք տիպի բառակապակցություններից Սահմանադրության տեքստում գերազանցապես կիրառվում է Noun + of + Noun տիպը: Կարծում ենք՝ Noun + of + Noun տիպի բառակապակցությունները Noun + Noun տիպի համեմատությամբ ունեն այն առավելությունը, որ ավելի հստակ են արտահայտում համապատասխան շարահյուսական հարաբերությունը: Այսպես, *the President appointment, the appointment of the President* բառակապակցություններից առաջինի դեպքում առկա է հնարավոր երկիմաստություն՝ նախագահի⁶ն են նշանակում, թե՛ նախագահի կողմից է նշանակվում (ինչ-որ մեկը), մինչդեռ երկրորդ բառակապակցության իմաստը (նախագահին նշանակելը) առավել հստակ է ու միանշանակ: Եվ քանի որ պաշտոնական ոճին բնորոշ է մտքի հստակությունն ու երկիմաստությունից հնարավորինս խուսափելու ձգտումը, ուստի Սահմանադրության տեքստում Noun + of + Noun տիպի փոխարեն նախապատվություն է տրվում Noun + Noun տիպին: Նմանապես, իմաստային առավել հստակության պահանջով է բացատրվում Noun + of + Noun տիպին նախապատվություն տալը նաև Noun Genetive + Noun տիպի բառակապակցությունների համեմատ հատկապես օբյեկտային (խնդրային) հարաբերություն արտահայտող բառակապակցությունների դեպքում: Օրինակ՝ *the removal of President* տիպի բառակապակցություններում *of*-ով կառույցների կիրառությունն անշուշտ պայմանավորված է երկիմաստությունից խուսափելու միտումով, եթե նկատի ունենանք, որ սեռական հոլովաձևով կազմված համապատասխան բառակապակցություններում հստակ չեն տարբերակվում օբյեկտային և սուբյեկտային հարաբերությունները⁶: Ըստ այդմ՝ *the President's removal* բառակապակցության իմաստը հավասարապես կարող է ընկալվել և՛ որպես նախագահի հեռացվելը աշխատանքից, և՛ որպես նախագահի կողմից ինչ-որ մեկի հեռացվելը աշխատանքից: Մինչդեռ *the removal of President* բառակապակցության դեպքում օբյեկտային հարաբերությունն առավել հստակ է արտահայտվում: Այդ կապակցությամբ որպես լրացուցիչ փաստարկ կուզենայինք նշել հետևյալ հանգամանքը. ժամանակակից անգլերենի այնպիսի բառակապակցություններում, որոնք միաժամանակ արտահայտում են թե՛ սուբյեկտային, թե՛ օբյեկտային հարաբերություններ, սուբյեկտային հարաբերությունն արտահայտվում է սեռական հոլովաձևի, իսկ օբյեկտային հարաբերությունը՝ *of* նախդրի միջոցով. օրինակ՝ *this historian's new*

⁵ См. у Каушанская В. и др. Грамматика английского языка. Л., 1973, էջ 253-254, Дубенец Э. Лингвистические изменения в современном английском языке. М., 2003, էջ 13-16, В. Pivish, նշվ., աշխ., էջ 172-173:

⁶ См. у Кобринна Н., Болдырев Н., Худяков А. Теоретическая грамматика современного английского языка. М., 2007, էջ 35-41:

appreciation of the Great Britain King, որտեղ պատմաբանը գնահատողն է, այսինքն՝ տրամաբանական սուբյեկտը, իսկ թագավորը գնահատվողը՝ տրամաբանական օբյեկտը: Ընդ որում՝ այս դեպքում *of* նախդրի միջոցով օբյեկտային հարաբերությունն այնքան հստակ և ընդգծված է արտահայտվում, որ տվյալ բառակապակցության մեջ տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի տեղերը փոխելու պարագայում փոխվում է ողջ բառակապակցության իմաստը՝ *the Great Britain King's new appreciation of this historian*: Այս դեպքում արդեն տրամաբանական սուբյեկտը՝ գնահատողը, Մեծ Բրիտանիայի թագավորն է, իսկ տրամաբանական օբյեկտը՝ պատմաբանը: Եվ վերջապես կուզենայինք անդրադառնալ *of*-ով կառույցների ևս մեկ խմբի, որոնցում թեև անգլերենի լեզվական նորմերին համապատասխան կարող էր կիրառվել սեռական հոլովաձև, բայց դարձյալ նախապատվությունը տրվել է *of*-ով կառույցներին: Խոսքը վերաբերում է *the life of the person, the consent of the owner, the terms of the president* տիպի հասկացուցային բառակապակցություններին, որոնք ունեն շնչավոր առարկա ցույց տվող և եզակի թվով դրված գոյական լրացումներ: Նմանատիպ դեպքերը բացատրելու համար պետք է հաշվի առնել սեռական հոլովաձևով և *of* նախդրով կազմված բառակապակցությունների միջև առկա իմաստային տարբերությունը, օրինակ՝ *the doctor's arrival* և *the arrival of the doctor*: Այդ երկու բառակապակցությունների միջև նկատելի է շատ նուրբ, բայց կարևոր իմաստային տարբերություն: Մասնավորապես՝ *the doctor's arrival*-ի դեպքում տրամաբանական շեշտն ընկնում է լրացման վրա, և իմաստային տեսանկյունից ավելի կարևորվում է *doctor's* բառը, և ընդգծվում է ում կամ ինչի հարցը, այսինքն՝ *բժշկի* և ոչ թե *տնօրենի* կամ որևէ այլ անձի ժամանումը (կամ առնվազն լրացումն ու լրացյալը կարևորվում են հավասարապես, և լրացյալը հատուկ չի ընդգծվում): Մինչդեռ *the arrival of the doctor* տիպի դեպքում տրամաբանական շեշտի և իմաստային կարևորության տեսանկյունից առաջին պլան է մղվում լրացյալը, հետևաբար ընդգծվում է ոչ թե ում կամ ինչին պատկանելը, այլ հենց ինչը՝ *բժշկի ժամանումը*, այլ ոչ թե *փախուստը* կամ մեկ այլ բան: Թերևս հենց այդ հանգամանքով կարելի է բացատրել *the life of the person, the consent of the owner* տիպի բառակապակցություններում *of* նախդրով կառույցներին նախապատվություն տալը, որի շնորհիվ առավել ընդգծվում և կարևորվում է անձի *կյանքը*, սեփականատիրոջ *համաձայնության փաստը* և այլն, մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, օրենքը ընդհանրական բնույթ ունի, այն անձնավորված և անհատականացված չէ, ուստի առավել կարևորվում է *ինչը*, քան թե *ում* կամ *ինչին* պատկանելը: Այդ ամենի հետևանքով անգլերենին բնորոշ ատրիբուտային բառակապակցության երեք տիպերից Սահմանադրության տեքստում գերազանցապես հանդիպում է Noun + of +Noun կառույցը:

Սահմանադրության տեքստում, ըստ անհրաժեշտության, կիրառ-

վում են նաև շարահարության երկու տեսակները՝ կախյալ և անկախ, որոնք ոճական և իմաստային տեսանկյունից կարևոր դեր են խաղում տվյալ խոսքաշարում: Դիտարկենք ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստից քաղված հետևյալ օրինակը.

He has endeavoured to prevent the Population of these States; for that Purpose obstructing the Laws for Naturalization of Foreigners; refusing to pass others to encourage their Migrations hither, and raising the Conditions of new Appropriations of Lands.

(The Declaration of Independence, p. 36)

Ինչպես տեսնում ենք, Participle I-ով (*obstructing; refusing to pass*) կազմված դերբայական դարձվածները բացատրում են դիմավոր բայով արտահայտված հիմնական նախադասության ստորոցայի գործողության իրականացման եղանակը և դիմավոր բայով արտահայտված հիմնական նախադասության հետ շարահարությամբ կապակցված շարահյուսական մեկ ամբողջություն են ներկայացնում, որի առանձին մասերը կախված են միմյանցից. մասնավորապես՝ հիմնական նախադասությամբ արտահայտված ընդհանուր իմաստը լրացվում և պարզաբանվում է դերբայական դարձվածներով, որոնք միմյանցից անջատված են կետ-ստորակետով: Ընդ որում՝ դա ունի հատուկ նպատակադրում, այն է՝ տարանջատել բազմաբաղադրիչ նախադասության հարակից մասերը և առավել հստակեցնել թվարկվող մտքերը: Մյուս կողմից՝ կետ-ստորակետի գործածությունն ակնհայտորեն ընդգծում է շարահյուսական բարդ ամբողջության բաղադրիչ մասերի իմաստային սերտ փոխկապակցվածությունը: Այսպիսով, վերոհիշյալ օրինակում առկա է կախյալ շարահարություն, որքանով շարահարությամբ կապակցված հարակից անդամներից մեկի (տվյալ դեպքում՝ դիմավոր բայով կազմված նախադասության) արտահայտած իմաստը լրացվում է մյուսների միջոցով: Մինչդեռ անկախ շարահարության դեպքում, ինչպես հայտնի է, բազմաբարդ նախադասության հարակից մասերը թեև դարձյալ իմաստով փոխկապակցված են միմյանց, սակայն համագոր են և իմաստաբանորեն չեն ստորադասվում մեկը մյուսին⁷: Օրենսդրական տեքստում անկախ շարահարությունը նույնպես հաճախ է հանդիպում. օրինակ՝

Section 3. He shall from time to time give to the Congress Information of the State of the Union, and recommend to their Consideration such Measures as he shall judge necessary and expedient; he may, on extraordinary Occasions, convene both Houses, or either of them, and in Case of Disagreement between

⁷ Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. II, Եր., 1964, էջ 362-365:

them, with Respect to the Time of Adjournment, he may adjourn them to such Time as he shall think proper; he shall receive Ambassadors and other public Ministers; he shall take Care that the Laws be faithfully executed, and shall Commission all the Officers of the United States.

(Constitution of the United States, Article II, p. 12)

Բաժին 3. Նա (այսինքն՝ նախագահը) ժամանակ առ ժամանակ տեղեկություններ է ներկայացնում Կոնգրեսին Միության վիճակի մասին և առաջարկում նրան այնպիսի միջոցառումներ, որոնք կհամարի անհրաժեշտ և օգտակար. **նա** արտակարգ դեպքերում **գումարում է** երկու պալատների կամ նրանցից մեկի նիստ, իսկ նստաշրջանների հետաձգման ժամանակի առնչությամբ պալատների միջև ծագած տարաձայնությունների դեպքում ինքն անձամբ հետաձգում է այն այնքան ժամանակով, որքան կհամարի անհրաժեշտ. **նա ընդունում է** դեսպանների և ուրիշ լիազոր ներկայացուցիչների, **ապահովում է** օրենքների ճշգրիտ կատարումը, **որոշում է** Միացյալ Նահանգների բոլոր պաշտոնատար անձանց լիազորությունները:

Մեջբերված հատվածում բազմաբարդ նախադասության բաղադրիչ մասերը, որոնք միմյանցից անջատվում են կետ-ստորակետով, իմաստաբանորեն համազոր են միմյանց, հետևաբար տվյալ դեպքում առկա է անկախ շարահարություն:

Մահմանադրության տեքստում ոճական տեսանկյունից մեծ դեր է խաղում նաև հարակրկնությամբ կազմված զուգահեռ կառույցների գործածությունը: Շարադրանքի առավել պարզության և հստակության ձգտումը հանգեցնում է օրենսդրական տեքստի՝ մեկից ավելի պարբերություններից բաղկացած պարբերությունով հանդես գալուն: Չափակից պարբերությունների բաղադրիչ մասերը՝ պարբերությունները, բնութագրվում են հարակրկնության կիրառությամբ, շարահյուսական միավորների զուգահեռ և համապատասխան դասավորվածությամբ: Ընդ որում՝ հարակրկնությունը ոչ միայն հանգեցնում է շարահյուսական միավորների համաչափ և ներդաշնակ շարադասությանը, այլև ընդգծում է արտահայտվող միտքը՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով հաղորդվող նյութի վրա: Ասվածը կարելի է լուսաբանել հետևյալ օրինակով, որտեղ պարբերության երեք բաղադրիչ մասերի՝ պարբերությունների սկզբում հարակրկնված է միևնույն **Each House** բառակապակցությունը.

Section 5. Each House shall be the Judge of the Elections, Returns and Qualifications of its own Members, and a Majority of each shall constitute a Quorum to do Business...

Each House may determine the Rules of its Proceedings, punish its Members for disorderly Behaviour, and, with the Concurrence of two thirds, expel a Member.

Each House shall keep a Journal of its Proceedings, and from time to time publish the same, excepting such Parts as may in their Judgment require Secrecy...

(Constitution of the United States, Article. I, p. 4)

Բաժին 5. Յուրաքանչյուր պալատ լուծում է ընտրությունների օրինակափոխության, իր անդամների լիազորությունների հարցերը: Պալատներից յուրաքանչյուրի մեծամասնությունը կազմում է քվորում, որն անհրաժեշտ է աշխատանքները սկսելու համար:

Յուրաքանչյուր պալատ սահմանում է իր նիստերի աշխատակարգը և կարող է կարգի խախտման դեպքում պատժել իր անդամին ու ձայների երկու երրորդով հեռացնել նրան իր կազմից:

Յուրաքանչյուր պալատ կազմում է իր նիստերի արձանագրությունը և պարբերաբար հրապարակում է այն, բացառությամբ այն բաժինների, որոնք իրենց իսկ որոշմամբ գաղտնի են համարվում:

Այսպիսով, ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստում կրավորական սեռի կառույցների, *shall* եղանակավորող բայով կազմված բաղադրյալ բայական ստորոգյալների, Noun + of + Noun տիպի բառակապակցությունների, շարահարության և հարակրկնությամբ կազմված զուգահեռ կառույցների լայն կիրառությունը պայմանավորված է ասելիքն առավել ընդգծելու, մտքի հստակությունն ու ճշգրտությունն ապահովելու ընդհանուր ձգտումով:

Բանալի բառեր – *պարբերությ, պարբերություն, կրավորական կառույցներ, օրենսդրական տեքստ, հարակրկնություն, եղանակավորող բայ*

АННА АКОБЯН – Структурно-синтаксические особенности законодательного текста. – В статье выявляется, какую роль играет анафора в образовании параллельных конструкций и параграфов и чем обусловлено широкое использование страдательного залога в тексте конституции США. Параллельные конструкции, образованные с помощью анафоры, подчёркивают выражаемую мысль и причинно-следственную связь передаваемого материала, обеспечивая точность, объективность и однозначность текста. В пассивных конструкциях факт действия рассматривается как более важный, чем действующее лицо. Даже при указании на действующее лицо часто предпочтение оказывается пассивным конструкциям. Широкое употребление атрибутивных словосочетаний Noun + of + Noun объясняется тенденцией подчеркнуть выражаемую мысль, избежать двусмысленности.

Ключевые слова: *анафора, параллельные конструкции, атрибутивные словосочетания Noun + of + Noun, пассивные конструкции, однозначность выражений*

ANNA HAKOBYAN – *The Structural-Syntactic Characteristics of the Legislative Text.* – In the given article an attempt is made to reveal the important role of anaphora in the formation of parallel structures and paragraphs and account for the wide use of passive constructions as well as of “Noun + of + Noun” Phrases in the text of the Constitution of the United States of America. The parallel structures which are formed with the help of anaphora, emphasize the expressed idea and the causative-consecutive connection between the sentences, thus providing the clarity, objectivity and single-meaningness of the expressions. In the case of passive constructions, the action is viewed as more important, than the agent. It is interesting that preference is often given to the passive constructions even when the agent is indicated. The wide use of “Noun + of + Noun” Phrases is largely conditioned by the tendency to emphasize the meaning of the utterance and avoid ambiguity.

Key Words: *“Noun + of + Noun” Phrases, anaphora, parallel structures and paragraphs, passive constructions, agent, ambiguity, single meaningness of the expressions*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ
ВАРДАН ПЕТРОСЯН – кандидат филологических наук, доцент, заведующий кафедрой общего языкознания ЕГУ
VARDAN PETROSYAN – PhD, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU
2. **ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ
ЮРИЙ ГАБРИЕЛЯН – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой немецкой филологии ЕГУ
YURI GABRIELYAN – Sc. D. in Philology, Professor, Head of the Chair of Germanic Philology, YSU
3. **ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ
ГАЯНЭ ГЕВОРГЯН – кандидат филологических наук, доцент, заведующая кафедрой арменоведения лингвистического университета им. В. Брюсова
GAYANE GEVORKYAN – PhD, Associate Professor, Head of the Chair of Armenology, Linguistic University after V. Bryusov
4. **ՍԵՂԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ
СЕДА ГАСПАРЯН – доктор филологических наук, профессор, член корреспондент НАН РА, заведующая кафедрой английской филологии ЕГУ
SEDA GASPARYAN – Sc. D. in Philology, Professor, Corresponding Member of NAS RA, Head of the Chair of English Philology, YSU
5. **ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼՉԱՏՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
ДАВИД ГЮЛЬЗАТЯН – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка Ванadzорского государственного университета
DAVID GYULZATYAN – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, Vanadzor State University
6. **ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
АРТАШЕС САРКИСЯН – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
ARTASHES SARKISYAN – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, YSU
7. **ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԻԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր
ЛАЛИК ХАЧАТРИАН – доктор филологических наук, профессор кафедры армянского языка и методики преподавания АГПУ им. Х. Абовяна
LALIK KHACHATRIAN – Sc. D. in Philology, Professor of the Chair of Armenian Language and Teaching Methods, ASPU after Kh. Abovyan

- 8. ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ
АСМИК ОГАНЕСЯН – кандидат филологических наук, доцент кафедры английской филологии ЕГУ
HASMIK HOVHANNISYAN – PhD, Associate Professor of the Chair of English Philology, YSU
- 9. ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
АННА АКОБЯН – кандидат филологических наук, ассистент кафедры английской филологии, ЕГУ
ANNA HAKOBYAN – PhD, Assistant Professor of the Chair of English Philology, YSU

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՆԴԵՍԻ 2015 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
LITERARY CRITICISM

- Ջրբաշյան Աշխեն* – Գրական սեռերի և ժանրերի տարբերակման խնդրի շուրջ..... 1.3
- Միսյան Տիգրան* – Մանիֆեստը իբրև գրական դաշտը մոդելավորող տեքստ և դրա ըմբռնումը..... 1.18

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

- Աբրահամյան Աշոտ* – Ներակայություն և հավելյալայնություն. լեզվական արտահայտման երկու բևեռները..... 2.3
- Ավետյան Մարգիտ* – Անգլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրադրական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն 1.38
- Ավետյան Մարգիտ* – Հին հայերենի *լո* (*լո*) երկբարբառի ծագման հարցի շուրջ..... 2.14
- Գաբրիելյան Յուրի* – Գ. Ջահուկյանը և արդի հնդեվրոպաբանական տեսությունները..... 3.16
- Գասպարյան Սեդա* – Հերմենևտիկան որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն..... 3.29
- Գյուլզատյան Դավիթ* – Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանությունը..... 3.37
- Գևորգյան Արմինե* – Հին հայերենում երկակի թվի դրսևորումներն ըստ Անտուան Մեյերի..... 2.25
- Գևորգյան Գայանե* – Գևորգ Ջահուկյանի դիտարկումները հայերենի եղանակային ձևերի առաջացման վերաբերյալ..... 3.23
- Խաչատրյան Լայլիկ* – Պատկերավոր կայուն կապակցությունների տարբերակները գրաբարում..... 3.52

<i>Կարապետյան Միրարփի</i> – Հայերենի և անգլերենի անվանական վերլուծական կրկնավոր բաղադրությունների զուգադրական քննություն	1.61
<i>Կարապետյան Միրարփի</i> – Անգլերենում և հայերենում բարդ բառի ու բառակապակցության տարբերակման հարցի շուրջ	2.58
<i>Հակոբյան Աննա</i> – Օրենսդրական տեքստի շարահյուսական-կառուցվածքային առանձնահատկությունները	3.71
<i>Հովհաննիսյան Հասմիկ</i> – Բանավոր խոսքի չափական առանձնահատկությունները հայերենում	3.60
<i>Մելքոնյան Լուիզա</i> – Բառաբարդման կաղապարները նորաբանություններում	1.52
<i>Մկրտչյան Գարիկ</i> – Հայերենի Ը հոդի ծագման և գործառության հարցի շուրջ	2.35
<i>Պետրոսյան Վարդան</i> – Գ. Ջահուկյանի «Համընդհանուր լեզվաբանական տեսության» հայեցակարգային հիմքերը.....	3.3
<i>Սարգսյան Արտաշես</i> – Ածականի՝ <i>-գույն</i> մասնիկով կազմվող գերադրականի իմաստային առանձնահատկությունները.....	3.45
<i>Սարգսյան Լիանա</i> – Գովազդային խոսույթի հնչյունական և գրության յուրահատկությունները արդի հայերենում.....	2.44
<i>Տոնոյան Արտյոմ</i> – Կովկասյան պարսկերենի մի քանի բառի ստուգաբանական քննություն	1.73

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

<i>Քանայան Արևիկ</i> – Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ)	2.66
---	-------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

<i>Վարդան Պետրոսյան</i> – Գ. Ջահուկյանի «Համընդհանուր լեզվաբանական տեսության» հայեցակարգային հիմքերը.....	3
<i>Vardan Petrosyan</i> – Концептуальные основы «Универсальной теории языка» Г. Джаукяна	
<i>Vardan Petrosyan</i> – The Conceptual Fundamentals of G. Jahukyan’s “Universal Theory of Language”	
<i>Յուրի Գաբրիելյան</i> – Գ. Ջահուկյանը և արդի հնդեվրոպաբանական տեսությունները.....	16
<i>Юрий Габриелян</i> – Г. Джаукян и современные индоевропейские теории	
<i>Yuri Gabrielyan</i> – G. Jahukyan and the Modern Indo-European Theories	
<i>Գայանե Գևորգյան</i> – Գևորգ Ջահուկյանի դիտարկումները հայերենի եղանակային ձևերի առաջացման վերաբերյալ.....	23
<i>Гаяне Геворгян</i> – Наблюдения Геворга Джаукяна над происхождением модальных форм в армянском языке	
<i>Gayane Gevorgyan</i> - Gevorg Jahukyan’s Reviews on the Origin of Armenian Modal Forms	
<i>Սեդա Գասպարյան</i> – Հերմենևտիկան որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն.....	29
<i>Седя Гаспарян</i> – Герменевтика как методология интерпретации словесно-художественного творчества	
<i>Seda Gasparyan</i> – Hermeneutics as Methodology of Interpreting Works of Verbal Creativity	
<i>Դավիթ Գյուլզատյան</i> – Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանությունը.....	37
<i>Давид Гюльзатян</i> – Типология грамматических категорий переходности и глагольного залога	
<i>David Gyulzatyan</i> – Typology of the Grammatical Categories of Transitivity and the Voice of the Verb	
<i>Արտաշես Սարգսյան</i> – Ածականի՝ <i>-գույն</i> մասնիկով կազմվող գերադրականի իմաստային առանձնահատկությունները.....	45
<i>Арташес Саркисян</i> – Семантические особенности превосходной степени прилагательных с частицей <i>-գույն</i>	
<i>Artashes Sarkisyan</i> – Semantic Peculiarities of the Superlative Degree of Adjectives Formed by Particle <i>-գույն</i>	

<i>Հայիկ Խաչատրյան</i> – Պատկերավոր կայուն կապակցությունների տարբերակները գրաբարում	52
<i>Лалик Хачатрян</i> – Варианты образных устойчивых словосочетаний в грабаре	
<i>Lalik Khachatryan</i> - The Variants of Image-Bearing Word-Combinations in Old Armenian	
<i>Հասմիկ Հովհաննիսյան</i> – Բանավոր խոսքի չափական առանձնահատկությունները հայերենում	60
<i>Асмик Оганесян</i> – Просодические особенности устной речи в армянском языке	
<i>Hasmik Hovhannisyan</i> – Prosodic Features of Spoken Utterances in Armenian	
<i>Աննա Հակոբյան</i> – Օրենսդրական տեքստի շարահյուսական-կառուցվածքային առանձնահատկությունները	71
<i>Анна Акобян</i> – Структурно-синтаксические особенности законодательного текста	
<i>Anna Hakobyan</i> – The Structural-Syntactic Characteristics of the Legislative Text	
Տեղեկություններ հեղինակների մասին	80
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսի 2015 թ. բովանդակությունը	82
Содержание журнала "Вестник Ереванского университета: Филология" за 2015 г.	
The annual contents of the Journal "Bulletin of Yerevan University: Philology" in 2015	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 10. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: